



EUA

EUROPEAN
UNIVERSITY
OF ARMENIA

ԻՍՅԱՍՏԱՆԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**



**“EUROPEAN UNIVERSITY”
COLLECTION OF SCIENTIFIC
ARTICLES**

13 (02)

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ե 744

Հաստատված է ՀԵՀ Գիտական խորհրդի
2022թ. դեկտեմբերի 21-ի թիվ 41 նիստում

Գլխավոր խմբագիր՝

Հեղինե Բիշարյան, մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝

Գոռ Մանասյան, աշխարհագրական գիտ. թեկնածու, դոցենտ

Խմբագրական խորհուրդ

Գրիգորի Վահանյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Թաթուլ Մանասերյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մուսա Յուսուֆ, փիլիսոփայության դոկտոր (տնտեսագիտություն)
Էրիկ Լերու, փիլիսոփայության դոկտոր (տնտեսագիտություն)
Նարինե Կիրակոսյան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Վազգեն Մելիքյան, տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Վարդան Հայրապետյան, տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Տատյանա Կալզանովա, փիլիսոփայության դոկտոր (Տեղեկատվական տեխնոլոգիաներ)
Սուսաննա Հարությունյան, ֆիզ.-մաթ. գիտ.թեկնածու, դոցենտ
Աշոտ Խաչատրյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Նազելի Սուքիասյան, իրավագիտության դոկտոր, դոցենտ
Ստեփոս Անդրեադակիս, փիլիսոփայության դոկտոր (իրավագիտություն)
Իզաբելլա Իսկանդարյան, իրավագիտության թեկնածու
Հրանուշ Թովմասյան, բանասիրական գիտ. դոկտոր
Լուսինե Ֆլյույան, բանասիրական գիտ. դոկտոր
Անդրեա Աբել, փիլիսոփայության դոկտոր (բանասիրություն)
Սոնա Հակոբյան, բանասիրական գիտ. թեկնածու

Ե 744 **Եվրոպական համալսարան**: Գիտ. Հոդվածների ժող./ՀԵՀ

Գլխ. խմբ.՝ **Հ.Բիշարյան** - Եր.: «ՀԵՀ» հրատ., 2022: Գիրք 13(02): - 236 էջ:

Ժողովածուն ընդգրկում է տնտեսագիտության և կառավարման, իրավագիտության, բանասիրության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:

ЕВРОПЕЙСКИЙ УНИВЕРСИТЕТ: СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
EUROPEAN UNIVERSITY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ISBN 978-99941-2-609-5

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

© Հայաստանի եվրոպական համալսարանի հրատարակչություն, 2022

UDC 001
LBC 72
E 744

Approved by EUA Scientific Council
December 21, 2022, Session N 41

Editor-in-chief

Heghine Bisharyan, Doctor of Philosophy (in Pedagogy), Associate Professor

Deputy editor-in-chief

Gor Manasyan, Doctor of Philosophy (in Geographical Sciences) Associate Professor

Editorial Board

Grigori Vahanyan, Doctor of Economical Sciences, Professor of Economics

Tatul Manaseryan, Doctor of Economical Sciences, Professor of Economics

Moosa Yousuf, Doctor of Philosophy (in Economy)

Erick Leroux, Doctor of Philosophy (in Economy)

Narine Kirakosyan, Doctor of Philosophy (in Economy), Associate Professor

Vazgen Melikyan, Doctor of Technical Sciences, Prof., Corresponding member of NAS, Armenia

Vardan Hayrapetyan, Doctor of Technical Sciences, Prof.,

Tatiana Kalganova, Doctor of Philosophy (in Technical Sciences)

Susanna Harutyunyan, Doctor of Philosophy (in Physical and Mathematical Sciences) Associate Professor

Ashot Khachatryan, Doctor of Law, Professor of Law

Nazeli Suqiasyan, Doctor of Law, Associate Professor

Stelios Andreadakis, Doctor of Philosophy (in Law)

Izabella Iskandaryan, Doctor of Philosophy (in Law)

Hranush Tovmasyan, Doctor of Philological Sciences

Lusine Fljyan, Doctor of Philological Sciences, Professor of Linguistics

Andrea Abel, Doctor of Philosophy (in Philology)

Sona Hakobyan, Doctor of Philosophy (in Philology)

E 744 **European University: Collection of Scientific Articles/ EUA**

Editor-in-chief, **H. Bisharyan** - Yerevan./ «EUA» Publication 2022, Book 13(02): - 236 pages

European University Collection of Scientific Articles constitutes latest advancements and analyses of critical issues in the fields of Economics and Management, Law, Philology and Information Technologies. The research articles and results presented herein may be profoundly beneficial to nearly all specialists, Ph.D. students and researchers engaged in exploring current trends of science.

EUROPEAN UNIVERSITY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

UDC 001
LBC 72

ISBN 978-99941-2-609-5

© European University (Armenia) Publishing 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հ.Ռ. Երիցյան

Վիզուալ մերչենդայզինգի առանձնահատկությունները և կանոնները 6

Տ.Ս. Մովսիսյան

ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները կրթական բարեփոխումների համատեքստում 16

Մ.Ա. Պետրոսյան

Անհատի վարքագիծը՝ որպես կազմակերպությունում բախումների ուսումնասիրության օբյեկտ 24

J. B. Arash

Proposes and Evaluates Similarity Method in Tehran Stock Exchange 32

Մ.Ա. Ավագյան

Արժույթային գոտիների օպտիմալության չափանիշների գնահատման դասական մոտեցումները 42

Արժույթային միությունների ձևավորման հայեցակարգային հիմնադրույթները 52

A. Hanisyan, L. Tumyan

The Tax Policy Within the Eurasian Economic Union 63

Ա.Մ. Քթոյան, Ա.Յ. Շիրինյան, Ա.Ս. Մատինյան

Արդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների նորարարական ակտիվության գործոնների որոշման մեթոդական մոտեցում 72

Թվային տնտեսության զարգացման միտումները և թվայնացման տնտեսական ազդեցության գնահատումը 83

Ա.Հ. Պարսյան, Ս.Հ. Պարսյան, Ա.Ք. Գրիգորյան, Ռ.Ա. Ահարոնյան

Ալկոհոլային խմիչքների արտադրության և արտահանման տնտեսական ու սոցիալական նշանակությունը ՀՀ-ում 98

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գ.Հ. Սաֆարյան, Ն.Է. Շահնազարյան

Սահմանադրական դրույթների նորմատիվության հիմնախնդիրը 109

Մ.Հ. Մուրադյան

Վարչական դատարանի հանձնարարությունը: Տեսական և գործնական հարցեր 118

Վ.Ա. Թորոսյան

Կրոնական խորհրդանիշերի գործածությունը կրթական հաստատություններում. իրավաքաղաքական ասպեկտը 128

Մ.Մ. Մարկոսյան

Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքում 134

Ա.Ֆ. Մովսիսյան

Արտասահմանյան երկրների հարկային հսկողության համակարգերը և ՀՀ-ում դրանց կիրառման փորձի իրավական առանձնահատկությունները 145

Ա.Ս. Նահապետյան

Գիտական, բժշկական կամ այլ փորձերի թույլատրելիության սահմանները. մարդու վերարտադրողական կլոնավորման արգելքը.....153

Ն.Է. Շահնազարյան

Սահմանադրական մոդելների զարգացման միտումները159

Պ.Գ. Փոլադյան

Հայ առաքելական սուրբ եկեղեցու պետական գործառույթները զարգացած միջնադարում (12-14-րդ դդ.). Մխիթար Գոշ, Սմբատ Գունդստաբլ167

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հ.Ժ. Թովմասյան

Լեզվական ունակություն. կառուցվածքը և բովանդակությունը171

L. Avetisyan, M. Avetisyan

Language Corpora and Data-Driven Learning in Second Language Acquisition178

Գ.Ա. Գևորգյան

Ջեյմս Ջոյսի լեզվաոճական միավորումների խորհրդանշանային իմաստավորումները.....185

Մ.Ա. Արզումանյան

Թուրքերենի շարահյուսության բնորոշ օրինաչափությունները.....196

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

A. Grigoryan

Model-Agnostic Explanations: A Case Study for Drug Seriousness Predictions..... 202

A. Mkhitaryan, A. Gevorgyan, L. Hakobyan, E. Papyan

Output Frequency Stabilizing of the Cmos Ring Oscillator.....211

Գ.Ի. Մարգարով, Ն.Լ. Նալթալյան, Ա.Թ. Սեյրանյան, Մ.Ա. Միրզոյան

XML-ը JSON-ի ձևափոխող ծրագրային մոդելի աշխատանքի սկզբունքը218

A. Baskovchyan

Developmetnt of Fuzzy-Pid Control System for Multyrotor Uav Using Face Recognition Algorithm225

**ՎԻՉՈՒԱԼ ՄԵՐՉԵՆԴԱՅՉԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԿԱՆՈՆՆԵՐԸ**

Հովհաննես Ռուբենի Երիցյան

տնտ.թ., դոցենտ

ՀԵՀ, Կառավարման ամբիոն

yer.hovhannes@yahoo.com

Ամփոփագիր

Վիզուալ մերչենդայզինգը արտադրանքը ցուցադրելու և վաճառասրահը կազմակերպելու և կառավարելու պրակտիկան է, որը խթանում է վաճառքը, գրավում է ուշադրությունը, բարձրացնում է ապրանքանիշի ճանաչելիությունը, ինչպես նաև ապահովում է լավագույն պայմանները հաճախորդների համար հաճելի գնումների փորձ ունենալու համար: Վիզուալ գրավչության միջոցով ուշադրություն գրավելու արվեստն ունի իր սկզբունքները, բայց ամեն ինչ հանգում է մեկ բանի՝ ստեղծելով անկրկնելի փորձ, որը խթանում է գնումները: Առհասարակ, այս ամենը տանում է դեպի երկրորդ նպատակը՝ ստեղծել էսթետիկ և դրական միջավայր վաճառասրահում, որը հաճախորդներին կստիպի զգալ հարմարավետ: Փաստացի, վիզուալ մերչենդայզինգը ոչ միայն օգնում է հաճախորդներ ներգրավել, այլև օգնում է մեծացնել վաճառքը և հաճախորդներին կրկին վերադառնալու լավ առիթ ապահովել՝ միաժամանակ տալով բիզնեսին մրցակցային առավելություն: Վիզուալ մերչենդայզինգի առանձնահատկությունների ուսումնասիրությունն ու դրանց կիրառման փորձի դիտարկումն ու կատարելագործումն այսօր մարքեթինգի կարևոր բաղադրիչներից են, որոնց փորձարկման արդյունքում ձևավորվել են կանոններ, որոնց պետք է հետևել մերչենդայզինգի տեսանկյունից: Հոդվածում մասնավոր օրինակների և դեպքերի ուսումնասիրության միջոցով ուրվագծվում են վիզուալ մերչենդայզինգի ամենակարևոր մեթոդները և թե ինչպես կարող են դրանք կիրառվել բիզնեսում:

Հիմնաբառեր. Վիզուալ մերչենդայզինգ, մերչենդայզինգ, ապրանքների դասավորություն, գույներ, վաճառքի խթանում, վիզուալ մերչենդայզինգի կանոնները:

Ներածություն

Վիզուալ մերչենդայզինգը մարքեթինգային պրակտիկա է, որն օգտագործում է վաճառասրահի հատակագծերը, գույնը, լուսավորությունը, էկրանները, տեխնոլոգիաները և այլ տարրեր՝ հաճախորդների ուշադրությունը գրավելու համար: Դրա վերջնական նպատակն է՝ օգտագործել տարածքն ավելի շատ վաճառքներ ապահովելու համար՝ վաճառասրահն առանձնացնելու և գնորդներին գրավելու միջոցով:

Վիզուալ մերչենդայզինգի առավելությունները բազմաթիվ են՝ սկսած մանրաձախ բիզնեսը նկատող և հետագայում մուտք գործած հաճախորդների թվի ավելացումից:

Թերևս, խելացի տեսողական առևտրի ամենամեծ առավելությունն այն է, որ այն կարող է օգնել առավելագույն արժեք ստանալ այն ապրանքներից, որոնք դժվար կլինի այլ կերպ շուկա հանել:

Վիզուալ մերչենդայզինգի առանձնահատկությունների և կանոնների ուսումնասիր-


րությունը, որն ուսումնասիրության առարկան է, այսօր խիստ մրցակցային պայմաններում դառնում է անխուսափելի գործոն վաճառք ապահովելու համար:

Վիզուալ մերչենդայզինգի տեսանկյունից կարևոր է վաճառասրահի ներքին: Նպատակը տարածքի արդյունավետ օգտագործումն

է, հաճախորդների լիարժեք շարժի ապահովումը, գայթակղիչ ինտերիերը: Դրանք լինում են հիմնականում երեք տեսակի [Aptos MLM Planning Platform]

1. Այս տիպի դասավորությունը (*Տե՛ս, Գծապատկեր 1*) հնարավորություն է տալիս տարածքից մաքսիմալ օգտվել, շարքերի եզրերը այս դեպքում շատ լավ են աշխատում:

Գծապատկեր 1.




Դարակաշարերի դասավորության ուղղահայաց տարբերակ

2. Հիմնականում լինում է մեծ հիպերմարկետներում, որի նպատակը մեծ տեսականի ներկայացնելն է մի ուղղության վրա և մեծ

տարածությունը, քանի որ այստեղ պետք է ճիշտ ղեկավարել մարդկանց հոսքը (*Տե՛ս, Գծապատկեր 2*):

Գծապատկեր 2.




Դարակաշարերի դասավորության հորիզոնական տարբերակ

3. Այս տեսակի դարակների դասավորությունը հիմնականում դիզայնի համար է

արվում, որպեսզի գրավի հաճախորդներին, բայց իրականում տարածքի զբաղեցման

առումով շատ վատն է (*Տե՛ս, Գծապատկեր 3*), քիչ է եզրային դարակների արդյունավետությունը՝ որ և քայլելու համար է անհարմար, և

Գծապատկեր 3.



Դարակաշարերի դասավորության անկյունային տարբերակ

Մարդկանց քայլելու հարմարավետությունն ապահովելու համար հիմնականում դարակների հեռավորությունը պետք է լինի 1.8 մետր: 1.8 մետրի նպատակը կայանում է նրանում, որ հնարավորություն տա 60 սմ-անոց սայլակներին շարժվել տարածությունում:

Հայտնի է, որ վաճառասրահի ամենակարևոր մասը որոշվում է հաճախորդների հոսքից, այսինքն, թե որ ուղղությամբ են նրանք շարժվում: Ամենատրակյալ, ամենաշատ գովազդվող, անգամ ամենատարածված ապրանքը չի կարող լավ վաճառվել, եթե նրա դիրքը սուպերմարկետում շատ վատ է ընտրված:

Գոյություն ունեն 4 պատճառներ, որոնց համար ապրանքը պետք է լինի հաճախորդի հոսքի հենց սկզբում [Visual Merchandising Display Techniques: 4 Tips to Increase Sales]՝

1. Սայլակը – սուպերմարկետ մտնելուն պես հաճախորդին չի հուզում, որ այն կարող է միանգամից լցվել և հանգիստ գնումներ է կատարում՝ չմտածելով, որ կարող է կոշտ փաթեթավորմամբ ապրանքը վնասել ավելի նուրբ փաթեթավորում ունեցող ապրանքին,

այսինքն՝ տեղ կա, ամեն մի ապրանք հեշտ է դասավորել, երբ սայլակը դեռ լցված չէ:

2. Գնումներ – որոշ ապրանքների գնումներ իմպուլսիվ են, և շատ հաճախ ոչ պլանավորված ապրանքներ գնելու ցանկությունը լինում է սուպերմարկետ մտնելիս, քանի որ հաճախորդը դեռ շատ գումար չի ծախսել և չի մտածում խնայելու մասին:

3. Մրցակցի ապրանքը – հնարավոր է, որ ապրանքը տեղափոխվի ավելի ներս, իսկ մրցակիցը դնի մուտքի մոտ և ունենա ավելի շատ վաճառք:

4. Գումար – գումարի գործոնը շատ կարևոր է հաշվի առնել, քանի որ, երբ հաճախորդը մտնում է սուպերմարկետ, նա վստահ է: Սակայն սայլակի ծանրանալուն պես նրա վստահությունը մարում է, ուստի շատ կարևոր է հենց սկզբից ապրանքն ընկնի նրա աչքին:

Բոլորն էլ գիտեն, որ խանութում ապրանքների ճիշտ դասավորությունն ավելացնում է վաճառքի ծավալները: Սա երևի միակ կանոնն է, երբ տեղերը փոխելիս արդյունքը նույնը չի լինում: Ստորև բերված են

մի քանի կանոններ, որոնք պետք է կիրառել ապրանքները դասավորելիս:

Շատ հաճախորդներ, մտնելով խանութ, սկսում են գնահատել: Այդ պատճառով որոշ խանութներ ապրանքները դասավորում են ըստ գների և այն էլ աճման կարգով: Սա արվում է նրա համար, որ հաճախորդը՝ մտնելով խանութ, իր համար տեսնի գայթակղիչ գին և հարմարավետ զգա: Եթե Դուք էլ մտնում եք ինչ-որ խանութ ու թանկ գներ են լինում, ապա շտապում եք դուրս գալ, քանի որ այնտեղ մնալն ուղղակի անիմաստ է: Այնինչ, ոչ մի խանութի մենեջեր չի ցանկանա, որպեսզի մտնողը միանգամից դուրս գա, ուստի պետք է հետևի այս կանոնին՝ խանութի մուտքի մոտ տեղադրել ակցիայով առաջարկվող, կամ էժան ապրանքները [The 5-most important elements of visual merchandising]:

Դարակաշարերում ապրանքների դասավորությունը պետք է ընկած լինի 1,0-1,8մ տարածքում, քանի որ աչքի և ձեռքի գոտիներում տեղադրված ապրանքներն ամենաշատն են վաճառվում: Յուրաքանչյուր ապրանք պետք է դիմացի մասով դասավորված լինի դարակներում, այնպես, որ պիտակները երևան մոտեցող հաճախորդին: Շատ կարևոր է պահպանել ֆեյսինգը, որի ժամանակ գոնե պետք է մի ապրանքից իրար կողք ներկայացված լինի նվազագույնը 3 հատ:

Դարակները չպետք է դատարկ լինեն: Ապրանքների լիքը լինելը մարդկանց տալիս է լիության զգացում, ուստի շատ հաճախ խանութներում կարող ենք տեսնել հայելի, որն էլ ավելի է մեծացնում ապրանքների քանակությունը մեր աչքին:

Շատ կարևոր է նաև ապրանքների նույն գունային գամման ապահովելը դասավորության ընթացքում:

Շատ կարևոր է նաև նկարների առկայությունը պատերին, որոնք, իհարկե, պետք է առաջացնեն դրական էմոցիաներ:

Միայն վառ ներկայացված նկարներն են մարդկանց տալիս իսկապես դրական էմոցիաներ: Կանանց ավելի շատ դուր են գալիս բնություն, երեխաներ, երջանիկ մարդիկ, իսկ տղամարդկանց ավելի շատ հաջողություն, երեխա, ուժ, հաղթանակ, մեքենա և այլն: Օրինակ՝ մի շառք սուպերմարկետներում հետազոտություն է անցկացվել, որի արդյունքում պարզվել է, որ գնի տակ ընդգծելն ապրանքի վաճառքն ավելացրել է 4%-ով, իսկ գնի կողքին առկա սմայլիկը՝ 20%-ով, այսինքն հաղթեց էմոցիան [12 Visual Merchandising Techniques to Improve Your Store in 2022]:

Մյուս հետաքրքիր քայլն ապրանքը շրջապատող մյուս ապրանքների մասին է, քանի որ լիդեր-ապրանքն իր շուրջն է հավաքում հաճախորդներին. այստեղից հետևություն՝ ինչքան հնարավոր է, ապրանքը պետք է մոտ լինի լիդերին: Լինելով ուժեղ ապրանքների կողքին՝ թույլերը նույնպես սկսում են լավ վաճառվել:

Երբեմն պետք է հաշվի առնել, որ դարակաշարի գրավչությունը կարող է հանգեցնել վաճառքների կորստի, որովհետև գեղեցիկ դասավորությունը շատ հաճախ ոչ ոք չի ցանկանում փչացնել ու ապրանքն այդպես էլ չի վաճառվում, կամ ասենք անհարմար է հանել, քանի որ բուրգը կփլվի: Այսպիսով, պետք է այնպիսի տեսք տալ, որ հաճախորդը չմտածի փլվելու, կամ դարակաշարի տեսքը փչացնելու մասին:

Վիզուալ մերչենդայզինգի նպատակն ապրանքի դեմքը հաճախորդներին ներկայացնելն է, որտեղ հաճախորդը կարողանա հեշտ գտնել իրեն անհրաժեշտ ապրանքը և այն լինի մաքսիմալ գրավիչ: Հետազոտությունները ցույց են տվել, որ (66-67%) դեպքերում մարդիկ ապրանքի գնման որոշումը կայացնում են հենց առևտրի սրահում, երբ տեսնում են իրենց առջև տե-

ղադրված ապրանքները: Դա պայմանավորված է նրանով, որ 10 հաճախորդներից 7-ը գնում կատարում են հենց լավ դասավորված ու մերչենդայզինգի կանոններին համապատասխան դարակներից: Նման վիճակագրությունը պայմանավորված է վիզուալ մերչենդայզինգի ոսկե կանոններով [Visual Merchandising: What It Is And Why It's Important?]:

Ապրանքի առանձնացումն իր շրջապատի ֆոնից.

Որպեսզի ապրանքը լինի նկատելի, հարկավոր է, որ դրանք լինեն մեծ քանակությամբ: Կարելի է ապրանքը դասավորել լայնակի, կամ երկարությամբ, կամ բրգի տեսքով: Էությունը կայանում է նրանում, որ քանակությունը շատ լինի, ինչն էլ արդեն կգրավի սպառողներին: Այս ձևը հիմնականում կիրառվում է մեծ առևտրի սրահներում, որտեղ կան բազմաթիվ մրցակիցներ և ամեն ընկերություն ձգտում է իր ապրանքը նկատելի դարձնել սպառողներին: Հնարավոր է նաև ապրանքներն առանձնացնել ոչ թե քանակով, այլ ինչ-որ յուրահատուկ մեթոդով, որն իսկապես առաջինն աչքի կընկի և որը

հիմնականում կիրառում են այսպես ասած բրենդային խանութները: Կարևորն այստեղ ապրանքը նկատելի դարձնելն է: Ճապոնական Nendo ընկերության դիզայներներն հետաքրքիր մեթոդ էին մշակել 24 Issey Miyake կանացի զգեստների և ակսեսուարների խանութի համար: Nendo-ի աշխատակիցների հիմնական հանձնարարությունը պատրաստել այնպիսի միջավայր, որտեղ հաճախորդների ուշադրությունը միանգամից կգրավեն Bilbao կանացի պայուսակները (*Տե՛ս, Պատկեր 1*): Այս պայուսակների յուրահատկությունը կայանում է նրանում, որ նրանք շատ պինդ են և պետք էր հաճախորդներին ցույց տալ այդ առավելությունը: Դրա համար ընտրվել էին ասեղի նման սուր ծայր ունեցող պլաստմասսե ցցեր, որոնց վրա դրված էին պայուսակները՝ արտացոլելով ամրությունը: Պայուսակների դասավորության մյուս առանձնահատկությունը նրանում է, որ դրանք տարբեր գույնի են, ինչը միանգամից աչքի է ընկնում և հնարավորություն է տալիս տարբեր ճաշակի մարդկանց ընտրություն կատարել [Bibao brand store]:

Պատկեր 1.



Bibao պայուսակների ցուցադրությունը վաճառասրահում

Վառ գունային գամմա.

Կան որոշ գույներ, որոնք մարդու աչքն ավելի արագ է ընկալում, քան ասենք մյուսները: Հենց գույներն են առաջին շփում ստեղծողները, որոնք հաճախորդին ստիպում են այցելել խանութ: Օրինակ՝ կարմիրը, դեղինը, նարնջագույնն ունեն այդ հատկությունը, ուստի նման գույնի ապրանքներն ավելի մեծ հավանականությամբ հենց առաջինն են հայտնվում հաճախորդի տեսադաշտում: Շատ կարևոր է ընտրել ճիշտ գունային գամման: Եթե ապրանքն ավելի շատ էկոլոգիապես մաքուր է, ապա միանշանակ գույնն ընտրվում է կանաչը: Վալենտինի օրվա համար համապատասխան գույներն են սպիտակն ու կարմիրը, Ամանորի համար նախընտրելի են ոսկեգույն,

կանաչ, կարմիր և սպիտակ գույները, փոքրիկ երեխաների համար հիմնականում երկնագույն և բաց վարդագույն գույներն են նախընտրելի: Կրկին ճապոնական ընկերություններից մեկը՝ Nike Harajuku-ն, որը գտնվում է Տոկիոյում (*Տե՛ս, Պատկեր 2*), 2009 թվականին բացված այս խանութը մեծ իրարանցում առաջացրեց ոչ թե նրա համար, որ Nike-ի հերթական խանութն էր և մարդիկ պետք է այցելեին զուտ անունի պատճառով, այլ իր հետաքրքիր դասավորության և գունային գամմայի: Խանութում ներկայացվել էին Nike ընկերության 2 տեսակի սպորտային կոշիկները՝ Lunar Glide-ն ու Air Attack-ը [Nike Harajuku store]:

Պատկեր 2.



Lunar Glide-ն ու Air Attack կոշիկների ցուցադրությունը Nike Harajuku վաճառասրահում

Կարևոր է նաև հասկանալ, թե ինչպես են դասավորվում կոշիկներն ու հագուստներն առևտրի սրահում: Սովորաբար դրանք բաշխվում են ըստ՝

1. Դասավորություն ըստ բրենդների

Շատ հաճախ գործարարները կարծում են, որ իրենց բրենդները հայտնի են սպառողներին, սակայն իրականում դժվար թե լինեն գոնե մի քանի տասնյակ մարդ, ովքեր կկարողանան թվարկել գոնե կոշիկի յոթ բրենդ: Եթե խանութում բոլոր բրենդները

քիչ հայտնի են, բայց մի բրենդ հայտնի է, ապա ավելի ճիշտ է այն առանձնացնել ընդհանուրից և ներկայացնել որպես առանձին բրենդ իր POS մատերիալներով: Այսպիսի բրենդի ներկայացումը հնարավոր է տարբերվի խանութի ներքին հարդարումից՝ ստեղծելով shop-in-shop: Այս տարբերակն, իհարկե, ձեռնտու է բրենդի համար, քանի որ միշտ էլ այն աչքի է ընկնում, իսկ ահա այն բրենդները, որոնք ցածր և միջին գնային կատեգորիայում են, նրանք ավելի շատ աշխատում են ապ-

րանքի վաճառքի քանակության վրա, ուստի բոլորից առանձնացնելն ուղղակի անհնար է:

2. Դասավորություն ըստ չափսերի

Էկոնոմ ֆորմատի խանութների համար իրական չէ դասավորության այսպիսի ձևը, քանի որ հսկայական տարածք է անհրաժեշտ նման կերպ ներկայացնելու համար: Այս կոնցեպտի հաջողությունը կայանում է նրանում, որ հաճախորդը խնայում է ժամանակը և գնում այն դարակների մոտ, որոնք իրենց են համապատասխանում: Այսինքն՝ այստեղ ավանդական մեթոդ չի կիրառվում, այլ ներկայացվում են դարակները՝ ըստ ոտքերի չափսերի: Հիմնականում նման կերպ վաճառում են հայտնի դիսքաունթերները, որոնք աշխատում են ցածր գնային կատեգորիայում:

3. Դասավորություն ըստ հավաքածուի

Հավաքածու հասկացությունը կարելի է դասակարգել գունային գամմայով, կոշիկի կամ հագուստի տեսակով, գնային կատեգորիայով, այն կախված է խանութի մոդելից: Հավաքածուներն ավելի հետաքրքիր կլինի վաճառել փոխլրացնող ապրանքներով, որն, իհարկե, ավելի լավ տարբերակ է վաճառողի համար, այսինքն՝ կոշիկի հետ վաճառել այլ աքսեսուարներ՝ պայուսակ, գոտի և այլն: Այսպիսի դասավորություն կարելի է գտնել հիմնականում միջինից բարձր և բարձր գնային կատեգորիա վաճառող խանութներում:

4. Դասավորություն ըստ կապեզորիայի՝

Մինչև կոշիկ դասավորելը պետք է հասկանալ, թե ինչ է նախընտրում սպառողը, ինչի համար է մտնում խանութ: Իսկ խանութի նպատակն է բավարարել նրա հետաքրքրությունների ողջ շրջանակը: Օրինակ՝ ամենազվխավոր գործոններից մեկն այն է, թե ինչ է հաճախորդը փնտրում խանութներում: Ամենահարմար տարբերակը դասավորությո-

յան այս տեսակն է, քանի որ մարդկանց հստակ ցույց է տրվում կոնկրետ կատեգորիան՝ սպորտային, դասական, բարձրակրունկ և այլն:

Եզրակացություն.

Այսպիսով, ո՞ր վաճառքների ծավալներն ավելացնելու համար պետք է հետևել մի մի քանի գործիքների ու կանոնների՝ անպայման հաշվի առնելով բիզնեսի առանձնահատկությունը.

1. Ապրանքները պետք է այնպես դասավորել, որ չխանգարի մարդկանց շարժին, պետք է թույլ տալ նրանց, որպեսզի լավ տեսնեն շրջապատը: Մարդիկ միանգամից հեռանում են այն ապրանքներից, որոնք իրենց նեղություն են պատճառում շարժվելիս:

2. Հետազոտությունները ցույց են տվել՝ մարդիկ վերցնելով գեղջված ապրանքը, միանգամից գնում են դրամարկղի մոտ:

3. Եթե հենց մուտքի մոտ դրվում են ինչ-որ գովազդային պաստառներ և միանգամից այդտեղ փչում է օդորակիչը, ապա հաճախորդները չեն նկատում այդ պաստառները, որովհետև միանգամից, մարմնի ջերմությունը փոխվելիս, մարդկանց մոտ ներքին ազդակներն են ավելանում, քան՝ արտաքին, ուստի մինչև մարմինն արդեն սովորում է տվյալ ջերմաստիճանին, նա վաղուց հեռացած է լինում գովազդային վահանակից:

4. Տղամարդկանց 65%-ը, եթե ջինս է փորձում, ապա գնում է, այնինչ կանանց դեպքում այս թիվը կազմում է 25%: Բնական է, որ տղամարդկանց ջինսերի բաժնում պետք է լինեն տարբեր չափսերի ջինսեր և որն ավելի կարևոր է՝ երևացող դասավորություն:

5. Հաճախորդների 21%-ը համակարգիչներ գնում է շաբաթ օրը՝ ժամը 5-ից հետո: Եթե խանութը փակվում է շաբաթ օրը՝ ժամը 6-ին, ապա շատ մեծ կորուստներ կլինեն: Եվ սա այն պարագայում, երբ մինչև ժամը 12-ը վա-

ճառվում է ընդամենն ամբողջ համակարգիչների 4%-ը:

6. Հաճախորդի համար ամենազխալոր պայմանը խանութում անցկացվող ժամանակն է: Ինչքան նա շատ մնա խանութում, այնքան գնումների հավանականությունը մեծանում է: Բոլորս էլ գիտենք, որ, օրինակ, հեռուստացույց գնողների մեծ մասը տղամարդիկ են, դրա համար հեռուստացույց վաճառող խանութներում հիմնականում ցուցադրվում են սպորտային միջոցառումներ՝ ֆուտբոլ, բասկետբոլ, Ֆորմուլա 1 և այլն:

7. Վաճառքի վրա շատ մեծ ազդեցություն ունի նաև աշխատակցի հետ շփումը: Ինչքան հաճախորդը շատ զրուցի վաճառողի հետ, այնքան գնումների հավանականությունը մեծանում է: Ի դեպ, աշխատակիցների հետ ավելի շատ շփվում են կանայք, քան՝ տղամարդիկ: Տղամարդիկ սիրում են ուղղակի կարգալ տեղեկությունն ու գնել, քան թե ինչ-որ մեկից օգնություն խնդրել: Ուստի պետք է աշխատանքի ընդունել ոչ թե միայն գեղեցկատես մարդկանց, այլև հաճելի ժպիտով ու շփվող դիմորդների, որոնց հետ շփումն ուղղակի հաճելի կլինի հաճախորդի համար:

8. Տղամարդիկ խանութում ավելի արագ են տեղաշարժվում, քան՝ կանայք և ավելի հաճախ չեն գնում այն ապրանքները, որոնք պլանավորել էին: Տղամարդու հետ խանութ մտած կինն ավելի քիչ է գնումներ կատարում, քան իր ընկերուհու կամ երեխայի հետ այցելելիս: Գնումների սրահում ամենաշատ ժամանակն անց են կացնում՝

Կինն ընկերուհու հետ – 8.15 րոպե,

Կինը երեխայի հետ – 7.19 րոպե,

Կինը – 5,20 րոպե,

Կինը տղամարդու հետ – 4,41 րոպե:

9. Ինչքան հաճախորդը երկար է կանգնում դրամարկղի մոտ, այնքան նրա մոտ առաջանում է զայրույթ խանութի նկատմամբ: Մինչև 90 վայրկյան հաճախորդը չի էլ

զգում, թե ինչպես է անցնում, քանի որ ուսումնասիրում է շրջակայքը, բայց 90-ից հետո արդեն դառնում է անտանելի: Շատ հաճախ այնպես է լինում, որ թողնում են ապրանքները դրամարկղի մոտ ու հեռանում:

10. Հաճախ հաճախորդներն այցելում են խանութ՝ իրենց հետ չվերցնելով զամբյուղը: Եվ բնական է, որ եթե մի ձեռքին պայուսակն է, ապա նրանք ցանկության դեպքում էլ չեն կարող կատարել շատ գնումներ: Եթե զամբյուղները միայն մուտքի մոտ են, ապա այն պետք է լինի ներսում, որպեսզի անհարմարությունից դրդված՝ հաճախորդն ուղղակի օգտվի այդ հարմար միջոցից: Միևնույն ժամանակ պետք է անձնակազմին սովորեցնել, որ եթե հաճախորդը ձեռքին պահում է երեք ապրանք, ապա պարտադիր պետք է նրան զամբյուղ առաջարկել:

11. Եթե տեղադրվում են գովազդային վահանակներ, ապա պետք է նախապես մտածել, որ դրանք նաև կարդալու համար են: Այսինքն՝ պետք է որոշել մարդկանց քայլելու ու գլխի ուղղությունը, որպեսզի դրանք ավելի կարդացվեն ու տեսանելի լինեն մարդկանց աչքին: Ուշադրություն պետք է դարձնել այն վայրերին, որտեղ հաճախորդները դանդաղ են քայլում. դա հենց այն կետն է, որը պետք է գովազդի համար, քանի որ դանդաղ քայլելուց կարդալու հավանականությունը մեծանում է: Ուստի, տեքստերը պետք է այնքան կարճ լինեն, որ կարդացվեն 12 վայրկյանի ընթացքում, վահանակը պետք է լինի աչքի ընկալման գոտուն հավասար, իսկ դռան կամ պատուհանի վրա գրվածները պետք է կարդացվեն ամենաշատը 2 վայրկյանում:

12. Շատ խանութներ իրենց ապրանքների գները չեն կլորացնում, այլ վերջում թողնում են .99: Գնային այս տակտիկան մշակվել է Հենդերսոնի համալսարանի հայտնի մարքեթոլոգներից մեկի՝ Լի Հիբբեթի կողմից, դեռևս նախորդ դարում: Ըստ Հիբբեթի,

մարդիկ սովորություն ունեն կարդալու ծախից աջ և առաջին թիվը նրանց ուղեղում ավելի լավ է տպավորվում, քան մնացածը: Օրինակ՝ ենթադրենք ապրանքի գնապիտակի վրա նշված է 4.99 դոլար, այլ ոչ թե՛ 5, ապա ասոցացվում է, որ ապրանքի գինն արժե 4 դոլար, չնայած այն բանին, որ գինն իջեցվել է ընդամենը 1 ցենտ: Կան նաև շատ խանութներ, որոնք չեն ցանկանում իրենց իմիջի հետ խաղալ և նույն տակտիկան կիրառում են, բայց ոչ թե .99, այլ՝ 9. թվերով, այսինքն ոչ թե՛ 17.99, այլ 19: Այս առիթով կատարվել է հետաքրքիր հետազոտություն հազուստի բնագավառում. հազուստի գինը բարձրացվել է 34-ից 39 դոլար, որի արդյուքնում այդ հազուստի վաճառքի ծավալներն ավելացել են, իսկ ահա երբ գինը բարձրացել է 34-ից 44 դոլար, (որն ավելի հաճելի է աչքին և թանկ, ուստի նաև ցանկալի), ապա վաճառքի կտրուկ փոփոխություն չի եղել:

րառում են, բայց ոչ թե .99, այլ՝ 9. թվերով, այսինքն ոչ թե՛ 17.99, այլ 19: Այս առիթով կատարվել է հետաքրքիր հետազոտություն հազուստի բնագավառում. հազուստի գինը բարձրացվել է 34-ից 39 դոլար, որի արդյուքնում այդ հազուստի վաճառքի ծավալներն ավելացել են, իսկ ահա երբ գինը բարձրացել է 34-ից 44 դոլար, (որն ավելի հաճելի է աչքին և թանկ, ուստի նաև ցանկալի), ապա վաճառքի կտրուկ փոփոխություն չի եղել:

Գրականության ցանկ

1. Aptos MLM Planning Platform, 01 հոկտեմբերի 2022, <https://www.aptos.com/aptos-mlm-planning-platform>,
2. Visual Merchandising Display Techniques: 4 Tips to Increase Sales, 01 հոկտեմբերի 2022, <https://www.repsly.com/blog/consumer-goods/visual-merchandising-display-techniques-to-increase-sales>
3. The 5-most important elements of visual merchandising, 01 հոկտեմբերի, 2022, <https://www.liveabout.com/the-5-most-important-elements-of-visual-merchandising-2890501>,
4. 12 Visual Merchandising Techniques to Improve Your Store in 2022 <https://fitsmallbusiness.com/visual-merchandising-guide/>, 01 հոկտեմբերի, 2022,
5. Visual Merchandising: What It Is And Why It's Important? 01 հոկտեմբերի, 2022 <https://www.contravision.com/visual-merchandising-importance/>,
6. Baobao brand store, 01 հոկտեմբերի, 2022, <https://www.isseymiyake.com/en/brands/baobao>,
7. Nike Harajuku, 01 հոկտեմբերի, 2022, <https://www.nike.com/jp/en/retail/s/nike-harajuku>:

CHARACTERISTICS AND RULES OF VISUAL MERCHANDISING

Hovhannes Yeritsyan

PhD in Economics, Associate Professor

EUA, Department of Management

yer.hovhannes@yahoo.com

Abstract

Visual merchandising is the practice of displaying products and organizing and managing a storefront to promote sales, attract attention, increase brand awareness, and provide the best conditions for a pleasant shopping experience for customers. The art of attracting attention through visual appeal has its principles, but it all boils down to one thing: creating a unique experience that drives purchase. Overall, this all leads to the second goal: to create an aesthetic and positive environment in the store that will make customers feel comfortable. In fact, visual merchandising not only helps attract customers, but also does increase sales and keep customers coming back, while giving businesses a competitive edge. The study of the features of visual merchandising and the observation and improvement of the experience of their application are important components of marketing today, as a result of which, the canons that must be followed from a

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

merchandising point of view have been formed. Through personal examples and case studies, the article outlines the most important visual merchandising techniques and how they can be applied in business.

Keywords: Visual merchandising, merchandising, product placement, colors, sales promotion, rules of visual merchandising.

Ներկայացվել է' 15.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման' 14.11.2022թ.

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏԻ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Տաթևիկ Սլավիկի Մովսիսյան

հայցորդ

ԲՊՀ, Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

tatevmovsisyan1907@gmail.com

Ամփոփագիր

Սույն հոդվածում վերլուծվել են Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական հիմքերը և դուրս են բերվել մի շարք հիմնախնդիրներ, որոնք սահմանափակում են բարձրագույն կրթության որակի ապահովման սուբյեկտների գործունեությունը, խոչընդոտում Հայաստանի Հանրապետությունում որակի ապահովման մշակույթի փարածմանը, ամրապնդմանը և զարգացմանը, կրթության որակի բարելավմանն ու բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության, մրցունակության, հաշվետվողականության ու թափանցիկության բարձրացմանը:

Բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական փաստաթղթերի համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ փաստաթղթերում կրթության որակին վերաբերող հասկացությունները ժամանակավրեպ են և չեն համապատասխանում ներկայիս իրողություններին, ուստի հրատապ է այդ հասկացությունների վերանայումը: Բացի այդ, գործող օրենքների կիրառմամբ տրվում են բարձրագույն կրթության միջազգայնացմանն ուղղված միջոցառումները, ինչը նաև օրենսդրական ակտերում առկա հակասությունների հետևանք է: Թեպետ 2005 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունը քայլեր է ձեռնարկում բարձրագույն կրթության ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղությամբ, այնուամենայնիվ, սույն հետազոտության արդյունքում վերհանված օրենսդրական խնդիրները սահմանափակում են Հայաստանի Հանրապետությանը՝ Եվրոպական բարձրագույն կրթության փարածքին (ԵԲԿՏ) ամբողջությամբ ինտեգրումը՝ առաջ բերելով որակի ապահովման գործընթացների կազմակերպման և իրականացման մի շարք խոչընդոտներ:

Հիմնաբառեր. բարձրագույն կրթություն, բարձրագույն կրթության սահմանադրական իրավունք, որակի ապահովում, որակի ապահովման օրենսդրական խնդիրներ, կրթական բարեփոխումներ:

Ներածություն

ՀՀ բարձրագույն կրթության բնագավառում օրենսդրական խնդիրների շարքում և հատկապես կրթությանն առնչվող գրեթե բոլոր իրավական փաստաթղթերում առանցքային տեղ է զբաղեցնում կրթության որակը՝ որ-

պես երկրի կայուն առաջընթացի և զարգացման անհրաժեշտ նախապայման: Կրթության որակի ապահովմանն առնչվող իրավական հարցերը մշտապես գտվել և շարունակում են մնալ ոլորտի տարբեր մասնագետների, փորձագետների, հետազոտողների ուշադրության

կենտրոնում և իրենց արտացոլումն են գտել տարբեր փաստաթղթերում, որոնք էլ մեթոդաբանական հիմք են ծառայել սույն հետազոտության համար:

Կարևորելով կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումները՝ սույն հոդվածի **նպատակն է՝** հետազոտել ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական դաշտը և դուրս բերել դրանում առկա հիմնախնդիրները:

Հետազոտության **օբյեկտը՝** բարձրագույն կրթության որակի ապահովման օրենսդրական դաշտն է, իսկ **առարկան՝** վերջինիս ուսումնասիրությունը և առկա խնդիրների ազդեցությունը ՀՀ բարձրագույն կրթության համակարգի գործարկման վրա:

Հետազոտության ընթացքում կիրառվել են փաստաթղթերի համեմատական վերլուծության, համադրման մեթոդները:

Բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի կարևորագույն բաղադրիչներից է կրթության որակի ապահովումը: Կրթության որակի մասին սահմանադրական նորմն ամրագրված է «Կրթության մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես 2016 թվականի մարտի 16-ին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում սահմանվեց «կրթության որակ» հասկացությունը, համաձայն որի՝ կրթության որակը «կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք է, որը գնահատվում է՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների»: Նույն

օրենքի 3-րդ հոդվածի 1.10 իրավադրույթով ըստ ուղղությունների սահմանվեցին կրթության որակի գնահատման չափանիշները, որոնք հիմք հանդիսացան հավատարմագրման չափանիշների մշակման համար [«Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, հոդված 3]:

Օրենքում որակի սույն ձևակերպման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն բովանդակային առումով գերծ չէ թերություններից: Թեպետ ձևակերպման մեջ կարևորվում է կրթական ծառայությունների հիմնական սպառողների՝ սովորողների անհատական կարիքները, այդուհանդերձ, պետք է նշել, որ միջազգային պրակտիկայում և գիտամանկավարժական գրականության մեջ կրթության որակը գնահատելիս հաշվի են առնվում ոչ միայն սովորողների, այլև ոլորտի բոլոր առանցքային շահակիցների կարիքներն ու պահանջները: Միևնույն ժամանակ, ՀՀ-ում ընդունված է կրթության որակի՝ «համապատասխանություն սահմանված նպատակին» ձևակերպումը, համաձայն որի՝ որակն ապահովված է, եթե, օրինակ, բուհի գործունեությունը բխում է իր առաքելությունից, կանոնադրական ու ռազմավարական նպատակներից: Այսինքն, օրենքում ամրագրված որակի այս ձևակերպումը մասամբ է ներկայացնում «որակ» հասկացության էությունը և վերանայման անհրաժեշտություն ունի, քանի որ միայն սովորողների անհատական կարիքների, կրթական միջավայրի, ուսումնական ծրագրերի բովանդակության, սովորողների ուսումնառության արդյունքների հաշվառմամբ և բուհի ռազմավարական կառավարման գործընթացները շրջանցելով հնարավոր չէ ամբողջությամբ գնահատել կրթության որակը, հետևապես՝ իրագործել կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակներն ու խնդիրները:

Կրթության որակի մասին նորմ ամրագրված է նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում: Հարկ է նշել, որ օրենքի 3-րդ հոդվածի 14-րդ և 15-րդ իրավադրույթներով ամրագրված են կրթության «որակի գնահատում» և «որակի ապահովում» հասկացությունները, որոնց համաձայն՝ որակի գնահատումը «բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատումն է», իսկ որակի ապահովումը՝ «պետական կրթական չափորոշիչներին և հավատարմագրման չափանիշներին կրթության որակի համապատասխանության ու բարելավման անընդհատ գործընթաց» [*Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին*] ՀՀ օրենք, Հոդված 3]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին քսանամյակում տեղի ունեցող կրթական բարեփոխումների արդյունքում վերափոխվել են որակի գնահատման և որակի ապահովման մոտեցումները, գիտամանկավարժական գրականության ու ոլորտը կարգավորող տարբեր փաստաթղթերի մեջ ևս վերանայված են «որակի գնահատման» և «որակի ապահովման» հասկացությունների սահմանումները: Ներկայումս որակի գնահատումը վերաբերում է բուհի գործունեության բոլոր տիրույթների գնահատմանը, իսկ որակի ապահովումը՝ բուհի առանցքային շահակիցների մասնակցությամբ և նրանց կարիքների ու պահանջների հաշվառմամբ այդ տիրույթների բարելավմանն ու հավատարմագրման չափանիշներին համապատասխանությանը: Այսինքն, որակի գնահատումը կազմում է որակի ապահովման մի մասը: Որակի գնահատումն ու որակի ապահովումն իրարից անկախ գործընթացներ չեն, այլ փոխլրացնում են մեկը մյուսին, հետևաբար օրենքում դրանց

սահմանումների ձևակերպումները բովանդակային առումով ենթակա են վերանայման: Մյուս կողմից, օրենքում որակի ապահովման ձևակերպման մեջ կարևորվում է մատուցվող կրթական ծառայությունների համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին: Միևնույն ժամանակ, օրենքի 8-րդ հոդվածի 1.1 և 1.4 իրավադրույթներում ամրագրված է, որ պետական կրթական չափորոշիչներով ապահովվում է ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական մասնագիտության կրթության որակն ու օտարերկրյա պետությունների բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորումների և փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքության հաստատումը: Սակայն, օրենքով սահմանված վերոնշյալ պահանջները լիովին չեն իրականացվում մի շարք հանգամանքներով: Մասնավորապես՝ մինչ օրս ոչ բոլոր մասնագիտությունների համար են մշակված ու հաստատված համապատասխան կրթական չափորոշիչներ, այնինչ վերջիններս պետք է լինեն կրթության որակի գնահատման կարևոր ուղենիշեր: Ակադեմիական շարժունության ու որակավորումների ճանաչելիության նպատակով վերջին հինգ տարիներին բուհերի կողմից գործողության մեջ դրված կրթական ծրագրերի համապատասխանությունը 2016թ. վերանայված որակավորումների ազգային շրջանակին չի կարող վստահարժան գնահատվել, քանի որ նախ ՀՀ որակավորումների ազգային շրջանակը չի անցել ինքնահավաստման գործընթաց և, բացի այդ, ի տարբերություն մի շարք եվրոպական երկրների (օրինակ՝ Գերմանիա, Բելգիա, Նիդերլանդներ) ՀՀ-ում չի գործում որակավորումների ազգային շրջանակի որակավորումների եվրոպական շրջանակին ու ԵԲԿՏ որակավորումների շրջանակին համապատասխանեցման պատասխանատու կառույց: Ստացվում է, որ բուհերի կողմից իրա-

կանացված գնահատումը կարող է ծառայել լրկ բուհի կամ դրա կրթական ծրագրերի թերությունների վերացման գործընթացի իրականացման հիմք, այլ ոչ թե օրենքի պահանջ: Բացի այդ, բոլոր մասնագիտությունների գծով դեռևս մշակված չեն որակավորումների ոլորտային շրջանակներ, բարձրագույն կրթության եռաստիճան մակարդակներում արդյունավետ չի գործարկվում կրեդիտային համակարգը, որը պայմանավորված է օրենսդրական դաշտի անկատարությամբ՝ այդպիսով խոչընդոտելով որակավորումների ճանաչմանն ու ակադեմիական շարժունությանը: Ինչ վերաբերում է հետբուհական մասնագիտական կրթության որակի ապահովմանը, ապա հարկ է ընդգծել, որ ՀՀ-ում հետբուհական կրթական ծրագրերը չեն անցնում որակի արտաքին գնահատման գործընթաց, քանի որ պետության կողմից բուհերին դեռևս նման պահանջ չի առաջադրվել, ուստի օրենքի 1.1 իրավադրույթի պահանջը նույնպես չի իրականացվում:

Բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման առավել տարածված մեխանիզմների՝ բուհերի լիզենցավորման ու պետական հավատարմագրման օրենսդրական պահանջները սահմանված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 7-րդ, 13-րդ, 22-րդ իրավադրույթներում: Մասնավորապես նույն օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ իրավադրույթի համաձայն՝ պետական հավատարմագրումը «պետության կողմից բուհի, կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչումն է» [*«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 3*]: Հարկ է նշել, որ սույն ձևակերպումը լիովին չի արտացոլում հավատարմագրման էությունն ու նպատակը: ԵԲԿՏ-ում

տեղի ունեցող կրթական բարեփոխումների համատեքստում հավատարմագրումը պետության կողմից սահմանված որակի ապահովման (հավատարմագրման) չափանիշներին համապատասխան բուհի կատարողականի ու կրթական ծրագրերի որակի գնահատման գործընթացն է: Ուստի, հավատարմագրման հասկացության ձևակերպումն անհրաժեշտ է վերանայել՝ դրանում արտացոլելով հավատարմագրման արդիական մոտեցումները:

Անդրադառնալով լիցենզավորմանը՝ պետք է նշել, որ լիցենզավորման գործող պահանջներն ու պայմանները ևս վերանայման անհրաժեշտություն ունեն, քանի որ դրանք ընդհանրական են և տարանջատված չեն ըստ ոլորտային առանձնահատկությունների ու կրթական աստիճանների: Հատկապես, խնդիրն ակնհայտ է ռազմական և այլ ուժային ոլորտների մասնագիտությունների գծով բուհերում, ինչը պետության կողմից այդ ոլորտների համար լիցենզավորման առանձին չափանիշներ չսահմանելու հետևանք է՝ խոչընդոտելով ոչ միայն կրթության որակի բարելավմանը, այլև այդ բուհերի մրցակցային դիրքի ամրապնդմանը: Նշված խնդիրն առկա է նաև հավատարմագրման դեպքում: Մասնավորապես, 2011 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված որակի ապահովման չափանիշներով հավատարմագրվում են նաև ոլորտային առանձնահատկություն ունեցող բուհերը, որոնցով, ըստ էության հնարավոր չէ բազմակողմանի գնահատել այդ բուհերի փաստացի վիճակը և ներուժը՝ հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները:

Ի լրումն վերոնշյալի՝ ԵԲԿՏ-ին լիովին ինտեգրվելու տեսանկյունից ՀՀ-ում կրթական բարեփոխումների իրականացման խնդիրներից է 2015 թվականին ընդունված ՈԱԵԶՈՒ-ին համապատասխան որակի ապահովման գործընթացների իրականացումը: Այս համա-

տեքստում հարկ է նշել, որ ՀՀ հավատարմագրման չափանիշները և ինքնավերլուծության ու փորձագիտական զեկույցների ձևաչափերը 2011 թվականից ի վեր չեն վերանայվել, այսինքն՝ լիովին համապատասխանեցված չեն 2015 թվականի ՈԱԵՉՈՒ-ի պահանջներին՝ այդպիսով խոչընդոտելով բուհերի մրցունակության ու կրթության որակի միջազգային չափանիշներին համապատասխանելուն:

Վերոնշյալ խնդիրներից զատ, հավատարմագրված բուհերի փորձագիտական զեկույցների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ կրթության որակի բարձրացման նպատակով բուհերի մեծ մասի ենթակառուցվածքները կա՛մ վերազինման անհրաժեշտություն ունեն, կա՛մ չեն համապատասխանում կրթության ժամանակակից պահանջներին, այնինչ նման խնդիրը, որպես իրավական պահանջ, պետք է դիտարկվեր ու լուծվեր լիցենզավորման շրջանակներում: Ուստի, կարելի է եզրակացնել, որ լիցենզավորման ու հավատարմագրման ներկայիս գործընթացները համահունչ չեն ու չեն փոխարացնում իրար, ինչը էապես ազդում է բուհերի գործունեության ու հատկապես կրթական ծառայությունների մատուցման որակի վրա:

Օրենսդրական հաջորդ խնդիրը կապված է բուհերի հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների անկատարության հետ: Ըստ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 11-րդ հոդվածի 5-րդ իրավադրույթի՝ ՀՀ-ում պետք է ապահովվի բուհերի գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը: Բուհերի հաշվետվողականության ու թափանցիկության ապահովման նորմ ամրագրված է նաև 2011 թվականին ՀՀ կառավարության հաստատած հավատարմագրման 8-րդ չափանիշում, համաձայն որի՝ բուհերն իրենց ինքնավերլուծու-

թյան զեկույցներում պետք է ներկայացնեն ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգը, թափանցիկության ու հետադարձ կապի մեխանիզմները և գնահատեն վերջիններիս արդյունավետությունը: Այդուհանդերձ, ինքնավերլուծությունների, փորձագիտական զեկույցների և բուհերի պաշտոնական կայքէջերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լիարժեք չի գործարկվում բուհերի հաշվետվողականության համակարգը, անկատար են հետադարձ կապի մեխանիզմները: Մասնավորապես՝ ոչ բոլոր բուհերի կայքէջերում են հասանելի դրանց գործունեության վերաբերյալ տվյալները, օրինակ՝ Հոգաբարձուների խորհրդի, գիտխորհրդի, ռեկտորատի, կառուցվածքային ստորաբաժանումների նիստերի արձանագրությունները, ընթացիկ գործընթացների վերաբերյալ տվյալները, ներքին և/կամ արտաքին աուդիտի արդյունքներն ու եզրակացությունները, հավատարմագրումից հետո միջանկյալ մշտադիտարկման արդյունքները, բուհերում գործող ՄԿԾ-երի բովանդակության, շնորհվող որակավորումների վերաբերյալ տվյալները, ներքին և արտաքին շահակիցների՝ ՄԿԾ-ներից ու բուհի ռեսուրսներից բավարարվածության որակական ու քանակական վերլուծությունները, ռազմավարական ծրագրի մշտադիտարկման ու կատարողականի վերաբերյալ տվյալները և այլն:

Ի տարբերություն Հոգաբարձուների խորհրդի կազմի, Հավատարմագրման հանձնաժողովում ներգրավված չէ ուսանողական համակազմից ներկայացուցիչ, այն դեպքում, երբ ուսանողը Հավատարմագրման հանձնաժողովի կայացրած որոշման ազդեցության հիմնական կրողն է, կրթական ծառայությունների սպառողը: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ Հավատարմագրման հանձնաժողովում ուսանողի ներգրավվածությունն ապահովելու փաստը դիտարկվել է նաև ՈԱԱԿ-

ի 2022 թվականի հավատարմագրման գործընթացում և Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից արձանագրվել վերջինիս արտաքին գնահատման զեկույցում [ENQA Agency Review, 13]:

Անդրադառնալով թափանցիկության մեխանիզմների անկատարությանը՝ հարկ է նշել, որ ՈԱԱԿ-ի կայքէջում հասանելի չեն բուհերի ինքնավերլուծությունները, ընթացիկ մշտադիտարկման արդյունքները, կրթական ծրագրերի մշտադիտարկման արդյունքները, ինչը խոչընդոտում է գործող օրենքով սահմանված պետական քաղաքականության սկզբունքների լիարժեք կիրառմանը:

Բարձրագույն կրթության որակի բարելավմանը խոչընդոտող հաջորդ առանցքային խնդիրներից է գրագողությունը, որը ակադեմիական բարեվարքության խախտման դրսևորումներից մեկն է: Ակադեմիական բարեվարքության տարրեր պարունակող իրավադրոյթներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ, ՀՀ քրեական օրենսգրքում, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում, ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգում, ինստիտուցիոնալ հավատարմագրման 3-րդ չափանիշում, սակայն նշված փաստաթղթերով ամբողջովին չի կանոնակարգվում գիտակրթական համակարգում ակադեմիական բարեվարքության լիարժեք պահպանումը:

Ակադեմիական բարեվարքության քաղաքականությունն արտացոլող ներքին իրավական փաստաթղթեր (հայեցակարգեր, էթիկայի և ակադեմիական բարեվարքության կանոնակարգ, ուղեցույցներ և այլն) հաստատված են նաև ՀՀ բուհերում: Այդուհանդերձ, ակադեմիական բարեվարքության պահպանումը կրում է ավելի շատ ֆորմալ բնույթ. այն բավարար չափով չի մշակութայնացվել և որպես ա-

կադեմիական մշակույթի անբաժանելի տարր՝ չի արմատավորվել ՀՀ բուհերում հետևյալ պատճառներով՝

- ոչ բոլոր բուհերի կամ բուհերի ոչ բոլոր առարկայական ծրագրերում (նաև ոչ միասնական ձևաչափով) են ներկայացված ակադեմիական բարեվարքության պահպանման պահանջները,
- բուհերի կրթական ծրագրերում բացակայում են ակադեմիական բարեվարքության պահպանմանն առնչվող ուսումնական և վերապատրաստական դասընթացները, եթե տվյալ կրթական ծրագրերի մասնագիտական ուղղվածությունը չի ընդգրկում իրավաբանական կամ տնտեսագիտական ոլորտը,
- բուհերի ներքին շահակիցների (գլխավորապես ուսումնառողների) մեծ մասը կա՛մ հետաքրքրվածություն չի ցուցաբերում ուսանողների ձեռնարկներում, պատվո վարքականոններում, ներքին կարգուկանոններում և էթիկայի կանոններին առնչվող կանոնակարգերում առկա ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող տեղեկատվության ձեռքբերման նկատմամբ, կա՛մ առհասարակ տեղյակ չէ այդպիսի ներքին կանոնակարգերի առկայությունից,
- ՊԴ կազմի կողմից գրական աղբյուրների հղման ճիշտ ձևերին և առհասարակ ակադեմիական գրագրության մաս հանդիսացող ակադեմիական ազնվության պահպանմանը վերաբերող տեղեկատվությունը հաճախ սահմանափակ է կամ ոչ լիարժեք, իսկ նշված խնդիրների լուծմանը միտված ուղղորդման տրամադրումը՝ ոչ միշտ արդյունավետ [Շահինյան, 129]:

Այսպիսով, կրթության որակի ապահովման ոլորտում առկա օրենսդրական խնդիր-

ների վերաբերյալ սույն վերլուծությունը ցույց է տալիս, որ վերհանված խնդիրները սահմանափակում են Բոլոնիայի գործընթացով պայմանավորված կրթական բարեփոխումների իրականացման ամբողջականությունը, խոչընդոտում կրթական ծառայությունների որակի բարձրացմանը և, ընդհանուր առմամբ, ՀՀ բարձրագույն կրթության համակարգի լիարժեք գործարկմանն ու բուհերի մրցունակության բարձրացմանը: ՀՀ կառավարությունը, կարևորելով կրթության որակի բարձրացման պետական քաղաքականությունն ու հաշվի առնելով բարձրագույն կրթության օրենսդրական դաշտում առկա խնդիրները և օրենքների ընդունման ժամանակագրությունը, օրակարգում դրել է գործող օրենքի վերանայման հարցը: Արդյունքում, 2021 թվականին հանրությանը ներկայացվեց «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը միտված էր օրենսդրական խնդիրների վերացմանն ու բարձրագույն կրթության և գիտության ոլորտների համաչափ զարգացմանն ուղղված քաղաքականության ձևավորման և իրականացման հիմքերի ու պայմանների ապահովմանը [Բարձրագույն կրթության և գիտության մասին] ՀՀ օրենքի նախագիծ]: «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է փոխկապակցել լիցենզավորման և հավատարմագրման գործընթացները, վերանայել գործող պայմաններն ու չափանիշները, մշակել և կիրառել նախահավատարմագրման գործիքակազմ, ինչպես նաև պարտադիր դարձնել կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատումը: Օրենքի նախագծով

նախատեսվում է նաև բուհերի կառավարման խորհրդի ձևավորման սկզբունքների փոփոխություն, հաշվետվողականության, թափանցիկության և ֆինանսավորման նոր մեխանիզմների մշակում ու կիրառում:

Եզրակացություն

Այսպիսով՝ ամփոփելով բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում օրենսդրական հիմքերի վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ գործող օրենսդրության մեջ առկա բացերը խոչընդոտում են բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի արդյունավետ գործառնմանը և, հատկապես, ՀՀ-ում կրթության որակի բարելավմանն ու բուհերի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Սույն ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ գործող օրենքներում կրթության որակին վերաբերող հասկացությունները ժամանակավրեպ են և չեն համապատասխանում ներկայիս իրողություններին, հետևաբար հրատապ է այդ հասկացությունների վերանայումը:

Ի լրումն վերոնշյալի՝ գործող օրենքով սահմանափակվում են ՀՀ-ում որակի ապահովման (հավատարմագրման) գործընթացները, տուժում են բարձրագույն կրթության միջազգայնացմանն ուղղված միջոցառումները: Ընդհանուր առմամբ, նշված օրենսդրական խնդիրները անհնարին են դարձնում ՀՀ՝ ԵԲԿՏ-ին ամբողջությամբ ինտեգրումը՝ առաջ բերելով որակի ապահովման գործընթացների կազմակերպման և իրականացման մի շարք խոչընդոտներ:

Գրականության ցանկ

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 16 մարտի 2016, ՀՕ-34-Ն, 01.նոյեմբեր.2022:
2. Շահինյան Ա., «Մտավոր սեփականության կրթության կազմակերպման նախադրյալները և ռազմավարական մոտեցումները ՀՀ բուհերում»: Բանբեր Երևանի Վ. Բյուսովի անվան

պետական լեզվահասարակագիտական համալսարանի: Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(41), Եր., Լինգվա, 2017, էջ 114-137:

3. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 20 հոկտեմբեր 2022, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=103999>
4. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, 20 հոկտեմբեր 2022, <https://www.e-draft.am/projects/4788/about>
5. ENQA Agency Review: National Center for Professional Education Quality Assurance Foundation). 20 հոկտեմբեր 2022, <https://www.enqa.eu/wp-content/uploads/ANQA-external-review-report.pdf>.

THE ISSUES OF LEGISLATIVE REGULATION OF RA HIGHER EDUCATION QUALITY ASSURANCE SECTOR IN THE CONTEXT OF EDUCATIONAL REFORMS

Tatevik Movsisyan

Researcher

BSU, Chair of Education Management and Planning

tatevmovsisyan1907@gmail.com

Abstract

In this article, the legislative bases of the field of RA higher education quality assurance were analyzed and a number of issues were identified that limit the activities of the quality assurance entities, hinder the spread, strengthening and development of the quality culture in the Republic of Armenia, the improvement of the education quality as well as the refinement of efficiency, competitiveness, accountability and transparency of the higher education system.

	Պատրաստի արտադրանքի իրացումը համապատասխան տարվա ընթացիկ գներով, այդ թվում՝ միլիարդ դրամ	1345.8	1420.4	1645,2	1722,4	2068,1	2054,9	2388,7
	2	3	4	5	6	7	8	9
	ԱՊՀ երկրներում	85,7	120,6	167,6	168,4	203,3	186,1	219,8
	ԵԱՏՄ	-	-	-	157,2	186,2	171,5	201,4
	Այլ երկրներ	441,7	486,4	575,1	619,3	659,4	706,1	834,6

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

		2015	2016	2017	2018	2019	2020	2021
Խմիչքների արտադրություն	ՀՀ ամբողջ արդյունաբերական արտադրանքի ծավալը ընթացիկ գներով, միլիարդ դրամ	102.7	102,8	149,2	152,6	184,6	163,1	201,9
	Պատրաստի արտադրանքի իրացումը համապատասխան տարվա ընթացիկ գներով, այդ թվում՝ միլիարդ դրամ	103.0	103	150,9	156,5	186,3	162,3	206,7
	ԱՊՀ երկրներում	43.4	43,4	80,9	78,5	92,9	86,8	113,6
	ԵԱՏՄ	-	-	-	70,8	92,8	80,2	102.8
	Այլ երկրներ	9.9	13.0	14,1	15,1	21,3	21,6	27,3
		2015	2016	2017	2018	2019	2020	2021
Ավտոհուլային խմիչքների արտադրություն	ՀՀ ամբողջ արդյունաբերական արտադրանքի ծավալը ընթացիկ գներով, միլիարդ դրամ	57.3	67.6	98.1	97.5	126.8	105.8	134.5
	Պատրաստի արտադրանքի իրացումը համապատասխան տարվա ընթացիկ գներով, այդ թվում՝ միլիարդ դրամ	58.2	67.4	99.8	101.1	128.1	108.9	137.3
	ԱՊՀ երկրներում	37.1	46.1	70.0	68,9	93.2	77.5	100.8
	ԵԱՏՄ	-	-	-	61.5	82.8	70.9	91.4
	Այլ երկրներ	8.7	10.1	12.3	12.9	18.6	18.7	23.0

ՀՀ արդյունաբերությունը, խմիչքների և ավտոհուլային խմիչքների արտադրությունը 2015-2021թթ. [Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշները]

Ձեռնարկատիրական գործունեությունն ընդգրկում է հասարակական պահանջմունքների բավարարմանը, սակայն նրա անմիջական նպատակը նյութական շահն է, որն արտա-


ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

հայտվում է առավելագույն շահույթ ստանալու ձգտումով: Վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն ՀՀ-ում ալկոհոլային խմիչքների արտադրության ոլորտում ակտիվ ձեռնարկատիրական գործունեություն են իրականացնում հինգ տասնակից ավելի փոքր, միջին և խոշոր կազմակերպություններ, որտեղ արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը 2021թ. գերազանցեց 10 000 մարդու շեմը:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս 2015-2021թթ ՀՀ-ում արտադրված ալկոհոլային խմիչքների ծավալը՝ բնեղեն արտահայտությամբ: Այս ժամանակահատվածում նկատելի են ցուցանիշների կտրուկ նվազում՝ հատկապես պայմանվորված 2020թ. համավարակով և պատերազմով: 2020-2021թթ հիմնականում կոնյակ, գի-

նի և զարեջուր ապրանքնատեսակների արտադրության ծավալն է ավելացել: Մյուս ապրանքատեսակների մասով նկատվում է նվազում: 2015-2021թթ էթիլային սպիրտի արտադրությունը ավելացել է 114 %, սակայն 2018-2019թթ կրճատվել է 36.3 % և 74.5%: 2020թ էթիլային սպիրտի արտադրությունը 2015թ նկատմամբ ավելացել է 2.4 անգամ, իսկ 2021թ. նկատմամբ՝ կրճատվել 2.8 անգամ: 2015-2021 թթ օղու, լիկյորի և վիսկիի արտադրությունը ՀՀ-ում հիմնականում կայուն տեմպերով նվազել է: 2021թ. ՀՀ-ում արտադրված ալկոհոլային խմիչքների արտադրության կառուցվածքում 48.7 % մասնաբաժինը պատկանում է կոնյակի արտադրությանը, 29.4%՝ զարեջրին, 13.7 %՝ գինու արտադրությանը և այլն: 2021թ. ՀՀ-ում դադարել է լիկյորի արտադրությունը:

Գծապատկեր 1.



ՀՀ-ում ալկոհոլային խմիչքներ արտադրող և արտահանող կազմակերպությունների հարկային և մաքսային մուտքերը ՀՀ պետական բյուջե 2021թ., հազար դրամ

2015-2021թթ. ՀՀ ամբողջ արդյունաբերական արտադրանքի ծավալների աճին զուգընթաց ավելացել է նաև ՀՀ-ում ընդհանուր

խմիչքների և ալկոհոլային խմիչքների արտադրությունն ու իրացումը: 2015թ. ՀՀ ամբողջ արդյունաբերական արտադրանքի

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

1343.3 միլիարդ դրամի 57.3 միլիարդ դրամը պատկանում է ակտիվության խմբիներին (4.3%), 2016թ. 1429 միլիարդից՝ 67.6 միլիարդ դրամ (4.7%), 2017թ. 1662.1 միլիարդից՝ 98.1 միլիարդ դրամ (5.9%), 2018թ. 1737.7 միլիարդից՝ 97.5 միլիարդ դրամ (5.6%), 2019թ. 2087.7 միլիարդից՝ 126.8 միլիարդ դրամ (6.1%), 2020թ. 2070.3 միլիարդից՝ 105.8 միլիարդ դրամ (5.1%), 2021թ. 2385.9 միլիարդից՝ 134.5 միլիարդ դրամ (5.6%): Այսպիսով, 2015-2021թթ ՀՀ մշակող արդյունաբերական արտադրության կառուցվածքում տարեց տարի ավելացել է ակտիվության խմբի արտադրության մասնաբաժինը:

Աղյուսակ 2-ում ներառված են Հայաստանի Հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալի, ակտիվության և այլ խմբիների արտադրության ծավալի և իրացման ուղղությունների 2015-2021 թվականների դինամիկան: Քանի որ ներկայումս ՀՀ-ն հանդիսանում է ԵԱՏՄ անդամ երկիր և ամենափոքր տնտեսական կապերը հենց այս մաքսային միության հետ են կապված, աղյուսակ 2-ից առանձնացնենք ակտիվության խմբի արտադրության ԵԱՏՄ տարածք: Արդյունքն արտացոլենք աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

2018	2019	2020	2021
61.5	82.8	70.9	91.4

ՀՀ-ից ԵԱՏՄ տարածք ակտիվության խմբի արտադրության դինամիկան, ընթացիկ գներով, մլրդ դրամ [Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշները]

Համաձայն աղյուսակ 3-ի տվյալների՝ կատարել ենք դինամիկայի շարքի վերլուծական ցուցանիշների հաշվարկ, որը ներկայացնում ենք ստորև:

Բացարձակ հավելված՝ բազիսային: Որպես բազիսային ցուցանիշ ընտրենք 2018 թվականի ցուցանիշները:

$$\Delta y_{i/i-t2018} = 61.5 - 61.5 = 0.0$$

$$\Delta y_{i/i-t2019} = 82.8 - 61.5 = 21.3$$

$$\Delta y_{i/i-t2020} = 70.9 - 61.5 = 9.4$$

$$\Delta y_{i/i-t2021} = 91.4 - 61.5 = 29.9$$

Բացարձակ հավելված՝ շղթայական:

$$\Delta y_{i/i-12019} = 82.8 - 61.5 = 21.3$$

$$\Delta y_{i/i-12020} = 70.9 - 82.8 = -11.9$$

$$\Delta y_{i/i-12021} = 91.4 - 70.9 = 20.5$$

Աճի տեմպ՝ բազիսային: Որպես բազիսային տարի ընտրենք 2018 թվականի ցուցանիշները:

$$y_{i/i-t2018} = \frac{61.5}{61.5} 100\% = 1.000 \text{ կամ } 100.0 \%$$

$$y_{i/i-t2019} = \frac{82.8}{61.5} 100\% = 1.346 \text{ կամ } 134.6 \%$$

$$y_{i/i-t2020} = \frac{70.9}{61.5} 100\% = 1.153 \text{ կամ } 115.3 \%$$

$$y_{i/i-t2021} = \frac{91.4}{61.5} 100\% = 1.486 \text{ կամ } 148.6 \%$$

Աճի տեմպ՝ շղթայական:

$$y_{i/i-12019} = \frac{82.8}{61.5} 100\% = 1.346 \text{ կամ } 134.6 \%$$

$$y_{i/i-12020} = \frac{70.9}{82.8} 100\% = 0.856 \text{ կամ } 85.6 \%$$

$$y_{i/i-12021} = \frac{91.4}{70.9} 100\% = 1.289 \text{ կամ } 128.9 \%$$

Հավելվածի տեմպ՝ բազիսային: Որպես բազիսային տարի ընտրենք 2018 թվականի ցուցանիշները:

$$T_{npy_{i/1}2018} = \frac{61.5 - 61.5}{61.5} 100\% = 0.000 \text{ կամ } 0 \%$$

$$T_{npy_{i/1}2019} = \frac{82.8 - 61.5}{61.5} 100\% = 0.346 \text{ կամ } 34.6 \%$$

$$T_{npy_{i/1}2020} = \frac{70.9 - 61.5}{61.5} 100\% = 0.153 \text{ կամ } 15.3 \%$$

$$T_{npy_{i/1}2021} = \frac{91.4 - 61.5}{61.5} 100\% = 0.486 \text{ կամ } 48.6 \%$$

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հավելաճի տեմպ՝ շրթայական:

$$T_{\text{նրբ}/i/i-1}^{2019} = \frac{82.8 - 61.5}{61.5} 100\% = 0.346 \text{ կամ } 34.6\%$$

$$T_{\text{նրբ}/i/i-1}^{2020} = \frac{70.9 - 82.8}{82.8} 100\% = -0.144 \text{ կամ } -14.4\%$$

$$T_{\text{նրբ}/i/i-1}^{2021} = \frac{91.4 - 70.9}{70.9} 100\% = 0.289 \text{ կամ } 28.9\%$$

Դինամիկայի շարքի 1% բացարձակ հավելաճ:

$$A|\%|_{2019} = \frac{1}{100} 61.5 = 0.615$$

$$A|\%|_{2020} = \frac{1}{100} 82.8 = 0.828$$

$$A|\%|_{2021} = \frac{1}{100} 70.9 = 0.709$$

Վերլուծական ցուցանիշների արդյունքները արտացոլենք աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Տարեթիվ	Ցուցանիշ	Բացարձակ հավելաճ, մլրդ դրամ		Աճի տեմպ, %		Հավելաճի տեմպ, %		1% հավելաճի տեմպ A \% , մլրդ դրամ
		բազ	շղթ	բազ	շղթ	բազ	շղթ	
2018	61.5	0.0	-	100.0	-	0.0	-	-
2019	82.8	21.3	21.3	134.6	134.6	34.6	34.6	0.615
2020	70.9	9.4	-11.9	115.3	85.6	15.3	-14.4	0.828
2021	91.4	29.9	20.5	148.6	128.9	148.6	28.9	0.709

«Հ-ից ԵԱՏՄ տարածք ակոհոլային խմիչքների արտահանման դինամիկայի վերլուծական ցուցանիշների հաշվարկը»

Հայաստանի Հանրապետությունից ԵԱՏՄ տարածք 2018-2021 թվականների կտրվածքով ակոհոլային խմիչքների արտահանման դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախորդ տարիների համեմատ արտահանման ծավալի անկում կա միայն 2020 թվականին: Նախորդ՝ 2019 թվականի համեմատ անկումը կազմել է 14,4% կամ շուրջ 11,9 միլիարդ դրամ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում ակոհոլի արտահանման ծավալների ամենամեծ աճը գրանցվել է 2019 թվականին: 2018 թվականի համեմատ արտահանման ծավալը աճել է 21,3 մլրդ դրամով կամ 34,6%-ով:

Ակոհոլային խմիչքների արտադրության ոլորտը ՀՀ հասարակական տնտեսական համակարգում ընդգծվում է ոլորտում գործող կազմակերպությունների կողմից ՀՀ պետա-

կան բյուջե հավաքագրված հարկային եկամուտների ու տուրքերի կայուն մասնաբաժնով: Այս հանգամանքը պայմանավորված է ինչպես ակոհոլային խմիչքների արտադրության ծավալների մեծությամբ և մեծաթիվ աշխատողների աշխատավարձից վճարվող եկամտային հարկի մեծությամբ, այնպես էլ ներկայում ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի բարձր դրույքաչափերով: Գծապատկերում ներկայացված են 2021թ. ՀՀ-ում ակոհոլային խմիչքների արտադրության և արտահանման ոլորտում գործող կազմակերպությունների կողմից վճարված մուտքերը (հարկային և մաքսային) պետական բյուջե, որոնք ներառվել են ՀՀ-ում 1000 խոշոր հարկատուների ցանկում [ՀՀ պետական եկամուտների կոմիտե]: Այսպիսով, ՀՀ-ում ակոհոլային խմիչքներ արտադրող կազմա-

կերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ու տուրքերի ծավալները կայուն կերպով ավելացել են, որն էլ ուղղակիորեն նպաստում է պետության ֆինսկալ քաղաքականության արդյունավետության բարձրացման ապահովմանը: Այս կազմակերպությունների կողմից վճարվող հարկերը տարեցտարի ավելանում են ոլորտի առանձնահատկությամբ՝ պայմանավորված ակցիզային հարկի դրույքաչափերի ավելացման շնորհիվ:

Եզրակացություն

Հոդվածում կատարված վերլուծությունների արդյունքում կարող ենք փաստել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում (2015-2021թթ) Հայաստանի Հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին զուգընթաց ավելացել է նաև ՀՀ ում ակոհոլային և ոչ ակոհոլային խմիչքների արտադրության ծավալը: Մասնավորապես 2015 թվականին ՀՀ ամբողջ արդյունաբերական արտադրանքի՝ 1343.3 միլիարդ դրամից 57.3 միլիարդ դրամը պատկանում է խմիչքներին (4.3%): 2016 թվականին այս ցուցանիշը շարունակել է աճել և ամբողջ արդյունաբերական արտադրանքի՝ 1429 միլիարդի 67.6 միլիարդ դրամը (4.7%) կազմել է ակոհոլային և այլ խմիչքների արտադրությունը: 2017 թվականին խմիչքների արտադրության մասնաբաժինը նույն ցուցանիշում կազմել է 98.1 միլիարդ դրամ (5.9%), իսկ 2018 թվականին՝ 97.5 միլիարդ դրամ (5.6%): 2021թվականին ՀՀ արդյունաբերական արտադրանքի (2385.9 միլիարդ դրամ) 134.5 միլիարդ դրամը կամ 5.6%-ը գոյացել է ակոհոլային և ոչ ակոհոլային խմիչքների արտադրության հաշվին:

Պետք է փաստենք, որ ակոհոլի արտադրության ծավալի աճին նպաստել է նաև արտահանման ծավալների աճը: Քանի որ ներ-

կայումս Հայաստանի Հանրապետությունը տնտեսական ամենասերտ կապերը ունի ԵԱՏՄ-ի հետ, հոդվածում վերլուծել ենք նաև նշված մաքսային միության տարածք ակոհոլային խմիչքների արտահանման դինամիկան: Ըստ որի՝ նախորդ տարիների համեմատ արտահանման ծավալի անկում կա միայն 2020 թվականին: Նախորդ՝ 2019 թվականի համեմատ անկումը կազմել է 14,4% կամ շուրջ 11,9 միլիարդ դրամ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում ակոհոլի արտահանման ծավալների ամենամեծ աճը գրանցվել է 2019 թվականին: 2018 թվականի համեմատ արտահանման ծավալը աճել է 21,3 մլրդ դրամով կամ 34,6%-ով:

Այսպիսով, ակոհոլային խմիչքները մարդկությանը հայտնի են արդեն մի քանի հազարամյակ, որի մասին խոսվել է տարբեր ժամանակներում: ՀՀ-ում ակոհոլային խմիչքների արտադրությունը ՀՀ վերամշակող արդյունաբերության եկամտաբեր բնագավառներից է, իսկ ակոհոլային խմիչքների սպառումն ու արտադրությունը բավականին զարգացած էր ինչպես խորհրդային ժամանակաշրջանում, այնպես էլ անկախացման տնտեսական և քաղաքական բարեփոխումներից հետո: Ակոհոլային խմիչքների արտադրության և արտահանման կարևորությունը ՀՀ տնտեսական և սոցիալական կյանքում դրսևորվում է ՀՀ-ում տարեցտարի ակոհոլային խմիչքների արտադրության և արտահանման ծավալների ավելացմամբ, արտահանման գործընթացում արտաքին առևտրային կապերի ձևավորմամբ, ոլորտում զբաղվածների թվի ավելացմամբ, ոլորտում գործող կազմակերպությունների կողմից վճարվող հարկային և մաքսային մուտքերով. վերջիններս կարևոր նախադրյալներ են երկրի տնտեսական և սոցիալական կայունացման ու զարգացման համար:

Գրականության ցանկ

1. Алексеев В., Алкогольные напитки домашнего приготовления, по письмам эхоконференции SU.KITCHEN, 2007
2. Алкогольные напитки и культура питания. Систематическая энциклопедия от Алкофана, «Издательские решения», Юлия Николаевна Чухвичева, перевод, 2018
3. Бурм Дэйв, Крепкие алкогольные напитки мира, Иллюстрированный путеводитель, «ЭКМО», 2004
4. Сакадынский С., Когда стакан наполовину полон, О самогонварении на основе личного опыта, 2004
5. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ, ՀՀ վիճակագրական կոմիտե, 10 հոկտեմբերի 2022թ., <https://armstat.am>
6. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշները ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման 2015-2021թթ., ՀՀ վիճակագրական կոմիտե, 10 հոկտեմբերի 2022թ., <https://armstat.am>
7. ՀՀ պետական եկամուտների կոմիտե, 10 հոկտեմբերի 2022թ., <https://www.petekamutner.am>

ECONOMIC AND SOCIAL SIGNIFICANCE OF THE PRODUCTION AND EXPORT OF ALCOHOLIC BEVERAGES IN RA

Anna Parsyan

PhD in Economics

ANAU, Department of Agribusiness Management and Policy

annaparsyan85@mail.ru

Suren Parsyan

Associate Professor

ASUE, Department of Microeconomics

surenparsyan2017@gmail.com

Armen Grigoryan

Researcher

ASUE, Chair of International Economic Relations

Razmik Aharonyan

ASUE College of Finance and Economics

razmik.aharonyan94@gmail.com

Abstract

Alcoholic drinks are methylated alcohol containing beverages. There are various types of famous alcoholic beverages, which are rather widespread and have a high consumption level almost in all countries; most of them are produced through fermentation technology. They are used not only as a beverage, but also in the form of cocktails and in cuisine. However, the abuse of alcoholic beverages can become the cause of some diseases and societal and economic problems .

Production of alcoholic beverages is one of the most profitable branches in the RA processing industry, and the production of alcoholic beverages in Armenia has a millennial history. The diversity of the country's natural and climatic conditions enables to get high-quality raw material. The relevance and urgency of the topic discussed in the current article is justified upon the specific weight of alcoholic product ranges in the

overall industrial product of the RA, which amounted to 5.6 % in 2021 as compared to the index of 4.3 % recorded in 2015. The entrepreneurial activities of alcoholic beverage producing and exporting companies are not only of economic but also of social significance for our country. Thousands of work positions have been established and hence, unemployment rate has been somewhat reduced. On the background of actuality and urgency of the current topic the market of alcoholic beverages, export and consumption indices have been studied.

The article also considers the main production types of alcoholic drinks in kind. Dynamics of the indices has been analyzed and the data on the alcoholic drinks published by the statistical committee have been outlined. The economic and social significance of the organizations engaged in the entrepreneurial activities in the alcoholic beverage production branch per the tax and customs revenues in the RA state budget has been identified.

Keywords: alcoholic beverages, market, business activity, production, export, import

*Ներկայացվել է՝ 20.10.2022թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 04.11.2022թ.*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան

ի.գ.դ., պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Նորիկ Էդիկի Շահնազարյան

հայցորդ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

norik.shaxnazaryan@yandex.ru

Ամփոփագիր

Հողվածում հանգամանորեն քննարկվում են սահմանադրության դրույթների նորմատիվության հիմնախնդիրները: Սահմանադրության իրագործումը կապված է նրա հրահանգավորումների իրավական բնույթի ու առանձնահատկությունների, դրանց նորմատիվության գնահատման հետ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանցից ոմանք, իրենց մեծ նշանակությամբ հանդերձ չեն կարող ճանաչվել որպես իրավունքի նորմեր: Դրանք առաջին հերթին սահմանադրության այն դրույթներն են, որոնք ամրագրում են իրավունքի սկզբունքները, բնորոշում հիմնական իրավական հասկացությունները իրավական նորմերի գործողության ժամանակային, տարածքային և սուբյեկտիվ սահմանները, դրույթներ են պարունակում նպատակների վերաբերյալ և այլն:

Կարծում ենք, որ սահմանադրության ոչ բոլոր դրույթներն են սահմանում հասարակական հարաբերությունների մասնակիցների հստակորեն նախորոշված իրավունքներն ու պարտականությունները: Սակայն արդյոք դա նշանակում է, որ դրանք չունեն նորմատիվության հատկանիշ: Հաշվի առնելով սահմանադրության իրավաբանական բնույթի առանձնահատկությունը և նրա դերը իրավական կարգավորման մեխանիզմում, այս հարցի պատասխանը, ըստ մեզ, պետք է լինի հետևյալը, քանի որ սահմանադրությունն ամբողջությամբ օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով, հետևաբար նրա առանձին դրույթներն ու նորմերը, այդ թվում՝ նորմ-սկզբունքները, նորմ-նորմատիվները նույնպես օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով և իրավակիրառ պրակտիկայում դրանք ենթակա են պարտադիր գործադրման:

Հիմնաբառեր. սահմանադրության դրույթներ, նորմ-սկզբունքներ, նորմ-նպատակներ, վարքագծի պարտադիր կանոններ, սահմանադրական նորմեր, ուղենիշներ, մարտահրավերներ:

Ներածություն

Հողվածի արդիականությունը կայանում է նրանում, որ ժամանակակից գիտական հետազոտություններում ընդգծվում է վերածնված հետաքրքրությունը սահմանադրության հիմնահարցի նկատմամբ: Սահմանադրու-

թյունը դառնում է անհրաժեշտ նախապայմանը՝ իրավունքի գերակայության հաստատման գործընթացում:

Հողվածի նպատակն է հիմնավորել, որ Սահմանադրության բոլոր դրույթները, այդ թվում՝ նախաբանը, նորմ – սկզբունքները,

նորմ – նպատակները իրենց էությամբ ու բովանդակությամբ նորմատիվ են, այսինքն՝ վարքագծի պարտադիր սահմանադրավական նորմեր են, ինչպես սահմանադրության մյուս նորմերը: Հետևաբար, սահմանադրության բոլոր նորմերը նորմատիվ են և պարտադիր են կատարման:

Հետազոտության առարկան է՝ ՀՀ Սահմանադրության զարգացման հիմնական ուղենիշները և արդի մարտահրավերները՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Իրավունքի մեջ արտահայտված կամքի համընդհանրությունը հանդես է գալիս որպես հասարակական կարգավորման իրավական ձևի նորմատիվություն:

Պարտադիրությունը և իշխանությունը բնորոշում են հանրաքվեում արտահայտված և ՀՀ Սահմանադրության մեջ որպես պետական կամք ամրագրված ժողովրդի կամքը: Դա սահմանադրության, որպես հիմնական օրենքի, կարևորագույն հատկանիշներից մեկն է: Սահմանադրության, ինչպես ընդհանրապես իրավունքի մեջ, վարքի չափը (մասշտաբը) սոցիալական հիմնավորվածության և սոցիալական անհրաժեշտության, իրավական մոդել է, որը պարտադիր է դառնում անձանց ու կազմակերպությունների համար: Ընդ որում իրավունքի, հետևապես նաև Սահմանադրության, նորմատիվությունը արտահայտվում է վարքի կանոնների այնպիսի հատկությունների միասնականության մեջ, ինչպիսիք են ընդհանրականությունը և պարտադիրությունը:

Իրավունքի ժամանակակից զարգացման պայմաններում տեղի է ունենում նորմատիվության բովանդակության հստակեցում [*Зорькина*]: Իրավունքի կառուցվածքի մեջ ավելանում են ընդհանրացնող դրույթների թիվը, որոնք, որպես այդպիսին, զուրկ են նորմի

հատկանիշներից ավանդական ըմբռնմամբ: Սակայն դրանք ևս իրենցից ներկայացնում են ամբողջությամբ վերցված իրավական համակարգի օրգանական մասնիկներ, արտահայտում են նրա նորմատիվությունը: Սահմանադրական օրենսդրության մեջ քաղաքացիների և իրավունքի այլ սուբյեկտների վարքի կոնկրետ տարբերակներ սահմանող հրահանգավորումների հետ մեկտեղ պարունակվում են բավականին մեծ թվով իրավական հոչակագրեր, սկզբունքներ, բնորոշումներ, որոնք ունեն իրավաբանական նշանակություն և հատուկ դեր են կատարում իրավական կարգավորման գործում:

Սահմանադրությունը օրենքների ժողովածու չէ և այդ իսկ պատճառով ի վիճակի չէ ընդգրկել հասարակության մեջ գործող հարաբերությունների ողջ համակարգը՝ այդ հարաբերությունների մասնակից սուբյեկտների կոնկրետ իրավունքների ու պարտականությունների սահմանման ճանապարհով: Այն ինտեգրում է հասարակական հարաբերությունները և միաժամանակ «խոշորացնում» իրավունքներն ու պարտականությունները, ձևափոխելով դրանք որպես սուբյեկտների առանձին տեսակների վարքի ընդհանրացված գնահատականների: Նման հրահանգավորումները տեղափոխում են հասարակական հարաբերությունների զարգացումը որոշակի իրավաբանական շրջանակների մեջ և ստեղծում այդ զարգացման ղեկավար սկզբունքները: Նման սահմանադրական հրահանգավորումների նորմատիվությունը կայանում է նրանում, որ դա հասարակական հարաբերությունների կարևորագույն կատեգորիայի համար առավել ընդհանրացված, պետության և պետական հարկադրանքի հնարավորությամբ ապահովված անձանց կամ կազմակերպությունների հնարավոր կամ պատշաճ վարքի իրականորեն գոյություն ունեցող մասշտաբների (չափի) համակարգ է:

Սահմանադրության մեջ ընդհանուր դրույթների, սկզբունքների, բնորոշումների առկայությունը ոչ միայն չի զրկում այն նորմատիվությունից, այլև ընդհակառակը վկայում է նրա մեջ նորմատիվայնության առավել լայն կիրառման մասին: Սահմանադրական սկզբունքները նորմատիվացնում, ընդհանրացնում են հասարակության նյութական ու հոգևոր կյանքի առավել կարևոր, սոցիալական նշանակալից երևույթներն ու գործընթացները, գնահատում են դրանք և ուղղում պետության մեջ ընդունված նորմատիվների հունի մեջ [Хабриева, Чиркин]: Դրանք ամենատեսակետով կապված են հասարակական հարաբերությունների կարգավորման հետ, ուղղորդիչ ազդեցություն են գործում իրավական համակարգի վրա և գործում են հենց որպես իրավական սկզբունքներ, որոնցով պարտավոր են ղեկավարվել իրավաստեղծ, իրավակիրառող և իրավապահ մարմինները, քաղաքացիները, պաշտոնատար անձինք և հասարակական միավորումները: Սկզբունքները միշտ ունեն նորմատիվ բնույթ և հենց դրանով էլ տարբերվում են իրականության հասարակ արձանագրումից:

Նորմատիվային են նաև սահմանադրական ծրագրային սահմանումները, քանի որ դրանք համապարտադիր ազդեցություն են գործում հասարակական հարաբերությունների զարգացման հեռանկարի վրա ամրագրելով իրավական ուղենիշները և նպատակադրումները իրավական կարգավորման և իրավակիրառ-գործունեության ընդհանրական կազմակերպման համար:

Սահմանադրության նորմատիվությունն արտահայտվում է նաև նրանում, որ այն իրենից ներկայացնում է կոդիֆիկացված օրենք և քանի որ կարգավորում է հասարակական հարաբերությունների լայն շրջանակ, ապա հենց դրա շնորհիվ էլ ստանում է ինտեգրող բնույթ: Սահմանադրությունը հանդես է գալիս

որպես օրենսդրության համակարգի ղեկավարությունն իրականացնող ակտիվ կենտրոն: Բնական է, որ այս նշանակությունը նաև կարող է կատարել միայն նրա նորմատիվ-իրավական բնույթի ճանաչման դեպքում: Սահմանադրությունը քաղաքական-իրավական համակարգի հիմքն է: Կանխորոշելով երկրի իրավական համակարգի զարգացման հիմնական ուղղությունները, սահմանադրությունը ծառայում է ողջ երկրի մասշտաբով պետական և հասարակական կյանքի իրավական հիմքերի ամրապնդմանը:

Նորմատիվության մեջ է կայանում սահմանադրության սոցիալական արժեքի գլխավոր առանձնահատկություններից մեկը: Սահմանադրության նորմերի իրագործումը նրա նորմատիվության յուրատեսակ փոխադրումն է դեպի հասարակական հարաբերությունների կանոնակարգվածություն: Նորմատիվության ժխտումը ավտոմատ կարգով բերում է սահմանադրության թերագնահատմանը, նրա կարգավորիչ հնարավորությունների նվազեցմանը, ցածրացնում է հասարակական հարաբերությունների վրա նրա ազդեցության արդյունավետությունը:

Անթույլատրելի է Սահմանադրության նորմատիվության նշանակության նույնիսկ անուղղակի, թաքնված թերագնահատումը: Այն շատ հեշտ է հայտնաբերել լայնորեն տարածված «Սահմանադրությունը, նախևառաջ, քաղաքական ակտ է» թեզում: Կասկած չկա, սահմանադրությունը ոչ միայն հիմնական օրենք է, այլ նաև կարևորագույն քաղաքական փաստաթուղթ: Այնուամենայնիվ, սահմանադրության առաջնային և հիմնական նշանակությունն է՝ լինել նորմատիվային փաստաթուղթ, հիմնական օրենք: Նրանք, ովքեր պահպանում են սահմանադրության էության քաղաքական առումը, իրենց տեսակետը հիմնավորում են նրանով, որ այն կարգավորում է քաղաքական նշանակություն ունեցող առա-

վել կարևոր հասարակական հարաբերությունները: Սակայն չպետք է մոռանալ, որ դա ոչ միայն քաղաքական, այլև իրավաբանական խնդիր է, որի լուծման համար օգտագործվում են առանձնահատուկ միջոցներ: ՀՀ Սահմանադրության իրավաբանական հատկությունների տարրալուծումը նրա հասարակական-քաղաքական նշանակության մեջ չի նպաստի իրավական համակարգում նրա առաջնայնության և գերակայության հաստատմանը: Սահմանադրական դրույթները համապատասխանում են իրավունքի նորմատիվության պահանջներին, ինչը ներկայացնում է նրա այն հատկությունը, որն արտահայտում է իրավական պահանջների համապարտադրությունը, ամրագրում է մարդկանց վարքի մասշտաբը, նշանավորում է պետական և իրավական սահմանումների միասնությունը:

Սահմանադրական դրույթների նորմատիվ բնույթի գնահատման հետ է կապված այնպիսի կարևոր մի հարց, ինչպիսին է սոցիալական սուբյեկտների վարքի վրա նորմերի ազդեցությունը: Սկզբունք-նորմերը, նպատակ-նորմերը և բնորոշում-նորմերը իրենց էությանը չեն կրում վարքային բնույթ և վարքի կանոններ չեն սահմանում, գրում է Ն. Ս. Միխալևան [Михалева, 19]: Նման պնդման հետ դժվար է համաձայնվել: Իրենց արտաքին արտահայտման առանձնահատկություններով հանդերձ սահմանադրական դրույթները բնորոշում են սոցիալական օբյեկտների վարքի հիմնական պարամետրերը (նպատակները, սահմանները, եղանակները, պայմանները) հասարակական ու պետական կյանքի առավել կարևոր ոլորտներում: Սահմանադրության որոշ նորմերի վարքային բնույթը թաքնված է, քողարկված, սակայն դա ամենևին չի նշանակում, որ նրանք վարքի կանոններ չեն սահմանում: Բանն այն է, որ սոցիալական սուբյեկտների վրա նման նորմերի սահմանման եղանակները, արտահայտության ձևերը,

ներագրման մեխանիզմները անչափ բազմազան են: Դրանցից ոմանք սահմանում են միանգամայն կոնկրետ ձևով, մյուսները պակաս կոնկրետ են, երրորդները կողմնորոշում են, կան և այնպիսիներ, որ միայն անուղղակիորեն են ազդում վարքի վրա: Սակայն ամբողջովին զրկել սահմանադրության դրույթների նույնիսկ մի մասը իրենց հատուկ վարքային բնույթից, անընդունելի է: Դա կհակասեր տեսությանը, քանի որ «կանոններ» արտահայտության մեջ պարունակվում է կարգի (օրինաչափի հետևողականության), կանխորոշվածության, պարտադիրության նշանակություն [Плахов, 42]: Բացի այդ, նման բացառությունը կթուլացնի սահմանադրության կարգավորիչ ներուժը:

Սահմանադրական նորմերը արտացոլում են հասարակական պրակտիկայում ձևավորված վարքի հաստատուն տեսակների ամրագրման նպատակները: Այդ նպատակները մասնավորապես ուղղված են վարքի փաստացի ձևերի կայունացմանը և հետագա ամրապնդմանը, դրանցից շեղումների դեմ պայքարին, բնակչությանը վարքի օպտիմալ մոդելների մասին իրազեկմանը, փոխկապակցված նորմերի և իրավունքի ինստիտուտների համակարգի զարգացմանը [Кудрявцев, 16]: Նույնիսկ ամենաընդհանուր տեսքով արտահայտված սկզբունք-նորմերը, բնորոշում-նորմերը ունեն վարքային բնույթ, քանի որ դրանցում պարունակվող սահմանումների հետ պետք է հարաբերեն իրենց վարքը, իրենց գործունեությունը ցանկացած սոցիալական սուբյեկտներ: Վարքի կոնկրետ կանոնների հետ մեկտեղ սահմանադրական նորմերը նախատեսում են պահանջներ գործողությունների նպատակների, եղանակների և ձևերի վերաբերյալ, ստեղծում են հասարակական կողմնորոշված վարքի ինստիտուցիոնալ ձևեր, վարքի որոշակի պատճառաբանվածություն, քաղաքացիների, կոլեկտիվների կա-

պերի զանազան տարբերակների մոդելներ: Սահմանադրական նորմերին ամբողջապես կարելի է վերագրել եզրակացությունն առ այն, որ սոցիալական բոլոր պահանջները ձևակերպվում են որպես անհատների ու սոցիալական հանրությունների վարքի նորմեր: Սահմանադրական նորմերը հանդես են գալիս հասարակության կողմից դրանց վարքը վեահսկելու միջոց: Դրանք ունեն կառավարչական զգալի ներուժ, որը ցավոք, դեռ բավական չափով պահանջարկված չէ:

Ն.Ա. Միխալևայի տեսակետին մոտիկ դիրքորոշում ունի Լ.Ա. Մորոզովան: Ճանաչելով սահմանադրական դրույթների նորմատիվությունը, սահմանադրական կարգավորման նորմատիվ հիմքի բոլոր բաղադրիչների միայն «նորմեր» անվանումը նա համարում է ոչ այնքան ճիշտ, քանի որ նման ունիֆիկացումը իբր աղքատացնում է նրա բնութագրականը [Морозова, 51-55]: Հենց այստեղից է, որ հիմնական օրենքի դրույթների մի մասն է միայն դիտվում որպես «բուն սահմանադրական նորմեր», իսկ մնացյալները (սահմանադրական սկզբունքները, ծրագրային-նպատակային սահմանումները, նորմատիվ-իրավական դրույթները) այդ պատվին չեն արժանանում: Կարծում ենք, նման հակադրման համար լուրջ հիմքեր, այնուամենայնիվ, չկան: Վերջ ի վերջո, չի կարելի իրավական նորմերի մեջ տեսնել ինչ-որ թերի, անլիարժեք մի բան: Այդ պատճառով անհասկանալի է, թե իրավական նորմը ինչպես և ինչու պետք է «աղքատացնի» սահմանադրությունը: Խնդիրն այսօր ոչ թե իրավունքի ինչ-որ դոգմատիվ հայեցակետ «գահընկեց» անելն է, այլ նորմատիվիստական մոտեցումը հաղթահարելն է: Ավելի շուտ ընդհակառակը: Իրավունքի ցածր օգտակար գործողության գործակիցը կապված է այն բանի հետ, որ մենք դեռ բավական չենք զբաղվում իրավունքի որպես նորմերի համակարգի առանձնահատկության ուսում-

նասիրությամբ, չենք բացահայտում իրավունքի առավել լայն հնարավորությունները հասարակական հարաբերությունները կարգավորելու գործում, քիչ ուշադրություն ենք դարձնում նորմերի համակարգի որպես հասարակության ղեկավարման միջոցի կատարելագործմանը:

Չի կարելի համաձայնել այն բանի հետ, որ իրավական սկզբունքները տարբերվում են սովորական իրավական նորմերից բովանդակությամբ և կարգավորիչ հատկություններով, ինչպես նաև իրագործման եղանակներով: Հենց «սովորականներից», այսինքն՝ դասական մոդելին համապատասխանող, եռատարր կազմությամբ և կարգավորվող հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները նշող իրավունքի նորմերից: Սակայն ձևավորված կարծրատիպերից նահանջը ամենևին առիթ չի տալիս զրկել սահմանադրական շատ դրույթներ իրավունքի նորմի կարգավիճակից: Ճիշտ է Ա. Ս. Պիգոլկինը, պնդելով, որ «սրանք բոլորն էլ իրավունքի նորմեր» են և դրանք չի կարելի դիտել որպես «միայն իրավունքի մեջ պարունակվող, սակայն իր բովանդակությամբ նրան կողմնակի ինչ-որ բան» [Пиголкин, 58]:

Լ. Ա. Մորոզովայի դիրքորոշման մեջ կա ևս մեկ հակասություն: «Բուն սահմանադրական նորմերի» շարքում առանձնացնելով ընդհանուր կարգավորիչ նորմերը, նա դրանց թվին է դասում այն սահմանադրական դրույթները, որոնք ամրագրում են պետական-ազգային կառուցվածքը, անձի սահմանադրական կարգավիճակը: Սակայն դրանց մեծամասնությունը (և դա ակներև փաստ է) ներկայացված են որպես սկզբունքներ, ծրագրային-նպատակային սահմանումներ: Հետևաբար, կամ պետք է ճանաչել նրանց իրավական նորմի որակը, կամ էլ հրաժարվել առաջարկված դասակարգումից: Մեր կարծի-

քով, արդարացիորեն նկատում է, որ սահմանադրական նորմի տակ պետք է հասկանալ ընդհանուր բնույթի վարքի ցանկացած չափ, արտահայտված սահմանադրական հրահանգավորման, տեսքով և որը ընդգրկում է բոլոր տեսակներն ու եղանակները հասարակական վարքի բնորոշման համար սկզբունքի կամ կանոնի սահմանումը, գործունեության նպատակի, խնդրի կամ ուղղության որոշումը, բնորոշման անվանումը կամ գործառույթի ամրագրումը և այլն:

Լինելով իրավունքի անքակտելի մասը, սահմանադրական նորմերը օժտված են նրա հիմնական հատկություններով, ինչպես նաև ունեն սոցիալական նորմերին ընդհանուր առումով բնորոշ ընդհանուր-համակարգային հատկանշաններ: Դրա հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ, որ «սահմանադրական նորմերը, ինչպես մյուս բոլոր նորմերը, արտացոլում են իրավունքի էականական պահերը, արտահայտված նրա արտաքին ձևերում: Սահմանադրական նորմերը բնութագրում են իրերի փաստացի դրությունը՝ ոչ միայն այն, ինչը պետք է լինի, այլ այն, ինչը արդեն կա, ոչ միայն պահանջվողը, այլև գոյը, քանի որ «նորմը սոցիալական օրգանիզմի օգտակար, օպտիմալ, հետևապես նաև տիպիկ գործառնական չափն է»: Այս իմաստով սահմանադրական նորմը ամենայն հիմնավորվածությամբ կարելի է դիտել որպես իրականության հոգևոր-պրակտիկ յուրացման արդյունք: Այս պնդման վրա է ուշադրություն դարձնում պրոֆեսոր Ս.Ա. Ավագյանը. «Սահմանադրական իրավունքի նորմերը առաջին հերթին արտացոլում են այսպես կոչված վիճակները (կամ իրավական հիմքերը), այսինքն հասարակական կյանքի և պետական կազմակերպման այն անխախտելի երևույթներն ու փաստերը, որոնք բնութագրում են մեր հասարակարգն ընդհանրապես, հանդիսանում են նրա անքակտելի գծերը» [Авакьян, 82]:

Սահմանադրական նորմերը յուրահատուկ ձևով փոխադրում, ձևափոխում են սոցիալականը իրավաբանականի, սոցիալական ազատությունները՝ սուբյեկտների պետականորեն նորմավորված, պետականորեն պաշտպանված հնարավորությունների, հանդես գալով որպես ինքնակառավարման ապահովման միջոց, ազատության չափ: Սահմանադրական նորմերն առանձնանում են տեղեկատվական հագեցվածությամբ, համապարփակ բազմանպատակ իրենց բնույթով: Սահմանադրական նորմերի բազմությանը համապատասխանում են բազմապիսի սոցիալական նպատակադրույթներ: Սահմանադրական նորմերին բնորոշ է քաղաքացիների, այլ սուբյեկտների շահերի վրա ներազդելու, նրանց առջև որոշակի նպատակներ դնելու ունակությունը, ինչը խթանում է իրավունքում ամրագրված հասարակության պահանջների հանդեպ դրական վերաբերմունքը:

Իհարկե, չի կարելի բացառել իրավունքի սահմանադրական նորմերի հարկադրական բնույթը (ավելի ճիշտ դրանց կատարման ապահովման հարկադրական բնույթը): Դրա հետ մեկտեղ սխալ է որպես իրավունքի բազիս ճանաչել ուժը: Այդպիսի ուժի դերում հանդես են գալիս օբյեկտիվ սոցիալական գոյի նյութական հարաբերությունները, որոնք էլ պայմանավորում են պետության օրինաստեղծ գործունեությունը: Իմացաբանական առումով ճշմարիտ այդ դիտողությունը այնուամենայնիվ ճշգրտման կարիք ունի որպես նախնական, առաջնային ուժ: Որպես երկրորդային և միաժամանակ անմիջական ուժ, որի վրա հենվում է պետությունը իր գործառույթներում, հանդես է գալիս պետական հարկադրանքը (ավելի ճիշտ դրա կիրառման հնարավորությունը, քանի որ ամեն անգամ չէ, որ ծագում է դրա անհրաժեշտությունը):

Սահմանադրական նորմերը ձևակերպում են վարքի համապարտադիր կանոններ:

րը (մասշտաբները, տարբերակները), որոնք նախատեսված են որոշակի պայմանների համար: Սահմանադրական հրահանգավորումների ընդհանուր բնույթը ենթադրում է իրավաբանորեն համանման իրավիճակում հայտնված չանձնավորված, թեև տվյալ տեսակի կոնկրետ սուբյեկտների վարքի պարտադիր միանշանակությունը: Դա հնարավորություն է ստեղծում սահմանադրական նորմերի բազմակի իրագործման համար դրանց կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների կրկնության շնորհիվ:

Ինչպես նշում է Բ. Ի. Պուգինսկին, իրավունքի նորմի առանձնացման համար առանցքային հատկանիշ է ծառայում նորմատիվ ակտի առանձին մասում, նախադասությունների խմբում կամ առանձին նախադասության մեջ արտահայտված իրավական սահմանման սուբյեկտների գործողությունները կարգավորելու նպատակով ինքնուրույն կիրառման հնարավորությունը: Եթե առանձին վերցված հարևան նախադասություններից անջատ իրավական դրույթը ինքնաբավ կերպով արտահայտում է անձանց գործողությունների կարգավորման համար պիտանի կանոն, ապա նա հանդիսանում է իրավունքի նորմ: Ինքնուրույնությունը տվյալ դեպքում նշանակում է իրավական սահմանման քերականական և տրամաբանական եզրահանգում [Пугинский, 32]:

Նորմի նպատակն ու իմաստը ոչ միայն սոցիալական իրականության արտացոլումն է, այլև նրա փոփոխումը և համապատասխանեցումը նորմին: Իրավական նորմը տիպային դատողություն է վարքագծի մասին, որն իր բովանդակությամբ հանդիսանում է հրահանգ, հիմնված դեսկրիպտիվ բնութագրումների վրա և իրենից ներկայացնում է զանազան սոցիալական ուժերի գործողությունների, նրանց տնտեսական, քաղաքական և այլ շահերին համարժեք: Դրա հետ մեկտեղ չի

կարելի հաշվի չառնել տարբերությունը լեզվային արտահայտությունների գնահատողին, դեսկրիպտիվ և պրեսկրիպտիվ գործառույթների միջև: Այդ իսկ պատճառով իրավունքի նորմերի օժտումը դատողության տրամաբանական կատեգորիայի այնպիսի հատկություններով, ինչպիսիք են ճշմարիտն ու կեղծը, համահավասար չէ նրա իրավական հատկություններին: Ակնհայտ է և մեկ այլ բան՝ արտացոլման ոչ բոլոր հարաբերություններն են ճշմարիտ հարաբերություն:

Հոդվածում նշվել են իրավունքի նորմի միայն մի քանի ընդհանուր համակարգային հատկանիշներ, որոնք նպաստում են հետազոտության գլխավոր խնդրի լուծմանը պարզաբանել սահմանադրական նորմերի յուրահատկությունը, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն հասկանալ դրանց ծագումնաբանությունը, սոցիալական հարաբերություններով պայմանավորվածությունը, այլև որոշել սոցիալական հարաբերությունների այն ոլորանները, որտեղ սահմանադրության գործառնությունը առավել արդյունավետ է [Байтин, 177-238]:

Սահմանադրական նորմերը իրավական նորմերի այլ տեսակներից տարբերվում են իրավաբանական հատուկ բնույթով: Այդ յուրահատուկ բնույթը, սակայն, չի կարելի հանգեցնել միայն այն բանի, որ դրանք ունեն իրավական կարգավորման միայն իրենց հատուկ ոլորտը: Նախ այն պատճառով, որ նման մենաշնորհ գործնականում գոյություն չունի և միշտ չէ, որ կարելի է «մաքուր տեսքով» առանձնացնել հասարակական այն հարաբերությունները, որոնք ամբողջովին կարգավորվում են սահմանադրական նորմերով: Սահմանադրական կարգավորման ոլորտում գործում են նաև այլ որպես կանոն, պետաիրավական նորմեր, երբեմն էլ իրավունքի այլ ճյուղերի նորմեր: Սահմանադրական նորմերը չեն հավակնում համընդգրկուն, սպառիչ կար-

գավորման: Այդ իսկ պատճառով ապարդյուն կլինեն փորձերը ամբողջովին և բացառապես սահմանադրական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններ: Սահմանադրական նորմերը ամրագրում են կազմակերպման և գործունեության հիմնական սկզբունքները, հիմնական լիազորությունները, գործունեության նպատակներն ու ուղղությունները, այն դեպքում, երբ այդ գործունեության կոնկրետ կարգավորումը, որպես կանոն, իրականացնում են վարչաիրավական նորմերը: Հետևաբար, առարկան գնահատելիս կարևոր է հասարակական հարաբերությունների ոչ միայն տեսակային, այլև կառուցվածքային բնութագիրը:

Եզրակացություն

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ սահմանադրությանը որոշ չափով բնորոշ է նորմատիվ կարգավորման ընդհանուր նպատակը հասարակական հարաբերությունների կանոնակարգումը, ընդհանուր կանոնների սահմանման ճանապարհով սոցիալական կյանքում միատեսակության և կայունության ներմուծումը: Սահմանադրության նորմատիվությունն արտահայտվում է նրանում, որ այն ակտիվ դեր է կատարում կարգավորվածության և կարգուկանոնի ոչ միայն միասնական, այլև ժամանակի մեջ տևական և հաստատուն համակարգի ստեղծման գործում: Այն կոչված է կազմակերպվածության ապահովման սկզբունքային հարցերի և հասարակական հարաբերությունների հստակեցմանը, հասարակական հարաբերությունների անհրաժեշտ ու նպատակահարմար կարգավորիչն է և իրեն բնորոշող օբյեկտիվ հատկությունների շնորհիվ ի վիճակի է ընդհանուր հիմունքների

սկզբունքով ապահովել դրանց կարգավորվածությունը, ինչպես նաև հանդես է գալիս որպես հասարակության մեջ համակարգային գործընթացների յուրահատուկ գործոն:

Սահմանադրության նորմատիվությունը կապված է նաև այն բանի հետ, որ այն նպատում է վարքի տիպային մասշտաբների միասնական, անընդհատ գործող, համապարտադիր համակարգի ստեղծմանը, որն ապահովում է ողջ սոցիալական օրգանիզմի նպատակաուղղված և ներդաշնակ գործառնությունը: Սահմանադրության նորմատիվության ճանաչումը օրինականության հաստատման ու պահպանման անհրաժեշտ պայմանն է:

Եզրահանգում ենք, որ սահմանադրական նորմերի նշանակությունը հասարակական հարաբերությունների նորմավորումը, չափումն ու գնահատումն է: Սահմանադրական նորմերը սահմանում են սոցիալական սուբյեկտների վարքի չափը, նրանց իրավունքների ու պարտականությունների չափը (ընդհանրացման տարբեր աստիճանով), պետության կողմից հասարակական հարաբերությունների կարգավորման չափը: Նրանք ծառայում են սոցիալական արժեքների և սոցիալական պատասխանատվության, սոցիալական բարիքների պահպանման ու բաշխման չափման հատուկ գործիք: Սահմանադրական նորմերը պարունակում են իրավունքի սուբյեկտների վարքի գնահատման միասնական մասշտաբ, ելնում են նրանցից յուրաքանչյուրի հանդեպ հավասար մոտեցման անհրաժեշտությունից: Բոլորի համար ընդհանուր սահմանադրական պահանջների գոյությունը իրավաբանական հավասարության կարևոր նախադրյալ է:

Գրականության ցանկ

1. Зорькин В.Д. Право в условиях геобольных перемен. Изд-во «Норма» М., 2013:
2. Хабриева Т.Я. Чиркин В.Е. Теория современной конституции. М., «Норма» М., 2005:

3. Михалева Н.А., Теоретические проблемы социалистической конституции (сущность, содержание, форма). Автореферат дис., док. юрид. наук, М., 1984, с. 19.
4. Плахов В. Д. Социальные нормы. Философские основания общей теории. - М., 1985. - С. 42.
5. Кудрявцев В. Н. Юридические нормы и фактическое поведение // "Советское государство и право", 1980, № 2. - С. 16.
6. Морозова Л.А. Конституционное регулирование общественны отношения в СССР. - «Советское государство и право», 1986, №2, с.51-55.
7. Авакьян С. А., Конституционное право Рoссии. Том 1, М., с. 82.
8. Пиголкин А. С. Правовая норма и поведение индивида. - Труды ВЮЗИ. - М., 1978. - Т. 56. С 58.
9. Пугинский Б. И. Теоретические проблемы права // "Вестник Московского Университета". Сер. 11. Право 1999, №5. -С. 32.
10. Байтин М. И. Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). М., 2005, С. 177-238;

THE PROBLEM OF NORMATIVITY OF CONSTITUTIONAL PROVISIONS

Garnik Safaryan

Doctor of Law, Professor

NAS RA, Institute of Philosophy, Sociology and Law

Norik Shahnazaryan

Researcher

NAS RA, Institute of Philosophy, Sociology and Law,

norik.shahnazaryan@yandex.ru

Abstract

The article thoroughly discusses the issues of normativity of the provisions of the constitution. The implementation of the Constitution is related to the legal nature and specifics of its directives and the evaluation of their normativity. Studies show that some of them, despite their great significance, cannot be recognized as norms of law. First of all, these are the provisions of the constitution that fix the principles of law, define the main legal concepts, the temporal, territorial and subjective limits of the legal norms, contain provisions on the goals, etc.

We believe that not all provisions of the constitution define clearly defined rights and responsibilities of participants in public relations. However, does this mean that they have no characteristic of normativity? Taking into account the specificity of the legal nature of the constitution and its role in the mechanism of legal regulation, the answer to this question, in our opinion, should be the following, because the constitution as a whole is endowed with the highest legal force, therefore its individual provisions and norms, including the norms-principles, norm - normatives are also endowed with the highest legal force and in legal practice they are subject to mandatory implementation.

Keywords: provisions of the constitution, norm - principles, norm - goals, mandatory rules of behavior, constitutional norms, guidelines, challenges.

Ներկայացվել է՝ 22.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 02.11.2022թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ:
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Մանուկ Հովհաննեսի Մուրադյան

ի.գ.թ., դոցենտ

ՀՀ ոստիկանության կրթահամալիր

manukmuradyan@rambler.ru

Ամփոփագիր

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ վարչ. դատ. օր.) 8-րդ գլուխը նվիրված է դատական հանձնարարությունների ինստիտուտին: Ամենաընդհանուր բնորոշմամբ՝ դատական հանձնարարությունը ՀՀ վարչ. դատ օր-ով նախատեսված վարչական դատարանի (սահմանադրական դատարանի) կողմից իրականացվող դատավարական գործողություն է (հանձնարարություն)՝ ուղղված համապատասխանաբար կոնկրետ նստավայրի վարչական դատարանին կամ սահմանադրական դատարանի հանձնարարության պարագայում՝ վարչական դատարանին՝ կատարելու որոշակի դատավարական գործողություններ՝ ապացույցներ ձեռք բերելու նպատակով:

Դատական հանձնարարության ինստիտուտը դժվար հասանելի ապացույցների ձեռքբերման և հետազոտման մեխանիզմ է: Այն դատավարական սուբյեկտիվ իրավունքների իրացման ապահովման երաշխիք է: Դատարանի նման լիազորությունը (ինչպես սահմանադրական, այնպես էլ վարչական արդարադատության շրջանակներում), ըստ էության, ուղղված է գործի շրջանակներում մասնավոր և հանրային շահերի հարաբերակցության ճիշտ գնահատմանը: Մեծ հաշվով, դատական հանձնարարության ինստիտուտը դատարանի կողմից ապացույցների անմիջական հետազոտման անհնարինության հաղթահարման միջոց է, գործի քննությունը ժամանակին իրականացնելու գործիք՝ ուղղված արդարադատության արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ վարչ. դատ. օր. 8-րդ գլխի շրջանակներում (հոդված 49, 50) կարգավորված են դատավարական կոնկրետ կառուցակարգի երկու ինքնուրույն տեսակները, որոնք սկզբունքորեն միմյանցից տարբերվում են դատավարական հանձնարարություն տվող սուբյեկտով և համապատասխան դատավարության ոլորտով. մի դեպքում՝ խոսքը վարչական դատարանի և դատավարության, մյուս դեպքում՝ սահմանադրական դատարանի և դատավարության շրջանակներում վարչական դատարանին կամ համապատասխան նստավայրի վարչական դատարանի տրվող հանձնարարության մասին է: Սույն հոդվածի շրջանակներում վերլուծության են ենթարկվելու վարչական դատարանի հանձնարարության ինստիտուտի տեսական և գործնական առանձին հարցեր:

Հիմնաբառեր. Վարչական դատարան, հանձնարարություն, ապացույց, ապացույցների հետազոտում:

Ներածություն

Վարչական դատարանի հանձնարարության էությունը և գործառույթը: Օրենքի իմաստով դատական հանձնարարությունը դատավարական գործողություն է, որն իրականացվում է իրավասու դատարանի միջանկյալ վարույթային որոշում ընդունելու ձևով: Հատկանշական է, որ դատական հանձնարարությունները կարող են տրվել միայն վարչական դատարանին: Այլ կերպ՝ ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի իմաստով դատական հանձնարարության ինստիտուտը հնարավոր է բացառապես վարչական դատավարության շրջանակներում:

Վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի 1-ին մասի փաստակազմի հատկանիշների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ դատական հանձնարարությունն այնպիսի ապացույց ձեռք բերելու ձև է, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության մեկ այլ մարզի տարածքում: Հատկանշական է, որ նորմի տեքստային մեկնաբանությունից չի երևում, սակայն բովանդակային իմաստով դատարանը նման հանձնարարություն տալու մասին որոշում կայացնում է այն պատճառով, որ ինքն անձամբ չի կարող դրանք ձեռք բերել: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարանն անմիջականորեն է իրականացնում ապացույցների հետազոտման գործընթացը (դրանց ընկալումը), եթե անգամ ապացույցների ուսումնասիրությունն իրականացվում է դրանց գտնվելու վայրում [Մեղրյան, 206]:

ՀՀ վարչ. դատ. օր. 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների *հետազոտման* և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը: ՀՀ վարչ. դատ. օր. 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր

ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ *հետազոտման* վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ ապացույցների անմիջական հետազոտումը, ըստ էության, գործը քննող դատարանի պարտականությունն է, սակայն օրենսդիրը սահմանել է ընդհանուր կանոնից բացառություն՝ գործը քննող դատարանին տալով լիազորություն ՀՀ մեկ այլ մարզի տարածքում ապացույցներ ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում հանձնարարելու համապատասխան նստավայրի վարչական դատարանին՝ կատարելու որոշակի դատավարական գործողություններ (ապացույցների անմիջական հետազոտում), եթե դա առավել արդյունավետ կդարձնի գործի քննությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական հանձնարարության գործառույթն **ապացույցը** տեղում հետազոտելն է, նշանակում է, որ դատարանն իրավունք ունի դատական հանձնարարության մասին որոշում կայացնելու՝ բացառապես ՀՀ վարչ. դատ. օր. 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցների վերաբերությամբ: Մասնավորապես, հոդվածի մասի համաձայն՝ այդպիսի ապացույցներ կարող են լինել **վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները:**

Կարևոր է հստակեցնել այն հարցը, թե դատական հանձնարարություն վարչական դատարանը կարող է տալ նաև գործը դատաքննության նախապատրաստելու՝, թե՛ միայն դատաքննության փուլում: ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի բովանդակությունից չի երևում հարցադրման պատասխանը: Առանձին նորմերի համակարգային մեկնաբանությունը թույլ է տալիս արձանագրել, որ դատական հանձնարարությունը կարող է

տրվել **և՛ գործը դատաքննության նախապատրաստելու, և՛ դատաքննության ընթացքում:** Այսպես՝ ՀՀ վարչ. դատ. օր. 89-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս վարչական դատարանը պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխանն ստանալուց հետո, իսկ այդպիսին չստանալու դեպքում՝ պատասխան ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո, դատաքննությունն արդյունավետ իրականացնելու նպատակով կարող է հրավիրել նախնական դատական նիստ: Վարչական դատարանը, հոդվածի 3-րդ մասի (ի թիվս այլ գործողությունների) 10-րդ կետի համաձայն, *նախնական դատական նիստում իրականացնում է գործի արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական դատարանի հանձնարարության նպատակը, ըստ էության, գործի քննությունն արդյունավետ դարձնելն է, կարծում ենք, որ դատարանը 10-րդ կետով սահմանված լիազորության հիման վրա կարող է տալ դատական հանձնարարություն նաև գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում:

Հատկանշական է, որ ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի իմաստով միակ փաստական հանգամանքը, որի առկայության պարագայում կարող է վրա հասնել գործը քննող դատարանի՝ ՀՀ մեկ այլ մարզի տարածքում որոշակի դատավարական գործողություններ կատարելը համապատասխան մարզի նստավայրի վարչական դատարանին հանձնարարելու լիազորությունը (իրավական հետևանք), ապացույց ձեռք բերելու անհրաժեշտությամբ պայմանավորված, **գործի քննությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակի առկայությունն է:** Քննարկվող համատեքստում գործի քննության արդյունավետությունն անհրաժեշտ է դիտարկել ապացույցների

ձեռքբերման և գնահատման տեսանկյունից: ՀՀ վարչ. դատ. օր. 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Իրավունքի գերակայության պահանջներից է նաև իրավասու և գործունակ դատարանների առկայությունը, որոնք կիրականացնեն միջազգային չափանիշներին համապատասխան սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանն ուղղված արդյունավետ արդարադատություն: Արդարադատության իրականացման արդյունավետության տեսանկյունից առավելապես կարևորվում է վեճի սպառիչ լուծումը, ինչն առանց ապացույցների բազմակողմանի և լրիվ հետազոտման հնարավոր չէ:

Վկայի գտնվելու վայրում դատական հանձնարարության կարգով վկայից ցուցմունք վերցնելու հիմքերը և կարգը: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի իմաստով ցանկացած ապացույց ստանալու համար դատարանը կարող է կայացնել որոշում դատական հանձնարարություն տալու մասին, այնուամենայնիվ, պոզիտիվ մակարդակում սահմանված են այլ մարզի նստավայրի վարչական դատարանի կողմից դատական հանձնարարության կարգով վկայից ցուցմունք վերցնելու հիմքերը:

ՀՀ վարչ. դատ. օր. 35-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ վկայից ցուցմունք վերցնելը կարող է կատարվել նաև վկայի գտնվելու վայրում դատական հանձնարարության միջոցով, եթե՝ (1) վկայից տեղում ցուցմունք վերցնելը կնպաստի ճշմարտության բացահայտմանը. (2) վկայի ներկայանալը դատաքննությանը, իր հաղորդելիք տեղեկատվության համատեքստում, նպատակահարմար չէ մեծ հեռավորության պատճառով. (3) վկան հիվանդու-

թյան, տկարության կամ այլ պատճառով ի վիճակի չէ կամ իրավունք չունի լքելու իր գտնվելու վայրը: Գրեթե համարժեք կարգավորում է առկա ՀՀ քաղ. դատ. օր-ում: Օրենսգրքի 70-րդ հոդվածը սահմանում է դատական հանձնարարության կարգով վկայի հարցաքննության իրականացման դատավարական հիմքերը և կարգը: Հոդվածի համաձայն՝ վկան կարող է իր բնակության վայրի առաջին ատյանի դատարանի կողմից հարցաքննվել դատական հանձնարարության կարգով, եթե. (1) վկայի ներկայանալը դատաքննությանը նպատակահարմար չէ մեծ հեռավորության պատճառով, (2) վկան հիվանդության կամ այլ պատճառով ի վիճակի չէ լքել իր գտնվելու վայրը: ՀՀ վարչ. դատ. օր. 35-րդ հոդվածի 18-րդ մասի 1-3 կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկի բացակայության պարագայում վկայից չի կարող ցուցմունք վերցվել դատական հանձնարարության կարգով: Ինչ վերաբերում է ՀՀ քաղ. դատ. օր-ի, ըստ էության, համանման կարգավորմանը, ապա պետք է արձանագրել, որ ՀՀ քաղ. դատ. օր-ով, ի ապահովում դատարանի կողմից գործում առկա ապացույցներն անմիջականորեն հետազոտելու սկզբունքի, ներդրվել է նաև վկայի, փորձագետի և մասնագետի հարցաքննությունը՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ իրականացնելու ինստիտուտը՝ **որպես ապացույցի սրացման նոր ձև**: Ըստ էության՝ օրենսդիրը չի սահմանել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցով հոդվածում նշված սուբյեկտների հարցաքննությունն իրականացնելու պարտադիր պայման: Կարևորելով ապացույցների անմիջական հետազոտման անհրաժեշտությունը՝ քաղաքացիական գործի քննության ընթացքում, թեև առկա են դատական հանձնարարության կարգով ապացույց ստանալու հիմքերը (տեխնիկապես անհնար չլինելու

պարագայում), դատարանը ողջամիտ ժամկետներում գործի արագ և արդյունավետ լուծման տեսանկյունից կաշկանդված է տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցով այն իրականացնելու պարտականությամբ: Արդարադատության արդյունավետության բարձրացման և դատարանի կողմից ապացույցներն անմիջականորեն հետազոտելու սկզբունքի ապահովման նկատառումներից ելնելով, կարծում ենք՝ ՀՀ վարչ. դատ. օր-ով ևս անհրաժեշտ է սահմանել վկայի, փորձագետի ցուցմունքը տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներով վերցնելու կարգ:

ՀՀ վարչ. դատ. օր. 35-րդ հոդվածի 18-րդ մասում օգտագործվող «գտնվելու վայր» հասկացությունը պարզաբանման կարիք ունի: Վարչական դատարանի իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ, որպես կանոն, վկայից ցուցմունք վերցնելու վերաբերյալ դատական հանձնարարությունները տրվում են վկայի հաշվառման վայրի ՀՀ վարչական դատարանի նստավայրին: Այս տեսանկյունից խնդիրն անհրաժեշտ է պարզաբանել «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում: «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ մշտական բնակության վայր (կացարան) է համարվում այն տարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում և հայտարարում է որպես իր կացարան: Ռեգիստրում ընդգրկվելու համար ՀՀ բնակիչը պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան տեղական ռեգիստրին տրամադրել իր մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն: Բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում: Գործը քննող դատարանը, եթե վկայի գտնվելու վայրի վերաբերյալ այլ տեղե-

կատվություն չունի, ապա դատական հանձնարարականը պետք է արձակի ըստ հաշվառման վայրի (գտնվելու վայրի) վարչական դատարանի նստավայրին: Այսինքն, օրենքի իմաստով գտնվելու վայրը և հաշվառման վայրը համընկնում են: Սակայն պրակտիկայում, եթե հաշվի առնենք վկայից դատական հանձնարարության կարգով ցուցմունք վերցնելու հիմքերը (օրինակ՝ վկայի ներկայանալը դատաքննությանը նպատակահարմար չէ մեծ հեռավորության պատճառով, վկան հիվանդության, տկարության կամ այլ պատճառով ի վիճակի չէ կամ իրավունք չունի լքելու իր գտնվելու վայրը), ապա ակնհայտ է, որ հանձնարարություն տվող դատարանն օբյեկտիվորեն պետք է տեղեկացված լինի վկայի գտնվելու վայրի մասին (օրինակ՝ հիվանդության պատճառով հաշվառման վայրի մարզից դուրս մեկ այլ մարզում կամ քաղաքում հիվանդանոցային կամ ստացիոնար բուժման պայմաններում գտնվող վկայի պարագայում), և հանձնարարությունը կարող է տրվել փաստացի վկայի գտնվելու վայրի վարչական դատարանի նստավայրին՝ նշելով հաշվառումից դուրս վկայի փաստացի գտնվելու վայրը:

Դատական հանձնարարության կարգով իրեղեն ապացույցների զննման հնարավորությունը: Ինչպես նշվել է, ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի իմաստով ցանկացած ապացույց ստանալու համար դատարանը կարող է կայացնել որոշում դատական հանձնարարություն տալու մասին, այնուամենայնիվ, պոզիտիվ մակարդակում հատուկ կարգավորումներ նախատեսված են միայն այլ մարզի նստավայրի վարչական դատարանի կողմից դատական հանձնարարության կարգով *վկայի ցուցմունք վերցնելու հիմքերի առնչությամբ*: Ինչպես գիտենք, ապացույցի ինքնուրույն տեսակ է իրեղեն ապացույցը: ՀՀ վարչ. դատ. օր. 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են նյութա-

կան աշխարհի այն օբյեկտները, որոնք իրենց առկայությամբ, դրությամբ, արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի հաստատման միջոց դառնալ: Հոդվածի 6-րդ մասը սահմանում է իրեղեն ապացույցների հետազոտման դատավարական կարգը: Մասնավորապես՝ իրեղեն ապացույցները հետազոտվում են զննման միջոցով: ՀՀ վարչ. դատ. օր. 47-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ զննումը, որպես կանոն, կատարվում է դատարանում: Եթե զննման օբյեկտը հնարավոր չէ տեղաշարժել, կամ դրա տեղափոխումը դատարան կապված է անհամաչափ դժվարությունների կամ ծախսերի հետ, ապա զննումը դատարանը կատարում է տեղում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զննումը տեղում կատարելիս պահպանվում է դատական նիստի համար սույն օրենսգրքով սահմանված կարգը: Զննումը տեղում կատարելիս ժամանակի և վայրի մասին դատավարության մասնակիցները ծանուցվում են, սակայն նրանց չներկայանալն արգելք չէ զննումը կատարելու համար: Դիտարկվող նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ չկան դատական հանձնարարության կարգով իրեղեն ապացույցների զննման հատուկ հիմքեր (ինչպես վկայի ցուցմունքի պարագայում) և դատավարական հատուկ կարգ: Նշված կարգավորումներն սկզբունքորեն վերաբերելի են կոնկրետ նստավայրի վարչական դատարանի կողմից իր դատական տարածքում գտնվող իրեղեն ապացույցները դատարանի շենքայի տարածքից դուրս զննելուն: Այլ է իրավիճակը, երբ զննման ենթակա իրեղեն ապացույցը գտնվում է այլ նստավայրի վարչական դատարանի դատական տարածքում: Այն, որ դատական հանձնարարության գործառույթն **ապացույցը** տեղում հետազոտելն է,

և, ընդհանուր կանոնի համաձայն, այն ուղղված է մեկ այլ մարզի տարածքում ապացույցներ ձեռք բերելուն, և կարևորելով այն հանգամանքը, որ եթե զննման օբյեկտը հնարավոր չէ տեղաշարժել, կամ դրա տեղափոխումը դատարան կապված է անհամաչափ դժվարությունների կամ ծախսերի հետ, ապա զննումը դատարանը կատարում է տեղում՝ **անկախ այն հանգամանքից, որ գործող վարչադատարարական օրենսդրությամբ նախատեսված չեն դատական հանձնարարության կարգով իրեղեն ապացույցները տեղում (փաստացի այլ մարզի տարածքում) զննելու վերաբերյալ հատուկ կարգավորումներ**, կարծում ենք՝ ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի դատական հանձնարարությանը վերաբերող ընդհանուր կարգավորումները թույլ են տալիս արձանագրել, որ վարչական դատարանն իրավասու է հանձնարարելու համապատասխան նստավայրի վարչական դատարանին՝ կատարելու *իրեղեն ապացույցի զննում դատավարական գործողությունը՝* պայմանով՝ եթե դա առավել արդյունավետ կդարձնի գործի քննությունը:

Վարչական դատարանի դատական հանձնարարության մասին որոշումը: հանձնարարության պարտադիրությունը և կատարումը: Վարչական դատարանը դատական հանձնարարությունը ձևակերպում է համապատասխան որոշմամբ (դատական հանձնարարություն տալու մասին), որում ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համառոտ շարադրվում են քննվող գործի էությունը, նշվում են ապացուցման ենթակա փաստերը և այն ապացույցները, որոնք պետք է ձեռք բերի հանձնարարություն կատարող դատարանը: Նշված իրավանորմն ամենաընդհանուր ձևով որոշակիացնում է որոշման բովանդակությունը և բացի հանձնարարության շրջանակներում ապացուցման ենթակա փաստերի և հանձնարարությունը

կատարող դատարանի կողմից ձեռքբերման ենթակա ապացույցների վերաբերյալ նշումներից, պարտադիր է նաև (որոշում կատարող դատարանին գործի վերաբերյալ իրազեկելու տրամաբանությունից ելնելով) որոշման մեջ քննվող գործի էության համառոտ ներկայացումը (*«ՀՀ վարչ. դատ. օր. 123-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ վճռի կայացման, վճռի պարզաբանման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»*):

Հատկանշական է, որ գործի համառոտ ներկայացում ասելով պրակտիկայում ընդունված է հասկանալ և, որպես կանոն, հանձնարարության վերաբերյալ որոշումների մեջ նկատի է ունեցվում գործի՝ ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթի ընթացքում կատարված գործողությունները, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր է տրված հանձնարարությունն ըստ էության իրականացնելու համար: Մասնավորապես՝ որոշման մեջ նշվում է հայցվորի կողմից գործը քննող դատարանին ուղղված նյութաիրավական պահանջը, վեճի առարկայի բովանդակությունը, դատարանի գործողությունները՝ կապված հայցադիմումը վարույթ ընդունելու, այն վերադարձնելու, ապացույց պահանջելու և այլ դատավարական ընթացակարգերի հետ: Որոշման մեջ նշվում են նաև դատարանին նման լիազորություն տվող իրավական հիմքերը:

Ինչ վերաբերում է հանձնարարության վերաբերյալ որոշման օրինական ուժի մեջ մտնելու և այն բողոքարկելու հետ կապված հարցե-

րին, ապա ՀՀ վարչ. դատ. օր. «Վարչական դատարանի դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը» վերտառությամբ 127-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ բողոքարկման ոչ ենթակա միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Իսկ 131-րդ հոդվածում թվարկված են վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը, որոնց շրջանակում (կամ այլ կարգավորումներում) բացակայում է *դատական հանձնարարություն տալու վերաբերյալ միջանկյալ դատական ակտի տեսակը*: Նորմերի համակարգային մեկնաբանման արդյունքում պարզ է դառնում, որ դատական հանձնարարություն տալու մասին որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Հանձնարարությունը պարտադիր է այն ստացած դատարանի համար և պետք է կատարվի այն ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում: ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով, շաբաթներով կամ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, շաբաթվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է այդ ժամկետի սկիզբը: Փաստացի, երկշաբաթյա ժամկետը հոսում է ոչ թե ստանալու, այլ դրան հաջորդող օրվանից: Դատական հանձնարարության կատարման համար երկշաբաթյա ժամկետ է նախատեսված նաև քաղաքացիական դատավարության շրջանակներում վկայի հարցաքննությունը դատական հանձնարարության կարգով իրականացնելու դեպքում: Հատկանշական է, որ այլ պետությունների օրենսդրությունները դատական հանձնարարության կարգով ապացույցների ձեռքբերման համար նախատեսում են տարբեր ժամկետ-

ներ: Օրինակ՝ ՌԴ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական հանձնարարության կատարման համար նախատեսված է մեկամսյա ժամկետ: Իսկ, օրինակ, ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածը նախատեսում է 10-օրյա ժամկետ [Борисов, Лагвилава, 132-133]:

ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանձնարարությունը կատարվում է դատական նիստում՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով: Իրավանորմի նպատակը կոնկրետ ապացույցը դատական հանձնարարության կարգով ձեռք բերելիս այդ տեսակի ապացույցի ձեռքբերման և ամրագրման դատավարական կարգի և սկզբունքների կիրառության վրա շեշտադրում կատարելն է: Այլ կերպ՝ օրենսդիրը հանձնարարության կարգով ապացույց ձեռք բերելու հատուկ կարգավորումներ չի նախատեսել: Այսպես օրինակ՝ եթե անհրաժեշտ է դատական հանձնարարության կարգով վկայից ցուցմունք վերցնել, ապա հանձնարարություն ստացած դատարանը պետք է այն իրականացնի՝ պահպանելով ՀՀ վարչ. դատ. օր. 32-36-րդ հոդվածների կանոնները: Վկայից ցուցմունք վերցնելու ընդհանուր կարգի համաձայն՝ դատարանը վկա հրավիրում է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ: Վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս նշվում է այն փաստը, որի վերաբերյալ վկան պետք է հարցաքննվի, ինչպես նաև նշվում են վկայի անունը, ազգանունը, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների դեպքում՝ նաև հայրանունը (այսուհետ՝ անուն) և հասցեն: Դատական հանձնարարության շրջանակներում վկայից ցուցմունք վերցնելու պարագայում 32-րդ հոդվածի կանոնները գործում են այնքանով, որքանով չի խեղվում քննարկվող ինստիտուտի դատավարական էությունը: Մասնա-

վորապես՝ հաշվի առնելով դատական հանձնարարության առկայությունը, հանձնարարություն ստացող դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ չի կարող վկայից ցուցմունք վերցնել. այն իրականացվում է հանձնարարության ուժով: Ձևական իրավաբանական իմաստով հանձնարարություն կատարող դատարանը նախաձեռնողականություն չի դրսևորում, այլ իրականացնում է հանձնարարությունը: Ընդհանուր կարգի համաձայն՝ վկայից ցուցմունք վերցնելու պարագայում վկային հրավիրելու պարտականություն կրում է հենց ցուցմունք վերցնող դատարանը, իսկ հանձնարարության առկայության պարագայում՝ հանձնարարություն կատարող դատարանը: Հանձնարարության շրջանակներում վկան դատարան է կանչվում դատական ծանուցման հիման վրա, որում նշվում են դատարան չներկայանալու իրավական հետևանքները: Վկան պարտավոր է ներկայանալ հանձնարարություն կատարող դատարանի կանչով: Եթե սահմանված կարգով ծանուցված վկան չի ներկայանում դատական նիստին, ապա հանձնարարություն կատարող դատարանը կարող է վկային բերման ենթարկելու որոշում կայացնել՝ նրա վրա դնելով չներկայանալու հետևանքով առաջացած ծախսերը: Մինևույն ժամանակ, նրա նկատմամբ կարող է նշանակվել դատական տուգանք՝ օրենքով սահմանված կարգով: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատական տուգանքի նշանակումը և ծախսերի հատուցման պարտականություն դնելը, ինչպես նաև բերման ենթարկելու մասին որոշումը վերացվում են, եթե վկան ապացուցում է, որ նա ժամանակին չի ստացել ծանուցումը, կամ նրա բացակայության պատճառը հարգելի է եղել:

Հանձնարարությունը կատարելու մասին կայացվում է որոշում, որը բոլոր նյութերի հետ անհապաղ ուղարկվում է գործը քննող դատարան: Ինչպես գիտենք, դատական

հանձնարարության կատարման համար սահմանված է երկշաբաթյա ժամկետ: Պրակտիկայում հնարավոր է, որ հանձնարարություն կատարող դատարանը տարբեր պատճառներով չկարողանա սահմանված ժամկետներում ծանուցել վկային՝ հանձնարարության կարգով ցուցմունք տալու վերաբերյալ: Այստեղ հարց է առաջանում հանձնարարությունը սահմանված ժամկետներում չկատարելու կամ կատարման անհնարինության այլ իրավիճակների վերաբերյալ: Դատական հանձնարարության վերաբերելի նորմերը չեն նախատեսում նման իրավիճակներում հանձնարարություն կատարող դատարանի գործողությունների շրջանակը: ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *հանձնարարությունը կատարելու մասին կայացվում է որոշում*, որը բոլոր նյութերի հետ անհապաղ ուղարկվում է գործը քննող դատարան: Պարզ տեքստային մեկնաբանման արդյունքում կարելի է արձանագրել, որ կարգավորումը վերաբերում է միայն հանձնարարության կատարմանը և դրա վերաբերյալ որոշում կայացնելուն: Հաշվի առնելով քննարկվող իրավանորմի նպատակը և գործառույթը, ինչպես նաև գործի քննության արդյունավետության և արդարադատության շահը, հիմնահարցն անհրաժեշտ է դիտարկել նպատակային մեկնաբանման համատեքստում կամ կարգավորման բացը լրացնել օրենքի անալոգիայի (միջճյուղային) միջոցով: Այսպես՝ ի տարբերություն ՀՀ վարչ. դատ. օր-ի, ՀՀ քաղ. դատ. օր-ի 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատական հանձնարարության կատարման **կամ դրա անհնարինության մասին կայացվում է որոշում**, որը դատական նիստի արձանագրության հետ անհապաղ ուղարկվում է գործը քննող առաջին ատյանի դատարան: Համանման իրավիճակներում (հանձնարարության կատարման անհնարինության պարագա-

յում) հանձնարարություն կատարող Դատարանը կարող է անալոգիայի կարգով կիրառել ՀՀ քաղ. դատ օր-ի նշված իրավակարագավորումը: Պրակտիկայում հանձնարարության կատարման անհնարինությունը կարող է կապված լինել տարբեր պատճառների հետ, օրինակ՝ վկային չծանուցել (դրա անհնարինությունը) հանձնարարության կարգով ցուցմունք տալու վերաբերյալ: Նման իրավիճակում հանձնարարություն կատարող վարչական դատարանի համապատասխան նստավայրը կատարման անհնարինության վերաբերյալ կարող է կայացնել որոշում և նիստի արձանագրության, ինչպես նաև այլ նյութերի հետ միասին ուղարկել հանձնարարություն տվող դատարան:

Եզրակացություն

Աշխատանքում կատարված վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ դատական հանձնարարության ինստիտուտը սուբյեկտիվ իրավունքների իրացման ապահովման երաշխիք է, որը նպատակ ունի ապահովել սոցիալ-իրավական վեճի շրջանակներում մասնավոր և հանրային շահերի ճիշտ հարաբերակցություն: Դատավարական իմաստով այն դժվար հասանելի ապացույցների ձեռքբերման և հետազոտման մեխանիզմ է, դատարանի կողմից ապացույցների անմիջական հետազոտման անհնարինության հաղթահարման միջոց, գործի քննությունը ժամանակին իրականացնելու գործիք՝ ուղղված արդարադատության արդյունավետության բարձրացմանը:

Գրականության ցանկ

1. Մեղրյան Ս. Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում /Ս. Մեղրյան: Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 206:
2. Борисов А. Н. Комментарий к Кодексу административного судопроизводства РФ от 8 марта 2015 г. (постатейный)/ А. Н. Борисов, Р. П. Лагвилава. – 2-е изд., перераб. и доп.– М.: Юстицинформ, 2018. С. 132-133.

ADMINISTRATIVE COURT COMMISSION. THEORETICAL AND PRACTICAL ISSUES

Manuk Muradyan

*PhD in Law, Associate Professor
Police Educational Complex of RA,
manukmuradyan@rambler.ru*

Abstract

The Chapter 8 of the Administrative Procedure Code of the Republic of Armenia (hereinafter referred to as) is dedicated to the institute of court commissions.

In general terms, court commission is a procedural action (assignment) carried out by an administrative court (constitutional court), stipulated by the Administrative Procedure Code of the Republic of Armenia, addressed respectively towards the administrative court in a particular location or to the administrative court, in case of assignment by constitutional court, to perform certain procedural actions in order to obtain evidence.

The institute of court commission is a mechanism of obtaining and examining hard-to-reach evidence. It constitutes a guarantee for ensuring the realization of procedural subjective rights. Such a power of the court (in the framework of both constitutional and administrative justice) is essentially aimed at the accurate

assessment of the ratio between relationship of private and public interests within the framework of the case. In general, the institute of court commission is a means of overcoming the impossibility of direct examination of evidence by the court, a tool for investigating the case in a timely manner aimed at improving the efficiency of justice.

The Chapter 8 of the Administrative Procedure Code of the Republic of Armenia (articles 49, 50) regulates two independent types of specific procedural structures which are fundamentally different from each other in terms of the entity issuing the commission and the respective area of proceedings. It refers to the assignment issued towards the administrative court or towards the administrative court of a respective location in the framework of the administrative court and proceedings in one case, and the constitutional court and proceedings in the other case.

The present article will analyze separate theoretical and practical issues of the institute of administrative court commission.

Keywords: Administrative court, Administrative Procedure Code, court commission, evidence.

Ներկայացվել է՝ 03.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 02.11.2022թ.

ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏԸ

Վահե Աշոփ Թորոսյան

ի.գ.թ., դոցենտ

ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն

vaxinak91@mail.ru

Ամփոփագիր

Կրոնական խորհրդանիշների գործածությունը յուրաքանչյուր անհատի կրոնի ազատության իրավունքի բաղկացուցիչն է: Դրանով հավատարի հետևորդը իր պատկանելությունն է հավաստում իր կրոնի կամ հավատարի նկատմամբ: Շատ հաճախ կրոնի ազատության իրավունքի նման արտահայտումը հանգեցնում է միջամտությունների, երբեմն խախտելով և ունահարելով մարդու իրավունքները: Այս առումով կրթական հաստատությունները հատուկ ուշադրություն են դարձնում կրոնական արհրբուրների առկայությանը՝ փորձելով մի կողմից ապահովել մարդու կրոնական ազատությունը, մյուս կողմից հանրային շահը:

Հոդվածում քննարկվում և վերլուծության են ենթարկվում կրթական հաստատություններում կրոնական խորհրդանիշների գործածության իրավաքաղաքական առաձևափակությունները: Թեման արդիական է և ինքնատիպ, հատկապես եթե հաշվի առնենք, որ այդ շարժառիթներով հաճախակի տեղի են ունենում ներազգային ցնցումներ և բախումներ, որի վկայությունը Իրանում կատարված դեպքերն են:

Ուստի, փորձել ենք բացահայտել կրոնի ազատության իրավունքը կրոնական խորհրդանիշների գործածության հարցում, ցույց տալ պետությունների վերաբերմունքը և որդեգրած քաղաքականությունը: Միաժամանակ վերլուծելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքը փաստել ենք, որ կրոնական խորհրդանիշի գործածությունը կարող է դիտարկվել խախտում, եթե այն ունի հատուկ ընդգծված բնույթ, որով վրանգում են հասարակության բարքերը: Էական է նաև այն հանգամանքը, որ հաճախ այդ իրավունքի սահմանափակումը կարող է պայմանավորված լինել պետության չեզոքության և աշխարհիկության հիմնավորումներով:

Հիմնաբառեր. Կրոնական խորհրդանիշ, կրթական հաստատություն, ՄԻԵԴ նախադեպային իրավունք, կրոնի ազատության իրավունքի, պետության աշխարհիկություն:

Ներածություն

Աշխարհիկ կրթության ապահովման տեսանկյունից խնդրահարույց է նաև պետական կրթական հաստատություններում և, առհասարակ, հանրային վայրերում կրոնական խորհրդանիշների գործածության հիմնահարցը: Այն մի կողմից՝ ընկալվում է որպես մարդու կրոնական ազատության անհարկի միջամ-

տություն, մասնավոր անձեռնմխելիության խախտում, մյուս կողմից՝ արդարացվում են դրանց կիրառման սահմանափակումները և արգելքները:

Արդեն նշել ենք, որ միջազգային իրավունքը նախատեսում է սեփական կրոնի դավանումը՝ այդ թվում հրապարակային կարգով: Իհարկե սա չի նշանակում կրոնական

համոզմունքի արտահայտման ամենաթողություն և անսահմանափակ հնարավորություն: Պետությունները հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման, հասարակական կարգի պահպանման և այլ իրավաչափ նպատակներով զգուշավորություն են ցուցաբերում **կրոնական սիմվոլիզմի** դրսևորումների նկատմամբ: Եվրոպական երկրները, որպես կանոն, հանրային վայրերում արգելում են կրոնական խորհրդանիշների ընդգծված ցուցադրությունը՝ պայմանավորելով այն հասարակական կարգի և համընդհանուր համակեցության նորմերով: Պետության չեզոքությունը այս հարցում գերակա համարվում անձի կրոնը դավանելու իրավունքի նկատմամբ: Հատկապես դա վերաբերում է մահմեդական կանանց կրոնական հագուստին, որը Եվրոպայում դիտարկվում է կնոջ անլիարժեքության և նվաստացման դրսևորում: Ընդ որում, Եվրոպական դատարանը բազմիցս այդպիսի սահմանափակումները համարել է համաչափ և թույլատրելի, քանի որ դրանք բխում են «**միասին ապրելու**» (*living together*) պայմանների երաշխավորումից՝ որպես այլոց իրավունքների ազատությունների պաշտպանության բաղադրատարր [case of S.A.S. v. France], [case of Belcacemi and Oussar v. Belgium], [case of Dakir v. Belgium]:

Դեմքը կամ գլուխը լիովին ծածկող (նիկաբ, փարաջա) կամ կիսով չափ ծածկող (չադրա, հիջաբ) կրոնական հագուստ կրելու արգելքը կարող է ունենալ արդարացի հիմնավորում, եթե դա կապված է անձի անձնական տվյալների ճշգրտման և նույնականացման (վարորդական վկայականի լուսանկար, անձնագրային վերահսկողություն) [case of El Morsli v. France, Mann Singh v. France], հանրային անվտանգության ապահովման [case of Phull v. France] ծառայողական պարտականությունների կատարման կամ այլ հանգամանք-

ների հետ: Առանցքային նշանակություն ունի այդպիսի սիմվոլ կրող անձի կարգավիճակը՝ պետական ծառայող է թե՛ շարքային քաղաքացի: Եթե շարքային քաղաքացին հեռացվում է դատարանի դահլիճից այն բանի համար, որ կրել է կրոնական հագուստ և դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի նկատմամբ, ապա Եվրոպական դատարանը անձի նկատմամբ նման միջամտությունը կորակի կրոնի ազատության խախտում [case of Lachiri v. Belgium], [case of Hamidović v. Bosnia and Herzegovina]: Նման դեպքերում դատարանը շարքային քաղաքացու վարքագիծը տարբերում է աշխատավայրում իր պարտականությունները կատարող պետական պաշտոնյայի վարքից, վերջինս համար նախատեսելով կրոնական զսպվածություն:

Խոսելով հանրակրթական միջավայրում կրոնական սիմվոլիզմի դրսևորումներից, պետք է նկատել, որ այս հարցում էլ պետությունները որդեգրել են տարաբնույթ մոտեցումներ: Այսպես, կան երկրներ, որտեղ թույլատրվում է հանրակրթական դպրոցներում սեփական կրոնական համոզմունքներին և ավանդույթներին համապատասխան հագուստ կամ այլ խորհրդանիշներ կրելը (Ռուսաստան, Չեչնիա, Իսրայել, Իրան): Մահմեդական աշխարհի երկրներում կանայք, որպես կանոն, պարտավոր են կրել իսլամի անքակտելի բաղադրիչ հանդիսացող կրոնական գլխաշոր՝ **հիջաբ**: Նման պարտադրանքը բխում է շարիաթի իրավական նորմերից և կրոնական սովորություններից:

Միևնույն ժամանակ առաձին պետություններ, աշխարհիկության սկզբունքի պաշտպանության նպատակով, իրենց հայեցողության շրջանակներում, ուսուցիչներին և աշակերտներին կարող են արգելել կրոնական իմաստ խորհրդանշող հագուստի և այլ պարագաների բացահայտ գործածությունը

[case of Dahlab v. Switzerland]: Շվեյցարիայի դեմ բերված գործերից մեկով մահմեդական ուսուցչին արգելվել էր դասի ժամանակ կրել չադրա, որը ըստ դիմող կողմի հանգեցրել էր սեփական կրոնը ազատորեն արտահայտելու իրավունքի խախտմանը: Պատասխանող պետությունը առարկություն էր ներկայացրել այն պնդմամբ, որ չադրան **զորեղ կրոնական խորհրդանիշ** է, հետևաբար, վերջինիս գործածության արգելքը ըստ էության բխում է հանրակրթական համակարգում **չեզոքության** պահպանման հիմնադրույթից: Եվրոպական դատարանը ընդունելով կրոնական խորհրդանիշի զորեղ ազդեցության գնահատման դժվարությունը, արձանագրեց, որ այնուամենայնիվ իրավունքի սահմանափակումը իրավաչափ է, իրապես բխում է չեզոքության պահանջներից: Դատարանը նաև նշեց, որ այդ սիմվոլի առկայությունը 4-8 տարեկան աշակերտների նկատմամբ կարող է հոգեորսության ազդեցություն ունենալ:

Պետք է նկատել, որ աշխարհիկ պետություններում կրոնական խորհրդանիշների ցուցադրումը ինքնին խախտում չէ, այն որպես կանոն այդպիսին է համարվում, երբ կրում է **ընդգծված ցուցադրական բնույթ**՝ այդպիսով վտանգելով հասարակական բարքերը: Սակայն այստեղ էլ յուրաքանչյուր դեպք ինքնատիպ է և կարիք ունի համակողմանի քննության: Օրինակ ԱՄՆ-ի Կենտուկի նահանգում, որտեղ դպրոցներում առանց պարտադրանքի երեխաների համար ամեն օր կարդում են Աստվածաշունչ, սահմանված հրահանգի համաձայն տարրական և միջնակարգ դասարաններում փակցվում են տաս պատվիրանները [Kentucky Revised Statutes]:

Ֆրանսիայում տևական ժամանակ սուր քննարկումներ էին տեղի ունենում դպրոցներում կանանց գլխաշոր կրելու հարցի առնչությամբ: Ֆրանսիայի դեմ բերված գործերից մեկով վեց մահմեդական աշակերտների ար-

գելվել էր դասերի ժամանակ կրել բացահայտ կրոնական պատկանելություն և իմաստ խորհրդանշող հագուստ, որի արդյունքում՝ տևական զգուշացումներից հետո, նրանք հեռացվել էին դպրոցից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գործի քննությունը համարեց անթույլատրելի, նշելով, որ աշակերտներին դպրոցից հեռացնելը պայմանավորված չի եղել նրանց կրոնական համոզմունքները չհարգելու հետ, այլ նպատակը եղել է **աշխարհիկության սահմանադրական սկզբունքի պաշտպանությունը** [cases of Aktas v. France (app. no. 43563/08), 30.07.2009, Bayrak v. France (no. 14308/08), Gamaleddyn v. France (no. 18527/08), Ghazal v. France (no. 29134/08), J. Singh v. France (no. 25463/08) and R. Singh v. France (no. 27561/08)]:

Կրոնական խորհրդանիշների գործածության հիմնահարցը առավել խոցելի է հատկապես այն աշխարհիկ պետություններում, որտեղ իսլամը ավանդաբար համարվում է հասարակության գիտակցության ազդեցիկ գործոն (Թուրքիա, Ղազախստան, Ադրբեջան): Թուրքիայում նմանօրինակ խնդիրները հանրակրթական միջավայրում զգալի թիվ են կազմում: Թերևս հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե պետության միջամտությունը որքանով է համահունչ իր սահմանած իրավաչափ նպատակին: Այս առումով հատուկ ուշադրության է արժանի **Լեյլա Շահինն ընդդեմ Թուրքիայի** գործը, որով Եվրոպական դատարանը հաստատեց Թուրքիայի ուսումնական հաստատություններում գլխաշոր կրելու արգելքի իրավաչափությունը՝ ելնելով այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, ինչպես նաև կրթության աշխարհիկ սկզբունքի ապահովման՝ Թուրքիայի Հանրապետության ստանձնած պարտավորություններից [case of Leyla Şahin v. Turkey]: Չեզոքության սկզբունքից բացի, համընդհանուր ուսումնական համազգեստի

(dress code) ներդրումը դպրոցներում ակնհայտ հիմք է կրոնական հագուստը արգելելու համար [case of Köse and 93 others v. Turkey]:

Հետևաբար, հանրակրթական միջավայրում գլխաշոր կրելու արգելքը՝ կոնվենցիոն իրավակարգավորումների համադրությամբ, չի կարող դիտարկվել ոչ իրավաչափ միջամտություն կրոնական ազատության իրավունքին: Նկատենք նաև, որ 2008 թվականին թուրքական մի քանի կուսակցություններ սահմանադրական փոփոխությունների փաթեթ ներկայացրեցին խորհրդարան՝ մասնավորապես կրթական և այլ պետական հաստատություններում կանանց և աղջիկների գլխաշոր կրելու արգելքը վերացնելու վերաբերյալ: Սահմանադրության մեջ կատարված սույն փոփոխության սահմանադրականության հարցը վիճարկվեց Թուրքիայի Սահմանադրական դատարանում, որի արդյունքում այն ճանաչվեց սահմանադրությանը հակասող: Թուրքիայի Սահմանադրական դատարանի այս որոշումը, ըստ էության, պայմանավորված էր աշխարհիկության սկզբունքի ապահովման կարևորությունից [Սաֆրաստյան և ուրիշներ, 321-322]:

Բերված օրինակներից թվում է, թե կրոնական խորհրդանիշի ակնհայտ ցուցադրությունը կոնվենցիոն տրամաբանությամբ դիտարկվում է խախտում: Բայց հիմնահարցի համակարգային ուսումնասիրությունից պարզվում է, որ այս չափազանց զգայուն հարցում սահմանների հստակ տեղորոշում գրեթե հնարավոր չէ ակնկալել: Մի դեպքում կրոնական սիմվոլիզմի բացահայտ առկայությունը կարող է ներգործել անհատի կրոնահավատամքային զգացմունքների և աշխարհայացքի վրա, ինչպես դա պարզվեց Շվեյցարիայի դեմ բերված գործի հանգուցալուծումից, սակայն մյուս կողմից նման մոտեցումը կարող է միարժեք չընկալվել [case of Lautsi v. Italy]: Այս տեսանկյունից հատկապես արժե-

քավոր է Իտալիայի դեմ կայացված Ստրասբուրգի դատարանի աղմկահարույց դիրքորոշումը: Եվրոպական դատարանը, սկզբնապես անթույլատրելի էր որակել Իտալիայի հանրակրթական դպրոցներում **խաչի պատկերների առկայությունը** (Հանրային վայրերում կամ ճանապարհներին տեղադրված մեծ խաչերը բազմիցս են թիրախավորվում աթեիստների կողմից՝ որպես աշխարհիկության ենթադրյալ խախտման դրսևորումներ, որին ի պատասխան պետությունները դրանք վերագրում են ոչ այնքան կրոնական, որքան մշակութային խորհրդանիշի արժեք: Անխոս, խաչը նախ և առաջ քրիստոնեության առանցքային սիմվոլներից է, բայց այստեղ էական է, թե այդ կրոնը ինչպիսի պատմական նշանակություն ունի տվյալ ազգի համար) իբրև դիմողի աթեիստական համոզմունքներին համապատասխան իր երեխաներին դաստիարակելու իրավունքի խախտում: Դատարանի այս մոտեցումը դժգոհության մեծ ալիք էր առաջացրել եվրոպական պետությունների մեծ մասում՝ այդ թվում Հայաստանի Հանրապետությունում: Իտալիայի կառավարությունը իր բողոքում նշել էր, որ խաչի պատկերի խորհուրդը ոչ միայն կրոնական իմաստ կրող, այլև առավելապես ազգային ինքնության հետ աղերսվող մշակութային սիմվոլ է, պետության պատմական ժառանգության կարևոր բաղադրիչ, հետևաբար դրա արգելումը կարող է վնասել բնակչության մեծամասնության կրոնական զգացմունքները: Դատարանի մեծ պալատը վճռի վերանայման արդյունքում կայացրեց տրամագծորեն հակառակ դիրքորոշում՝ նշելով որ հիշյալ տեսարանները չեն կարող միարժեք կերպով կանխորոշել երեխաների կամ նրանց ծնողների կրոնական նախասիրությունները: **Այս վճռի իրավական և բարոյական արժեքը կարծում ենք այն է, որ ներկայիս ապակրոնականացման, հասարակական գիտակցությունից կրոնի բա-**

ցառման գործընթացների պարագային քրիստոնեական արժեհամակարգի վրա խարսխված եվրոպան հավատարիմ մնաց իր պատմական ավանդույթներին և մարդու իրավունքների վերաբերյալ գերիշխող լիբերալ մոտեցումները չհակադրեց հասարակության համընդհանուր շահի ակնկալիքներին:

Եզրակացություն

Այս ամենի համատեքստում կարող ենք եզրահանգել, որ կրոնական խորհրդանիշը մարդու կրոնի ազատության արտահայտման կարևոր բաղկացուցիչներից է և անհատը այդպես փաստում է իր պատկանելությունը և իր հավատամքը դավանած հոգևոր արժեք-

ների նկատմամբ: Թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հստակ ուղենիշներ է սահմանում այս հարցում, պետությունները շատ տարբեր և երբեմն հակասական կառուցակարգեր են նախանշում: Կրոնական խորհրդանիշի գործածությունը, ՄԻԵԴ իրավական դիրքորոշումներից դատելով, դիտվում է խախտում, եթե այն ունի հատուկ ընդգծված և ցուցադրական բնույթ, որով վտանգվում են հասարակության բարքերը: Կրոնի ազատության իրավունքի արտահայտման իրավաչափ սահմանակումը շատ հաճախ պայմանավորված է պետության չեզոքության և աշխարհիկության նկատառումներով:

Գրականության ցանկ

1. **Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ., Դումանյան Ա., Տեր-Մաթևոսյան Վ., Չաքրյան Հ., Հովհաննիսյան Ա.,** Թուրքիայի Հանրապետության պատմություն, բուհական դասագիրք, Եր., 2014, 396 էջ:
2. Case of **S.A.S. v. France** (app. no. 43835/11), 01.07.2014:
3. Case of **Belcacemi and Oussar v. Belgium** (app. no. 37798/13), 11.07.2017:
4. Case of **Dakir v. Belgium** (app. no. 4619/12), 11.07.2017:
5. Case of **El Morsli v. France** (app. no. 15585/06), 04.03.2008:
6. Case of **Mann Singh v. France** (app. no. 24479/07), 13.11.2008:
7. Case of **Phull v. France** (app. no. 35753/03), 11.01.2005:
8. Case of **Lachiri v. Belgium** (app. no. 3413/09), 18.09.2018:
9. Case of **Hamidović v. Bosnia and Herzegovina** (app. no. 57792/15), 05.12.2017:
10. Case of **Dahlab v. Switzerland** (app. no. 42393/98), 15.02.2001:
11. Cases of **Aktas v. France** (app. no. 43563/08), 30.07.2009, **Bayrak v. France** (no. 14308/08), **Gamaleddyn v. France** (no. 18527/08), **Ghazal v. France** (no. 29134/08), **J. Singh v. France** (no. 25463/08) and **R. Singh v. France** (no. 27561/08):
12. Case of **Leyla Şahin v. Turkey**, (app. no. 44774/98), 10.11.2005:
13. Case of **Köse and 93 others v. Turkey** (app. no. 26625/02), 24.01.2006:
14. Kentucky Revised Statutes KRS Chapter 158, Kentucky General Assembly, 10.10.2022թ. <https://apps.legislature.ky.gov/law/statutes/chapter.aspx?id=37853>

THE USE OF RELIGIOUS SYMBOLS IN EDUCATIONAL INSTITUTIONS:
THE LEGAL-POLITICAL ASPECT

Vahe Torosyan

*Candidate of legal sciences, Associate Professor
EUA, Chair of Law*

Abstract

The use of religious symbols is a component of every individual's right to freedom of religion. By doing so, the follower of the faith certifies his affiliation with his religion or belief. All too often, such an expression of the right to freedom of religion leads to interference, sometimes violating and violating human rights. In this regard, educational institutions pay special attention to the presence of religious attributes, trying to ensure a person's religious freedom on the one hand, and public interest on the other.

In the article are discussed and analyzed the legal and political peculiarities of the use of religious symbols in educational institutions. The topic is modern and unique, especially if we take into account that internal shocks and clashes often occur due to these motives, as evidenced by the incidents in Iran.

Therefore, we tried to reveal the right to freedom of religion regarding the use of religious symbols, to show the attitude of the states and the adopted policy. At the same time, analyzing the case law of the ECHR, we found that the use of a religious symbol can be considered a violation if it has a particularly pronounced character, which endangers the morals of the society. It is also important that the restriction of this right can often be conditioned by the neutrality and secularism of the state.

Keywords: Religious symbol, educational institution, ECHR case law, right to freedom of religion, secularity of the state.

Ներկայացվել է՝ 12.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 02.11.2022թ.

**ԸՍՏ ՄԵՂՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ**

Միսակ Մերուժանի Մարկոսյան

ի.գ.թ., դոցենտ

ՀՀ ոստիկանության կրթահամալիր

misakmmm100@gmail.com

Ամփոփագիր

Հոդվածում փրվում են մեղքի հոգեբանական հայեցակարգի և արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգի համառոտ բնութագրերը, ներկայացվում են ՀՀ նոր քրեական օրենսգրքում մեղքի հոգեբանական հայեցակարգից արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգին անցում կատարելու հիմնավորումները, մատնանշվում են հոգեբանական հայեցակարգի հիմնական թերությունները:

Հեղինակը ներկայացնում է մեղքի և հանցանքի սուբյեկտիվ կողմի (դիտարկության ու անզգուշության) հարաբերակցությունը մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգի համատեքստում, վերլուծության է ենթարկում գերմանական քրեական իրավունքում մեղքի գործառույթները (հիմնավորող և չափող): Հեղինակը հանգում է այն հետևության, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքում օրենսդիրը մեղքին վերապահել է միայն հիմնավորող գործառույթը: Այդ պատճառով հայրենական քրեական իրավունքում դիտարկությունը և անզգուշությունը չունեն մեղքի հետ այնպիսի սերտ կապ, ինչպիսին գերմանական քրեական իրավունքում է: Ըստ հեղինակի՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքում դիտարկությունն ու անզգուշությունը կարող են դիտարկվել միայն որպես սուբյեկտիվ կողմի դրսևորումներ, բայց ոչ որպես մեղքի աստիճաններ կամ մեղքի ձևեր:

Նոր քրեական օրենսգրքում փեղ գտած՝ մեղքին վերաբերող իրավակարգավորումների համակարգային վերլուծության հիման վրա հեղինակը հանգում է հետևության, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքում փրված՝ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի օրենսդրական սահմանումն ամբողջությամբ չի համապատասխանում մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգից բխող՝ մեղքի օրենսդրական բնորոշմանը:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը ներկայացնում է ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի նոր սահմանման վերաբերյալ օրենսդրական առաջարկություն:

Հիմնաբառեր. հանցանք, մեղք, հոգեբանական հայեցակարգ, արժեքաբանական հայեցակարգ, դիտարկություն, անզգուշություն:

Ներածություն

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվեց ՀՀ նոր քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ նոր քր.օր.): Նոր

քր.օր.-ի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր նախկին քրեական օրենսգրքի մի շարք թերություններով, որոնք ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակար-

գում դասակարգվել էին հետևյալ տեսակների՝ հայեցակարգային անճշտություններ և կրիմինալոգիական իրականության անտեսում, սխալներ և հակասություններ, բացեր: Հայեցակարգում որպես նախկին քրեական օրենսգրքի հայեցակարգային անճշտություն նշվել էր նաև ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի ձևակերպումը:

Սույն հետազոտության նպատակն է վերհանել նոր քր.օր.-ում մեղքի հոգեբանական հայեցակարգից արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգին անցում կատարելու հիմնավորումները, բացահայտել արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգի համատեքստում մեղքի բովանդակությունը և դրա հարաբերակցությունը հանցագործության սուբյեկտիվ կողմի հետ, գնահատել ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի օրենսդրական բնորոշման համապատասխանությունը մեղքի արժեքաբանական հայեցակարգին և ներկայացնել այդ սկզբունքի օրենսդրական բնորոշման հեղինակային տարբերակը:

Հետազոտության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ծագում են մեղքի ինստիտուտի օրենսդրական սահմանման և գործնականում դրա կիրառման կապակցությամբ: Հետազոտության առարկան նոր քր.օր.-ում ամրագրված մեղքի ինստիտուտն է:

Հետազոտությունն իրականացվել է տրամաբանական, համակարգային, գործառնության, պատմական և իրավահամեմատական մեթոդների կիրառմամբ:

1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի 4.1.(2) կետում նշվել էր՝ «Քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից է ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: Քրեական իրավունքի տեսության մեջ մեղքի վերաբերյալ առկա են երեք հիմնական հայե-

ցակարգեր՝ վտանգավոր վիճակի, նորմատիվիստական և հոգեբանական: ՀՀ քրեական օրենսդրությունը հիմնված է հոգեբանական հայեցակարգի վրա, որի հիմնական դրույթը հանգում է նրան, որ մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր արարքի և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ և դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևերով: Սակայն հոգեբանական հայեցակարգը հաճախ թույլ չի տալիս ապահովելու արդարությունը և հաշվի առնելու կրիմինալոգիական իրողությունները (...): Ըստ հայեցակարգի 5.1. կետի՝ «Ավանդաբար ՀՀ քրեական իրավունքի տեսությունը և օրենսդրությունը հիմնվում են մեղքի հոգեբանական տեսության վրա: Բայց այս տեսության շրջանակներում հաճախ հնարավոր չի լինում քրեաիրավական շատ խնդիրների արդարացի լուծում գտնել: Դրա պատճառն այն է, որ քրեական իրավունքը արժեքաբանական, նորմատիվիստական գիտություն է: Այն կապված է գնահատականներ տալու հետ: Առանց արժեքաբանական մոտեցման քրեական իրավունքը կդադարի իրավունք լինելուց» [ՀՀ կառավարության 04.06.2015թ. N 25 արձանագրային որոշում]:

Նոր քր.օր.-ի հայեցակարգի մեջբերված դրույթներին համապատասխան՝ նոր քր.օր.-ում մեղքի հոգեբանական հայեցակարգից անցում է կատարվել նորմատիվիստական (արժեքաբանական) հայեցակարգին:

2. Մեղքի հոգեբանական հայեցակարգի համառոտ բնութագիրը

Ինչպես գիտենք, մեղքի հոգեբանական հայեցակարգի համաձայն մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ: Մեղքի հոգեբանական հայեցակարգը բնութագրվում է դասակարգման հստակ համակարգով, որը ներառում է սեռային և տեսակային հասկացություններ (դիտա-

վորությունը և անզգուշությունը որպես մեղքի ձևեր, դրանց տեսակները) [Хилюта, 94]:

Մասնագիտական գրականության մեջ մեղքի հոգեբանական հայեցակարգի վերաբերյալ քննադատությունները հիմնականում հանգում են հետևյալին:

1. Մեղքի հոգեբանական հայեցակարգի տեսանկյունից դիտավորության բովանդակության տարր է համարվում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի կողմից իր արարքի հանրային վտանգավորության գիտակցումը, իսկ անզգուշության դեպքում արարքի նկատմամբ հոգեբանական վերաբերմունքն օրենսդրական ամրագրում չունի: Հստակ չի երևում, թե որն է այն հիմքը, որն ընդհանուր է դիտավորության և անզգուշության համար, և որը թույլ է տալիս միավորել այս հասկացությունները որպես մեղքի ձևեր [Գաբուզյան, 24]:

2. Մեղքի հոգեբանական հայեցակարգի տեսանկյունից դիտավորության օրենսդրական բնորոշումը թույլ չի տալիս հիմնավորել պատասխանատվությունը աֆեկտի կամ ծանր հարբածության վիճակում հանցանքը կատարելու դեպքերում [Գաբուզյան, 23-24]:

3. Մեղքի հոգեբանական հայեցակարգը տեսական մակարդակում չի կարող բացատրել, թե ինչու անձը չի ենթարկվում քրեական պատասխանատվության արարքի հանցավորությունը բացառող այն հանգամանքների դեպքում, որոնք դասվում են ներելի (մեղավորությունը բացառող) հանգամանքների շարքին (օրինակ, անհաղթահարելի հոգեկան հարկադրանքի դեպքում): Չէ՞ որ այդպիսի հանգամանքների պարագայում դիտավորությունը նատուրալիստական իմաստով առկա է [Дубовик, 55]:

4. Մեղքի հոգեբանական հայեցակարգի համաձայն, դիտավորության գիտակցական հատկանիշն արտահայտվում է անձի կողմից իր արարքի հանրային վտանգավորությունը

գիտակցելով: Սակայն անձի կողմից իր արարքի հանրային վտանգավորության սեփական գնահատականը կարող է լինել խիստ սուբյեկտիվ: Հետևաբար, սեփական արարքի սոցիալական նշանակության սուբյեկտիվ գնահատականը չպետք է հանդես գա որպես դիտավորության (հետևաբար նաև մեղքի) առկայության կամ բացակայության չափանիշ: Անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար էականը պետք է լինի ոչ թե այն, թե ինչպես է նա գնահատել իր կոնկրետ արարքի սոցիալական նշանակությունը, այլ այն, որ նա գիտակցել է իր **արարքի փաստական հանգամանքները** (առկա է դիտավորությունը արժեքանաբանական հայեցակարգի տեսանկյունից) և գիտակցել է այդ փաստական հանգամանքների առկայության պարագայում իր **արարքի հակահրավականությունը** (առկա է մեղքը արժեքանաբանական հայեցակարգի տեսանկյունից) [Назаренко, 100]:

3. Մեղքի արժեքաբանական (նորմափոփոխական) հայեցակարգի համառոտ բնութագիրը

Մեղքի հոգեբանական հայեցակարգի վերոնշյալ թերություններից թույլ է տալիս խուսափել մեղքի արժեքաբանական (նորմափոփոխական) հայեցակարգը:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ա. Հ. Գաբուզյանը, ներկայումս այդ հայեցակարգի վրա են հիմնված աշխարհի բոլոր իրավական, ժողովրդավարական պետությունների քրեական օրենսդրությունները: Ըստ այս հայեցակարգի՝ մեղքը արարքի և այն կատարողի պարսավելիությունն է: Մեղքը առկա է այն դեպքում, երբ կատարած արարքի համար անձին կարելի է պարսավել: Իսկ դա հնարավոր է այն դեպքում, երբ անձը գիտակցում է իր արարքի հակահրավականությունը կամ թեև չի գիտակցում, սակայն կարող էր գիտակցել: Սրա հետ կապված՝ անհրաժեշտ է

քննարկել նաև այն հարցը, թե ինչ պետք է հասկանալ արարքի հակաիրավականությունը գիտակցել ասելով: Խոսքն այս դեպքում ոչ թե այն մասին է, որ անձը պետք է գիտակցի, թե իր արարքը կոնկրետ որ օրենքով կամ նորմով է արգելված, այլ ընդհանուր պատկերացում ունենա այն մասին, որ արարքն արգելված է օրենքով, կամ հնարավոր է, որ արգելված է, որովհետև պարսավելի արարք է [Գաբուզյան, 24-26]:

Մեկ այլ բնութագրման համաձայն՝ մեղքը անձի վարքագծի սոցիալ-էթիկական բացասական հատկությունն է, նրա արարքի պարսավելիությունը [Paros, 11]: Այդ մոտեցումն արտահայտվել է նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Գերագույն դատարանի որոշումներից մեկում՝ «Մեղքը պարսավելիությունն է: Դատարանն անձին պարսավում է այն բանի համար, որ նա որոշել է գործել ոչ իրավաչափ կերպով, թեև կարող էր գործել իրավաչափ կերպով: Պարսավանքի հիմքը կայանում է նրանում, որ անձն ուներ ազատ, պատասխանատու և բարոյական կողմնորոշման հնարավորություն, կարող էր գործել իրավունքի համար կամ իրավունքի դեմ» [Голованова и др., 381]:

Մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգը հիմնված է անձի կամքի ազատության գաղափարի վրա: Եթե անձը գիտակցել է, որ իր արարքը հակաիրավական է, ուրեմն նա հասկացել է նաև, որ կա այդ իրավիճակում վարքագծի իրավաչափ տարբերակն ընտրելու հնարավորություն: Հետևաբար, հանցանքի կատարումը նրա ազատ կամարտահայտության արդյունք էր, ինչի համար էլ նա արժանի է անհատական պարսավանքի: Վերջին հաշվով հենց դա է մատնանշում կոնկրետ անձի մեղավորությունը [Головненков, 15]:

4. Մեղքը և հանցանքի սուբյեկտիվ կողմը (դիտավորությունը և անզգուշությունը):

4.1. Մեղքի և հանցանքի սուբյեկտիվ կողմի (դիտավորության և անզգուշության) հարաբերակցությունը

Մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգի համատեքստում դիտավորությունն ու անզգուշությունը ոչ թե մեղքի ձևեր են, այլ հանցանքի սուբյեկտիվ կողմի հատկանիշներ, իսկ մեղքը հանցանքի ինքնուրույն հատկանիշ է՝ հանցակազմից դուրս: Մեղքի այդպիսի ընկալման դեպքում հնարավոր է, որ անձի արարքում առկա լինեն քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր տարրերը և հատկանիշները, այդ թվում՝ սուբյեկտիվ կողմը (դիտավորությունը կամ անզգուշությունը), բայց բացակայի մեղքը (արարքի պարսավելիությունը) [Жалинский, 210]:

Մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգով առաջնորդվելու պարագայում իրավակիրառողը կոնկրետ դեպքում անձի մեղավորության հարցը լուծելու համար ոչ թե վերլուծում է անձի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքի նկատմամբ (դա արվում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի հատկանիշները անձի արարքում հաստատելիս), այլ պարզում է, թե արդյոք անձին կարելի է պարսավել այն բանի համար, որ նա ընտրել է վարքագծի հակաիրավական տարբերակը [Козочкин, 88]:

4.2. Մեղքի գործառույթները (նշանակությունը) գերմանական քրեական իրավունքում

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսդրությունը հիմնված է մեղքի նորմատիվիստական հայեցակարգի վրա: Սակայն, ի տարբերություն հայրենական քրեական իրավունքի, գերմանական քրեական իրավունքում մեղքը դիտարկվում է ոչ միայն որպես **հանցանքի պարտադիր հատ-**

կանիշ, այլև՝ որպես պատիժ նշանակելիս հաշվի առնվող չափանիշ:

Այդ մասին են վկայում Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում առկա այնպիսի ձևակերպումները, որոնք վերաբերում են **մեղքի աստիճաններին**: Օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի 57 (ա) պարագրաֆի 1-ին մասի համաձայն, ցմահ ազատազրկման ձևով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշում կայացնելու պայմաններից մեկն այն է, որ պատժի հետագա կրումը հիմնավորված չէ դատապարտյալի **մեղքի առանձնահատուկ ծանրությամբ** [Головневков, 117]: Կամ, օրինակ, 113 պարագրաֆի 4-րդ մասի համաձայն, դատարանը կարող է պատիժ չնշանակել իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրած անձի նկատմամբ, եթե վերջինիս **մեղքը աննշան է** [Головневков, 224]:

Այսինքն, ըստ գերմանական քրեական իրավունքի, մեղքն իրականացնում է ինչպես **հիմնավորող գործառույթ** (անձի մեղավորության հաստատումն անհրաժեշտ է նրա նկատմամբ պատժի նշանակումը հիմնավորելու համար), այնպես էլ **չափող գործառույթ** (անձի մեղավորության աստիճանի որոշումն անհրաժեշտ է նշանակվող պատժի տեսակի և չափի որոշման կամ պատժից ազատելու հարցի լուծման համար) [Жалинский, 324]:

Այլ կերպ ասած, եթե դիտավորությունն ու անզգուշությունը պատասխանում են **«ինչպե՞ս է անձը կարգավորել իր վարքագիծը»** հարցին, ապա մեղքի հիմնավորող գործառույթը պատասխանում է **«ինչու՞ է անձը ենթակա քրեական պատասխանատվության»** հարցին, իսկ մեղքի չափող գործառույթը՝ **«արդյո՞ք քրեական պատասխանատվության ենթակա անձը պետք է պատիժ կրի, եթե այո, ապա ի՞նչ չափով»** հարցերին:

Գերմանական քրեական իրավունքի գիտության մեջ ընդունված է, որ դիտավորյալ հանցանքների դեպքում մեղքի աստիճանն ավելի բարձր է, քան անզգույշ հանցանքների դեպքում: Դա հիմնավորվում է նրանով, որ դիտավորյալ հանցանք կատարած անձի մեղավորությունը բնութագրվում է վարքագծի սահմանված իրավական կանոնների նկատմամբ թշնամական կամ անտարբեր վերաբերմունքով, իսկ անզգույշ հանցանք կատարած անձի մեղավորությունը բնութագրվում է իրավակարգում բովանդակվող՝ անհրաժեշտ զգունության պահանջի նկատմամբ ոչ հոգատար վերաբերմունքով [Жалинский, 227]:

Ինչպես տեսնում ենք, մեղքի **չափող գործառույթը** սերտորեն կապված է հանցանքի սուբյեկտիվ կողմի դրսևորումների՝ **դիտավորության և անզգուշության** հետ: Դա է պատճառը, որ գերմանական քրեական իրավունքի գիտության մեջ «դիտավորություն» և «անզգուշություն» եզրույթները երբեմն օգտագործվում են ոչ միայն հանցանքի սուբյեկտիվ կողմի դրսևորումների, այլ նաև անձի մեղավորության աստիճանների իմաստով:

4.3. Մեղքի չափող գործառույթի բացակայությունը հայրենական քրեական իրավունքում

Նոր քր.օր.-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը մեղքին **չի վերապահել չափող գործառույթ**, քանի որ նոր քր.օր.-ում բացակայում են գերմանական քրեական օրենսդրությանը բնորոշ՝ մեղքի աստիճանների մասին նշումները: Այսպես, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները սահմանելիս օրենսդիրը որպես պատժի տեսակը և չափը որոշելու չափանիշներ ամրագրել է հանցագործությամբ պատճառված վնասի բնույթը և չափը, հանցագործության եղանակը, տեղը, ժամանակը, հանցագործության շարժառիթները և նպատակները, **դիտավորության կամ անզգուշության տեսակը**, պատասխանատ-

վությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությունը (քր.օր.-ի 69-րդ հոդվածի 2-րդ մաս): Անձի մեղքի կամ մեղավորության աստիճանների մասին որևէ նշում չկա նաև քր.օր.-ի 70-րդ և 71-րդ հոդվածներում (պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները) կամ այլ նորմերում:

6. ՀՀ նախկին սահմանադրություն, ՀՀ ՊՏ 2005.12.05 / Հատուկ թողարկում, հոդված 1426), 11.10.2022, <http://concourt.am/armenian/constitutions/const1995.htm>:
7. ՀՀ գործող քրեական օրենսգիրք, 2021.05.17-2021.05.30, 13.10.2022, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169566>:

LIMITATIONS ON PERMISSIBILITY OF SCIENTIFIC, MEDICAL OR OTHER EXPERIMENTS. THE PROHIBITION ON HUMAN REPRODUCTIVE CLONING

Artur Nahapetyan

EUA, Chair of Law

nahapetyanartur@gmail.com

Abstract

The RA constitution underwent significant changes in the referendum of December 6, 2015, which were also related to the basic rights of a person and a citizen, clarifying and detailing the provisions dedicated to basic rights, the cases of limitation, the bases, as well as the principles underlying these limitations.

As a result of the amendments, part 3 of article 25 of the RA Constitution established such types of activities as eugenic experiments, turning human organs and tissues into a source of profit, human reproductive cloning in the fields of medicine and biology, which can directly or indirectly lead to violation of not only physical and mental immunity right, but also to violation of the other fundamental rights. And the part 4 of the same article established the minimum guarantees, under the conditions of which it is only possible to subject a person to scientific, medical or other experiments.

These changes lead to the need to review physical and mental immunity right, its guarantee, the legislation regulating this field, taking into account the experience and best practices of other countries and international organizations in this area.

Thus, this article presents limits on the permissibility of scientific, medical or other experiments and in that context the absolute prohibition of human reproductive cloning under the light of study of different scholars' ideas, views, approaches and a number of international and legal documents.

Based on the analysis, some theoretical generalizations were made and scientific-practical conclusions were presented.

Keywords: scientific, medical, other experiments, limits of permissibility, human reproductive cloning, absolute prohibition.

Ներկայացվել է՝ 17.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 02.11.2022թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Նորիկ Էդիկի Շահնազարյան

հայցորդ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

norik.shaxnazaryan@yandex.ru

Ամփոփագիր

Հոդվածում հետազոտական վերլուծության են ենթարկվում սահմանադրական մոդելների զարգացման միտումները պայմանական և արդի ժամանակներում: Սահմանադրական մոդելները բազմազան են՝ կապված նրա էությունից ու բովանդակությունից: Հիմնականում լինում են ազատական (լիբերալ) և ավտորիտար, գրված և չգրված, ճկուն և կոշտ և այլն: Սահմանադրական մոդելը՝ հասարակության զարգացման իրավաբանական հետազոտություն է:

Հոդվածում սահմանադրական մոդելը բնութագրվում է, որպես որոշակի սոցիալ-քաղաքական մոդելում՝ հասարակական հարաբերությունների, սահմանադրական կարգավորման բովանդակության և եղանակների, սահմանադրական ինստիտուտների կիրառման նկատմամբ:

Կարծում ենք, որ սահմանադրական մոդելի հասկացությունը ընդգրկում է բազմաթիվ չափորոշիչներ, որոնց միջոցով տարբերվում են սահմանադրության բնութագրական հատկանիշները: Սահմանադրական մոդելի հասկացությունը բավականին լայն է, քանի որ ներառում է հասարակության և պետության կազմակերպման իրավական ձևերը, անհատի իրավական կարգավիճակի հիմքերը, պետական (և ընդհանրապես հանրային) կառավարման սահմանները և մեթոդները, սահմանադրական հարաբերությունների սոցիալական բովանդակությունը (համամարդկային և ազգային արժեքների, ինչպես նաև սոցիալական շահերի հաշվառման տեսանկյունից), այդ հարաբերությունների կայունությունը և հարաշարժությունը, սահմանադրության որոշ ֆորմալ-իրավաբանական բնութագրեր:

Հոդվածում եզրահանգում է արվել սահմանադրական մոդելների պայմանական ծագումնաբանության, դրանց հասկացության հստակեցման, բնութագրման, նշանակության և արդի ժամանակաշրջանում զարգացման միտումների վերաբերյալ:

Հիմնաբառեր: սահմանադրություն, սահմանադրական մոդել, ավտորիտար, ազատական, իրավագիտակցություն, իրավական մշակույթ, տեսլական:

Ներածություն

Հոդվածի արդիականությունը կայանում է նրանում, որ սահմանադրական մոդելների զարգացման նշանակությունը, ներկայումս առավել քան երբևէ, կարևորում է հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների ու նորմերի գործադրման հուսալի երաշխավորումը, այդ հարաբերու-

թյունների սահմանադրականացումը՝ որպես իրավական, ժողովրդավարական համակարգերի և սկզբունքների կայացման նախադրյալ:

Հոդվածի նպատակն է հիմնավորել, որ սահմանադրական մոդելն արտացոլում է տվյալ հասարակության իրավագիտակցության և իրավական մշակույթի աստիճանը,

պետական կառուցվածքի և կառավարման ձևի տեսլականը հիմնական օրենքում:

Հետազոտության առարկան են հանդիսացել սահմանադրական մոդելների էությունն ու հասկացությունը:

Առաջին սահմանադրական մոդելի ծագումը կապված է Ամերիկայի և Եվրոպայի զարգացած երկրներում ազատ շուկայական տնտեսությունների հաստատման հետ: Դա լիբերալ-կապիտալիստական մոդելն էր: Առաջին սահմանադրությունները պարունակում էին գաղափարներ, հայեցակարգային մոտեցումներ, որոնք արտահայտվել էին նոր ժամանակների մտածողների կողմից: Նրանց գաղափարների հիմքում ընկած էին ավատական միահեծան կառավարման ձևից հրաժարումը, մարդու բնական իրավունքների ընդունումը, ժողովրդավարության որոշակի տարրերի ներածումը (կառավարման հանրապետական ձև, խորհրդարանը որպես միակ օրենսդիր մարմին, հավասար ընտրական իրավունք): Այս երեք հարցերը. իշխանություն, մարդու իրավունքներ և դեմոկրատիա՝ կազմում էին տվյալ ժամանակաշրջանի սահմանադրական մոդելի բովանդակության էությունը: Հասարակության և իշխանությունների միջև հարաբերությունները կառուցվում էին քաղաքացիական հասարակության հայեցակարգի հիման վրա, այսինքն՝ պետությունը պիտի հարգեր մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ճանաչում էին մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, իշխանությունների բաժանման սկզբունքը, տեղական ինքնակառավարկման համակարգը: Ֆրանսիայի Սահմանադրությունում ճանաչվում էր նաև միահեծանության դեմ պայքարով պարտադրված «մարդանց եղբայրությունը» (արժեքների հայեցակարգը ծագել է հետագայում XIX դարի վերջերում - XX դարի սկզբներում ավստրիական և գեր-

մանական գրականության մեջ, իսկ համամարդկային արժեքների հայեցակարգը միայն XX դարի 30-50-ական թթ): Սահմանադրությունը տարբերակում էր իշխանությամբ «չօտարվող, բնական» մարդու իրավունքները որպես քաղաքական (պետական) հանրային անդամի քաղաքացու իրավունքներից: Սոցիալ-տնտեսական իրավունքները (աշխատանքի, հանգստի, թոշակի, կրթության, առողջապահության և այլն) այդ շրջանի սահմանադրություններով չէին նախատեսվում: Սահմանադրությունները որևէ կոլեկտիվ տարրեր (քաղաքացիների միավորումների, հասարակության մեջ դրանց դերի ընդունում) չէին պարունակում: XIX դարի վերջում և XX դարի սկզբում Եվրոպայի, Լատինական Ամերիկայի որոշ երկրներում մարդու իրավունքները, առանձին դեմոկրատական ինստիտուտները զարգացում ստացան, սակայն հիմնականում առաջին սահմանադրական մոդելը՝ սահմանափակ ժողովրդավարական բնույթի գործիքակազմային լիբերալ-կապիտալիստական տիպի մոդելն է: Այս մոդելին դասվող սահմանադրությունը՝ գործիքակազմային սահմանադրություն է, նրանում հիմնական հատվածը նվիրում էին պետական մարմիններին, դրանց հարաբերություններին, գործունեությանը: Բոլոր դեպքերում տվյալ մոդելը հիմնադրել է սահմանադրականության սկիզբը՝ ունենալով հասարակության, պետության, մարդու և քաղաքացու կարգավիճակի զարգացման համար զգալի նշանակություն [*Ромашов*]:

Առաջին Համաշխարհային պատերազմից հետո (1914-1918թթ) կապիտալիստական երկրներում և 1917թ. ծագած առաջին սոցիալիստական ավտորիտար պետությունում Ռուսաստանի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետությունում, ինչպես նաև Մոնղոլիայում ծագեցին այլ սահմանադրական մոդելներ: Կապիտալիզմի երկրներում

նոր մոդելը հասունանում էր դանդաղ: Առաջին «ծիծեռնակներ» հանդիսացան 1917թ. Մեքսիկայի և Գերմանիայի Սահմանադրությունները (Վեյմարյան Սահմանադրություն, 1919թ), որոնք ընդունվեցին հեղափոխական իրադարձությունների հետևանքով, իսկ Ավստրիայի 1920 թ. Դաշնային սահմանադրական օրենքները, որոնք հանդիսացան Ավստրո-Հունգարական կայսրության փլուզման արդյունք, ընդունվեցին նաև Չեխոսլովակիայի և Լեհաստանի 1921թ. Սահմանադրությունները: Սոցիալական հարաբերություններին վերաբերվող առանձին նոր դրույթներ առկա էին Չիլիի 1926թ., Իռլանդիայի 1937թ. Սահմանադրությունների մեջ: Այս սահմանադրություններից որոշները հեռացան սահմանադրական կարգավորման ավանդական օբեկտից (իշխանություն, ինչպես նաև անհատների քաղաքական և անձնական իրավունքներ) և քայլ կատարեցին դեպի սոցիալական պետության հայեցակարգը: 1917թ. Մեքսիկայի Սահմանադրության մեջ (ուղղումների հսկայական թվով գործում է նաև մեր օրերում) խոսվում էր «ժողովրդի կյանքի տնտեսական, օրենսդրական և սոցիալական մակարդակի անդադար բարելավման վերաբերյալ» (հոդ. 3), պնդվում, «որ պետությունը ուղղորդում է ազգային զարգացումը, ապահովելով դրա ամբողջական բնույթը» (հոդ. 25), խոսվում անհատների, խմբերի և սոցիալական դասակարգերի միջև հարստության և եկամուտների բաշխման (հոդ.25), սոցիալական արդարության (հոդ.28) վերաբերյալ: 1919թ. Վեյմարյան Սահմանադրությունը, որը պատմության մեջ մտավ որպես առաջին եվրոպական սոցիալական սահմանադրություն [Жалинский, Рерихи, 26-27], բացի որոշ սոցիալ-տնտեսական իրավունքներից պարունակում էր նաև մասնավոր սեփականության սոցիալական գործառնության վերաբերյալ ձևակերպումներ, նախատեսում էր դեմոկրա-

տական ինստիտուտների զարգացումը: Ճշմարիտ է, դա չխանգարեց Գերմանիայում ֆաշիստների իշխանության գալուն: Բացի դրանից, սահմանադրությունը մնաց ֆորմալ գործող նաև նրանց իշխանության ժամանակաշրջանում (փոփոխություններով, որոնք ձևափոխում էին վերջինիս էությունը):

Ավստրիայի 1920թ. առաջին Դաշնային Սահմանադրական օրենքը խոսում էր դասակարգային առավելությունների բացառման (հոդ.7), հողային բարեփոխությունների, «աշխատավորության և ծառայողների մասնագիտական պալատների», «աղքատների» հովանավորության (հոդ. 12), էթնիկ խմբերի իրավասարության վերաբերյալ: 1937թ. Իռլանդիայի Սահմանադրության մեջ արդեն առկա էր «Սոցիալական քաղաքականության հիմնական սկզբունքները» հատուկ գլուխ, որը կազմված էր մեկ հոդվածից (հոդ. 45): Այդ գլխում և այլ հոդվածներում խոսվում էր, որ «սեփականության իրավունքը պետք է կարգավորվի սոցիալական արդարության սկզբունքին համապատասխան» (հոդ. 43), սակավաթիվ անհատների ձեռքերում սեփականության կենտրոնացման անթույլատրելիության, որ «պետությունը պետք է պաշտպանի հասարակությանը անարդար շահագործումից» (հոդ. 45): Գլխավորապես, Առաջին Համաշխարհային պատերազմից հետո կապիտալիստական պետություններում ծագեցին նոր սահմանադրական մոդելի տարրեր, որոնք պատկանում էին ապագային: Նշված և որոշ այլ պետությունների սահմանադրություններում դեռ չկային հասարակական կառուցվածքի հիմքերի համալիր կոպլեքսային կարգավորումներ: Հանգամանորեն չէր խոսվում սեփականության ձևերի, տնտեսական կողմնորոշման, պետական իշխանության բնույթի, քաղաքական կուսակցությունների, այլ հասարակական միավորումների, տեղի ինքնակառավարման վերաբերյալ, չնա-

յած այդ շրջանում այն սկսվեց տարածվել բազմաթիվ երկրներում: Այս սահմանադրությունները չէին նախատեսում լիարժեք դեմոկրատական ինստիտուտներ: Այսպես՝ կանանց ընտրական իրավունքը ոչ միշտ էր իր իրավական ձևակերպումն ստանում սահմանադրությունում նույնիսկ դեմոկրատական երկրներում (Ֆրանսիայում դա տեղի ունեցավ միայն Երկրորդ Համաշխարհային պատերազից հետո 1946թ. [Закорова]: Այս մոդելի սահմանադրություններում միայն նշվում էին որոշ նոր մոտեցումներ և սկզբունքներ: Բոլոր դեպքերում, ակնհայտ է, որ այս մոտեցումները էական տարբերվում են առաջին սահմանադրական մոդելի սկզբունքներից: Դա սոցիալական տարրերով գործիքակազմային լիբերալ-կապիտալիստական մոդել է, հիմնականում, դեմոկրատական բնույթով: Այն իրենից ներկայացնում է դեպի սոցիալական սահմանադրությունը որոշակի քայլ:

Այս մոդելին զուգահեռ ավտորիտար սոցիալիզմի երկրներում՝ ԽՍՀՄ-ում, Մոնղոլիայում, որը այդ ժամանակաշրջանում համարվում էր ինքուրույն պետություն, Առաջին Համաշխարհային պատերազմից հետո ձևավորվեց սկզբունքորեն այլ մոդել: Այդ շրջանում երևան եկան 1918թ. ՌԴՍՀ, 1924թ. և 1936թ. ԽՍՀՄ Սահմանադրությունները: Դա ավտորիտար սոցիալիզմի քաղաքական ոչ դեմոկրատական մոդել էր, բացահայտ գաղափարականացված, հենված մարքսիզմ-լենինիզմ սկզբունքների վրա: Տվյալ մոդելը գործիքակազմային էր աննշան աստիճանով: Պետական մարմինների գործունեությանը, հարաբերություններին քիչ նշանակություն էր տրվում: Գլխավոր խնդիրը հանդիսանում էր հասարակությունում կոմունիստական կուսակցության ղեկավար դերը:

Խորհրդային սահմանադրություններին համապատասխան յուրաքանչյուր երկրի բնակչություն բաժանվեց աշխատավորու-

թյան (ամենից առաջ բանվորության, չքավոր գյուղացիների և միջին խավի) և «շահագործողների» (մասնավոր սեփականատերեր և այլն): Շահագործողների դասը ենթակա էր չեզոքացման սոցիալիստական ձևափոխությունների արդյունքում (գործնականում կիրառվում էր նաև հարկադրական միջոցներ, օրինակ, աքսոր), մասնավոր սեփականությունը արգելված էր, ենթակա չեզոքացման: Ժողովրդի իշխանության վերաբերյալ թեզը մերժվեց և փոխարինվեց դասակարգային պետության վերաբերյալ թեզով: Հոչակելով աշխատավորության իշխանությունը, պրոլետարիատի դիկտատուրան՝ ԽՍՀՄ 1977թ. Սահմանադրությունը հաստատեց, որ պրոլետարիատի դիկտատուրան դադարել է, պրոլետարիատի դիկտատուրայի պետությունը վերաճել է հասարակական սոցիալիստական պետության: Տեղական ինքնակառավարումը սկզբունքորեն մերժվում էր, ստեղծվում պետական մարմինների միասնական համակարգ՝ խորհուրդներ, որոնք ընտրովի մարմիններ էին, սակայն «շահագործողները քաղաքական իրավունքներից զուրկ էին (ԽՍՀՄ՝ մինչև 1936թ. Սահմանադրության ընդունումը, Մոնղոլիայում՝ մինչև 50-ական թվականների վերջը): Հոչակվում էր պետության և հասարակության մեջ մեկ (միակ) կոմունիստական կուսակցության ուղղորդիչ և ղեկավարող դերը: Այս դերը ամրագրվեց սահմանադրություններում (ԽՍՀՄ՝ 1936թ, սակայն նախկինում այն փաստացի գոյություն ուներ և ամրագրվեց համապատասխան օրենսդրությամբ): Դրա հետևանքով ԽՄԿԿ հնարավոր չէր հեռացնել իշխանությունից, օրինակ, ընտրությունների միջոցով (գործնականում հեռացումը իրականացվեց 1980 վերջում-1990 սկզբում հակաբռնատիրական դեմոկրատական հեղափոխության ընթացքում հիմնականում խաղաղ ճանապարհով): Այս մոդելի սահմանադրությունները հոչակում էին միակ

պարտադիր՝ մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսությունը: Այլ տեսանկյունների քարոզչությունը պատժվում է համապատասխան քրեական օրենսդրությամբ:

Ներկայումս այս մոդելին են դասվում պահպանված սոցիալիստական երկրների սահմանադրությունները (Հյուսիսային Կորեա, Վիետնամ, Չինաստան, Կուբա, Լաոս), չնայած դրանք բոլորը ունեն իրենց առանձնահատկությունները: Բացի դրանից, 1990-2000թթ. գրեթե դրանցից յուրաքանչյուրում կատարվել են փոփոխություններ, որոնք որոշակի թուլացրել են վերջիններիս ավտորիտար բնույթը (հիմնականում տնտեսության ոլորտում), թույլատրված է մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը, բազմակուսակցությունը (Չինաստանում) [Խաչատրյան], «շահագործողները» օգտվում են քաղաքական իրավունքներից, իսկ Չինաստանում 2000թ. սկզբից նրանց ընդունում են Կոմունիստական կուսակցության շարքեր և նշանակում ղեկավար պաշտոնների:

Սահմանադրական չորրորդ մոդելը ծագեց Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո աշխարհում դեմոկրատական շարժման զարգացման իրավիճակում ֆաշիզմի պարտության պայմաններում: Այս մոդելի որոշակի դրույթների վրա իր ազդեցությունը ունեցավ ԽՍՀՄ սահմանադրական փորձը: ԽՍՀՄ Սահմանադրություններում (հատկապես հետագա) պարունակվում էին որոշ դրույթներ, որոնք այդ շրջանում բացակայում էին Արևմուտքի երկրների հիմնական օրենքներում: Շարադրվածը վերաբերվում է կուսակցության (սակայն միայն Կոմունիստական կուսակցության ղեկավար դերին ամրագրման առումով և այլ հասարակական միավորումների դերին, սոցիալ-տնտեսական իրավունքներին, հասարակության զարգացման մեջ «աշխատավորության» (աշխատանքի մարդու) դերի ընդունմանը, հասարակու-

թյան զարգացման մեջ պետության դերին, հասարակական արդյունքի բաշխման սկզբունքներին: Ավտորիտար սոցիալիզմի պայմաններում այս դրույթներից շատերը ուղղակի հանդիսանում էին կարգախոսներ: Մարդու դերը հասցվում էր ուղղակի կուսակցական-պետական մեքենայի «պտուտակին» («պտուտակ»՝ Ի. Վ. Ստալինի արտահայտությունը): Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո սահմանադրությունների ստեղծողները սահմանադրական շինարարության սոցիալիստական փորձում տեսան «ռացիոնալ հատիկ» և, հատկապես սոցիալական իրավունքների ճանաչման հարցում;

Ներկայումս տարածում են ստացել ժամանակակից սահմանադրության սոցիալ-գործիքակազմային դեմոկրատական մոդելների հիմնական գծերը: Այդ գծերը իրենց արտահայտումն էին ստացել 2004թ. Եվրոպական սահմանադրության նախագծի (որը չնդունվեց) մեջ, որի հիմնական հատված կազմում էր տնտեսական և սոցիալական հարցերի կարգավորումը: Նման մոդելի գլխավոր բաղադրիչները՝ սեփական ազգային առաձնահատկությունների հաշվառմամբ, ընդունում են պետությունների մեծ թիվ, այդ թվում հետխորհրդային և այլ պետություններ, որոնք ծագել են երկրագնդի տարբեր մայրցամաքներում, ներառյալ Աֆրիկան: Աշխարհի տարբեր երկրներում ավտորիտար ռեժիմների չեզոքացումից հետո ընդունվեցին 60-ից ավելի սահմանադրություններ (որոշ երկրներում կրկնակի), այդ թվում 27՝ հետսոցիալիստական պետություններում: Դրա հետ կապված գրականության մեջ առաջադրվում է համաշխարհային սահմանադրական գործընթացում հետսոցիալիստական սահմանադրության վերաբերալ հարցը: Քաղաքագետների, իսկ երբեմն այդ պետությունների ղեկավարների ընդհանուր գնահատականը հետևյալն է. հետսոցիալիստական սահմա-

նադրությունները՝ լավն են: Սակայն առկա են նաև հակառակ կարծիքները: Լեհաստանում միջազգային կոնֆերանսում, որը նվիրված էր հետսոցիալիստական սահմանադրությունների տասնյակ տարիների փորձի վերլուծությանը, բուլղարացի գիտնական Յա. Ռադևը խոսում էր, որ 1991թ. Բուլղարիայի Սահմանադրությունը «կազմվել է էկլեկտիկ պատճենման ուղիով», դա «սահմանադրական կոկտեյլ է» [Ten Years of Democratic Constitutionalism in Central and Eastern Europe, 365]: Գլխավոր զեկուցող լեհ պրոֆեսոր Վ. Սոկոլովի ընդհանուր եզրակացությունը հետևյալն է. «Մեր տարածաշրջանի ներդրումը (խոսք է գնում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հետսոցիալիստական երկրների վերաբերյալ) համաշխարհային սահմանադրականության ինտելեկտուալ զարգացման մեջ տեսականորեն քիչ է:

Իսկապես, հետսոցիալիստական երկրների սահմանադրություններում որևէ սկզբունքային նոր որոշումներ չկան: Որոշ լրացումներ բոլոր դեպքերում առկա են: Դրանք պայմանավորված են հասարակության անցումային շրջանի առկայությամբ:

Ժամանակակից հետսոցիալիստական սահմանադրությունների ընդունումով անցում կատարվեց դեպի ժամանակակից սոցիալական, ժողովրդավարական կարգերի: Առաջարկված այլ անվանումները (հետինդուստրիալ, տեղեկատվական, բաց հասարակություն, դեմոկրատական կապիտալիզմ և այլն) դեռ կենսունակ չեն, սակայն հասկանալի է, որ հիմա «առաջադեմ» պետություններում, որտեղ իշխանության գլխում կանգնած կամ երկար ժամանակ եղել են սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, դա բացարձակ այլ կապիտալիստական հասարակություն է, քան XVII դարում - XX դարի առաջին կեսում: Դա սոցիալ-կապիտալիզմ է, որը վերաիմաստավորված ձևով ներառում է ավանդական սոցիալիստական ուսմունքի հիմքեր և կապի-

տալիզմին հակադիր համարվող որոշ տարրեր (օրինակ, սոցիալական արդարությունը, աշխատավորության իրավունքը, տնտեսական զարգացման պլանավորումը, կանխատեսումը): Սակայն հասարակության անցումային շրջանում կատարվում են բազմաթիվ բացասական երևույթներ (բնակչության կենսամակարդակի նվազեցում, աղքատների և հարուստների կտրուկ բևեռացում, կոռուպցիայի, հանցագործությունների աճ և այլն) [Պողոսյան], [Հարությունյան, Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը]: Նման անցումային շրջանը անխուսափելի է, եթե ցանկանում ենք ապրել ապագան լավագույն հասարակության մեջ: Շատ կարևոր է կարողանալ նվազագույնի հասցնել նման անցման բացասական կողմերը:

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը. «Մենք հանգել ենք այն հետևությանը, որ հատկապես հասարակական վերափոխումների պայմաններում սահմանադրականության ձևափոխումները դառնում են անկայունության և սոցիալական կատակլիզմների հիմնական պատճառը: Դրանց հաղթահարումը պահանջում է նպատակաուղղված և շարունակական սահմանադրական ախտորոշման հիման վրա գործուն և համակարգային սահմանադրական մշտադիտարկման առկայություն: Դա թե՛ պատմության դասն է և թե՛ ժամանակի մարտահրավերը, ինչը պահանջում է անհետաձգելի ուշադրություն և համարժեք գործողություն» [Հարությունյան, Սահմանադրական մշտադիտարկում, 76]:

Ընդհանրապես, հետսոցիալիստական սահմանադրությունները արտացոլում են անցումային շրջանի դրական և բացասական կողմերը: Դրանք ներառել են մարդու դարավոր փորձով մշակված համամարդկային արժեքները (սեփականության ձևերի բազմազանություն, գործարարական գործունեության

ազատություն, ժողովրդի իշխանություն, պետական իշխանության ճյուղերի տարանջատում, քաղաքացիների սոցիալ-տնտեսական իրավունքներ և այլն), սակայն միևնույն ժամանակ պահպանվել են հնի որոշ տարրեր (պետության ավելորդ ուժեղ կարգավորիչ դերը, մինչև ավտորիտար տարրեր, մարդու և քաղաքացու իրավունքների անբավարար երաշխիքներ, բյուրոկրատիզմ, դատական համակարգի ձևափոխում հասարակական կարծիքի և հասարակական վերահսկողության անտեսում): Նորի և հնի միավորումը սահմանադրական իրավունքի առանձին ինստիտուտներին տվել է յուրօրինակ բնույթ, որը էապես ազդում է սահմանադրական կարգավորումների արդյունավետության վրա: Եվ պատահական չէ, օրինակ՝ երեսուն տարվա ընթացքում ազգային Սահմանադրությունը ենթարկվել է էական փոփոխությունների, իսկ առաջիկայում նախատեսվում է երրորդ փոփոխությունը: Իհարկե, օրենքները, այդ թվում սահմանադրությունը ենթակա են փոփոխության՝ ըստ ժամանակի պահանջի, սակայն փոփոխությունները պետք է լինեն հիմնավորված, բխեն հասարակության զարգացման օրինաչափություններից և համարժեք լուծումներ տան ներքին և արտաքին մարտահրավերներին:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սահմանադրական մոդելի հասկացությանը բնորոշ են հետևյալ հիմնական հատկանիշները.

Առաջին, ծագելով պատմական զարգացման բեկումնային փուլում, այս կամ այն սահմանադրական մոդելը հանդիսանում է հասարակության գլխավոր, արմատական պահանջների պատասխան: Սահմանադրական

մոդելը արտացոլում է հասարակության իրավագիտակցության մակարդակը և որոշակի աշխարհընկալումները, երկրի սոցիալական և քաղաքական-իրավական զարգացման առանձնահատկությունները:

Երկրորդ, սահմանադրական մոդելը բնութագրվում է օրգանական միասնությամբ: Սահմանադրական մոդելը՝ որոշակի հասարակական հարաբերությունների կարգավորման միասնական համակարգ է: Այն համամարդկային արժեքների տեսանկյունից, կիրառելով դրանք կոնկրետ երկրի առանձնահատուկ պայմանների հաշվառմամբ, ձևավորում է իրավական հիմք՝ հասարակական և պետական, հաստատությունների, հասարակության մեջ տարբեր կոլեկտիվների իրավական դրության, անհատի իրավական կարգավիճակի ամրագրման համար:

Երրորդ, սահմանադրական մոդելը՝ հասարակության զարգացման իրավաբանական հետազոծն է: Այն ոչ միայն և ոչ այնքան ամրագրում է ներկան, որքան հանդիսանում է կողմնորոշիչ դեպի ապագան:

Չորրորդ, ցանկացած նոր սահմանադրական մոդել, հանդիսանում է սոցիալական ցնցումներից հետո հասարակության կայունացման փաստ: Այս կամ այն մոդելի ընդունումից հետո ստեղծվում են պայմաններ հասարակական հարաբերությունների զարգացման համար: Իհարկե, դա պահանջում է նաև նոր օրենսդրության համակարգի առկայություն:

Եզրահանգում ենք որ, սահմանադրական մոդելի հասկացությունը կապված է իրավաբանական, սոցիալ-քաղաքական գործոններից, որոնք որոշիչ դերակատարում ունեն սահմանադրության այս կամ այն մոդելի որաշակիացման համար:

Գրականության ցանկ

1. Խաչատրյան Հ.Ա. Չինաստանի ժողովրդական Հանրապետության Սահմանադրությունը. Տեսական-իրավական վերլուծություն: Երևան, 2012:
2. Պողոսյան Գ.Ա. Հայ հասարակությունը XXI դարասկզբին: Երևան, 2006,
3. Հարությունյան Մ.Ա. Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը: Երևան, 2014:
4. Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական մշտադիտարկում: Երևան, 2016, էջ 76:
5. Ten Years of Democratic Constitutionalism in Central and Eastern Europe, Lublin, 2001. էջ365.
6. Ромашов Р.А. Современный конституционализм: теоретико-правовой анализ; дисс. д.-ра юрид.наук. Санкт-Петербург,1998.
7. Жалинский А., Рерих А. Введение в немецкое право. М., 2001, с.26-27.
8. Захарова М.В. Французская правовая система: теоретический анализ М., 2016:

THE TRENDS IN THE DEVELOPMENT OF CONSTITUTIONAL MODELS

Norik Shahnazaryan

Researcher

NAS RA, Institute of Philosophy, Sociology and Law

norik.shaxnazaryan@yandex.ru

Abstract

The trends in the development of constitutional models in historical and modern times are subjected to research analysis in the article. Constitutional models are diverse, related to its nature and content. Basically, there are liberal and authoritarian, written and unwritten, flexible and rigid, etc. The constitutional model is the legal trajectory of society's development.

In the article, the constitutional model is characterized as a certain socio-political approach to social relations, the content and methods of constitutional regulation, the application of constitutional institutions.

We believe that the concept of a constitutional model covers many criteria by which the characteristic features of the constitution are distinguished. The concept of the constitutional model is quite broad, as it includes the legal forms of organization of society and the state, the basis of the legal status of the individual, the boundaries and methods of state (and public in general) management, the social content of constitutional relations (from the point of view of accounting for universal and national values, as well as social interests), the existence and mobility of those relations, some formal-legal characteristics of the constitution.

In the article, a conclusion was made regarding the historical genealogy of constitutional models, clarification of their concept, characterization, significance and development trends in the modern period.

Keywords: constitution, constitutional model, authoritarian, liberal, legal awareness, legal culture, vision.

Ներկայացվել է՝ 22.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 02.11.2022թ.

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (12-14-ՐԴ ԴԴ.).
ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, ՍՄԲԱՏ ԳՈՒՆԴՍԱԲԼ**

Պավլիկ Գագիկի Փոլադյան

հայցորդ

ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն

p.poladyan@gmail.com

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է Հայ Առաքելական սուրբ Եկեղեցու պետական գործառույթների վերաբերյալ գիտական վերլուծություններին զարգացած միջնադարում (12-14-րդ դդ.)՝ ըստ Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի աշխատությունների:

12-րդ դարի վերջերից հայ ժողովուրդը լարել էր իր հոգևոր-ֆիզիկական բոլոր կարողությունները՝ պետականությունը կրկին վերականգնելու համար: Դատաստանագրքերը այդ մղումի հոգևոր կողմի արտահայտությունն էին: Ինքը՝ Մխիթար վրդ. Գոշը, «Նախադրության» Բ գլխում «Դատաստանագիրք» գրելու անհրաժեշտությունը բացատրում է փաստերկու պատճառով, որոնց մեջ Մխիթար Գոշը ընդառաջ է գնում ցանկալի գալիքին և սահմանում ապագա թագավորության պետաիրավական հիմունքները: Մխիթար Գոշը քաջատեղյակ էր մեր պատմությանը. նրա համար անցյալը սոսկ պատմություն չէ, այլև դաս ապագայի համար, ու նա պաշտպանում է Արշակունիների չիրականացած ձգտումը՝ Բագրատունիների դառը փորձը չկրկնելու համար, այն է՝ կենտրոնաձիգ, իրավական պետության կառուցումը: Այս առումով հետաքրքիր է այն, որ Սմբատ Սպարապետը, տարբերվելով միջնադարյան հայ մյուս գործիչներից, իր քաղաքական նպատակներին ու իրավական մտրեցումներին հաղորդում է շեշտված աշխարհիկ բնույթ: Եկեղեցին ենթարկելով աշխարհիկ իշխանությանը՝ Սմբատ Գունդստաբլը կարծում է, որ հոգևորականությունը չպետք է զբաղվի աշխարհիկ գործերով:

Հիմնաբառեր. Եկեղեցի, Մխիթար Գոշ, Սմբատ Գունդստաբլ, կանոնաիրավական համակարգ:

Ներածություն.

13-րդ դարի սկզբներին աշխուժանում է կյանքը Հյուսիսային Հայաստանում: Զաքարյան իշխանական տան ջանքերով, ազատվելով մահմեդական գերիշխանությունից՝ Հայաստանը հնարավորություն է ստանում տնտեսական, քաղաքական, մշակութային վերելք ապրելու, ինչի արդյունքում կարճ ժամանակ հետո հիմնվում են Սանահինի և Հադպատի վանքերն ու վարդապետարանները, Գլաձորի համալսարանը, Որոտնավանքն ու

Տաթևի վանքը և այլն: Այս դարաշրջանում Հայոց Եկեղեցում գործունեություն են ծավալում այնպիսի հայտնի գործիչներ, ինչպիսիք են՝ Ներսես Շնորհալին, Հակոբ Ա Կլայեցին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Տիրատուր Կիլիկեցին, Եսայի Նչեցին, Մխիթար Գոշը, Սմբատ Գունդստաբլը և այլք:

12-րդ դարի վերջերից հայ ժողովուրդը կենտրոնացրել էր իր հոգևոր-ֆիզիկական բոլոր կարողությունները այդ նպատակին հասնելու համար: Դատաստանագիրքը այդ հոգևոր

կողմի արտահայտությունն էր: Ինքը՝ Մխիթար վրդ. Գոշը, «Նախագրության» Բ գլխում դատաստանագիրք գրելու անհրաժեշտությունը բացատրում է տասներկու պատճառով:

Իրավական առօրյայի բավարարման համար դատաստանագրքի անհրաժեշտության մասին է վկայում նաև Ներսես Լամբրոնացին.

«Յամս քահանայապետութեանն Հայոց Գրիգորի, որ երրորդ էր նախնեացն իւրոց ի Հռոմկլայն, յաջորդ աթոռոյն, թուին ՌԽԲ, յոթևտասներորդ ամի նորին հայրապետութեան, խնդիր եղև առ նոյն սրբազանն ի քաղաքաց և ի գաւառաց բնակչաց՝ քաղաքական արինացն. զի որք Իսմայելացոց էին իշխանք ի քաղաքս և դատաւորք, զդատ Հայաստանեայցս ոչ դատէին. այլ զխնդրողն իրաւանց՝ առ իւրեանց արէնս առաքէին. զի այս էր ի նախագլուխ մելիքացն հրաման առ դատաւորս քաղաքաց՝ յիւրեանց արինացն դատ թողուլ զնոսին: Եվ եկեալ ոսոխք յեկեղեցին՝ հարցան էին արէնս ի քահանայից և ի քահանայապետաց. ոչ ունէին գիրս, որով ընտրեսցեն զիրաւունս. զոր և այլոց ազգաց տեսանէին՝ քրիստոնէից և մսիմաց. այսինքն հռոմայեցոց, հելլենացոց, ասորաց, եգիպտաց, արաբացոց, պարսից և այժմու իշխողացս թուրքաց: Ի խնդիր եկին ապա առ հայրապետս ի Հայաստանեայց՝ արթունք, կղերիկոսք և աշխարհականք. խեթկեալք յայլոց ազգաց և նախանձեալք զբարուրքն, և խուզեալ ընդ նա մեր յարկեղս գրոց կաթողիկոսարանին՝ ոչ գտաք արէն. բայց միայն զկանոնականս, որ ի սուրբ հարցն ժողովելոց էր դրեալ. և որ ի նոյն յարեցաւ ի նոսանէ կանոնս զգուշաւորս եկեղեցոյ: Իսկ քաղաքի արէնս ոչ գտաւ ի մէջ Հայոց, ոչ յեկեղեցիս և ոչ առ իշխանս» [Զարբհանայան, 754-755]:

Այս հատվածում միջնադարի մեծ իրավաբանը նշում է, որ հայերն օրենքներ տեսնում էին շատ ազգերի մոտ և կարիք ունեին սուրբ հայրերի կանոնների հիման վրա ունենալու

սեփականը, որի ստեղծումը ժամանակի հրամայականն էր:

Իր «Դատաստանագրքով» Մխիթար Գոշը ընդառաջում է ցանկալի գալիքին և սահմանում ապագա թագավորության պետաիրավական հիմունքները: «Դատաստանագրքում» պետությունը պատկերվում է միապետական թագավորության ձևով: Թագավորության նպատակահարմար կառուցվածքը կենտրոնացված իշխանությունն է՝ միապետի գլխավորությամբ: Մխիթար Գոշը քաջատեղյակ է մեր պատմությանը. նրա համար անցյալը սուկ պատմությունն է, այլև դաս ապագայի համար ու նա պաշտպանում է Արշակունիների չիրականացած ձգտումը՝ Բագրատունիների դառը փորձը չկրկնելու համար, այն է՝ կենտրոնածիզ, իրավական պետության կառուցումը: Իսկ ահա Կիլիկյան հայկական թագավորությունը, որը տևեց շուրջ երեք դար (1080- 1375), հայ մշակույթին տվեց նշանավոր և երևելի գործիչներ, նրանց թվում իր արժանի տեղն ունի ականավոր զորավար, խոհեմ դիվանագետ, հմուտ օրենսգետ ու նշանավոր մատենագիր Սմբատ Գունդատաբլը (1208-1276) (*Գունդատաբլ (connectable – հին ֆր.) – հեծելազորի պետ, հեղափոխում բողոք ռազմական ուժերի գլխավոր հրամանատար, սպարապետ (զորավար): Հայաստանում սպարապետի ձեռքում էր կենտրոնացված զինվորական ողջ իշխանությունը, ըստ էության, նա կատարում էր ռազմական նախարարի, բանակի գլխավոր հրամանատարի, շտաբի պետի իրավունքներն ու պարտականությունները: Այդ պաշտոնը Կիլիկյան Հայաստանում ստեղծվեց Լևոն Բ թագավորի օրոք: Կիլիկիայում առաջին գունդատաբլը Սմբատ Սպարապետի հայր Կոստանդինն էր [Գալստյան], [Սուքիասյան, Սմբատ Սպարապետը որպես զորավար և դիվանագետ, 98–101], [Սուքիասյան, Սմբատ Սպարապետը որպես պարմիչ, օրենսգետ և օրենսդիր, 100–109]:*

Նրա անունը առավելապես հայտնի է իր ստեղծած «Դատաստանագրքով»:

Խիստ մտահոգվելով Կիլիկիայի հայկական պետության ներքին բարեկարգության խնդիրներով՝ Սմբատ Սպարապետը 1265 թվականին ձեռնամուխ եղավ կազմելու Կիլիկյան պետության ազգային օրենսգրքի համահավաք ժողովածուն՝ դրանով իսկ ծածկելով այն բացը, ինչից դժգոհում էր Ներսես Լամբրոնացին՝ նշելով, որ Կիլիկիայի հայերը «ոչ ունեին գիրս, որով ընտրեսցին զիրաւունս, զոր և այլոց ազգաց տեսանէին» [Սամուելյան, 72]: *Ներսես Լամբրոնացու մտահոգության դրսևորումը հերթական անգամ ցույց է տալիս այն, որ հայ բարձրաստիճան հոգևորականն ու ՀԱԵ-ն իրենց գործունեության տիրույթում են դիտարկել օրենսդիր կարգավորումների հարցը:*

Կիլիկիայի իրավական համակարգը և իրավական մշակույթի տարրերը նկարագրելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ համակարգի և իրավական մշակույթի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, որոնք պայմանավորված էին մի շարք գործոններով: Կիլիկիայի հայկական թագավորությունը ժառանգել էր բուն Հայաստանի իրավական մշակույթն ու իրավական կարգավորման աղբյուրները: Դա արդյունք էր հին ու միջնադարյան իրավունքի էթնիկ-կրոնական պայմանավորվածության, որի հետևանքով հայ բնակչության արտագաղթին հաջորդում էր իրավական մշակույթի տեղաշարժը:

Վերջիններից հատկապես աչքի է ընկնում Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը»՝ որպես պետական պաշտոնական օրենսգիրք:

«Դատաստանագիրքը» բաղկացած է առաջաբանից և 7 բաժնից, ունի 202 հոդված: Դրանք արձարծում են Կիլիկիայի հայկական պետության տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքին վերաբերող հարցեր: «Դատաստանագրքում»

սահմանված են պետական-վարչական, քաղաքացիական, ամուսնաընտանեկան, ժառանգական, եկեղեցական, նաև դատական իրավունքին վերաբերող օրենքներ:

Գոշի ու Գունդստաբլի Դատաստանագրքերն ունեին տարբերություններ: Եթե իրավաբանական գործնական նպատակներից զատ՝ Մխիթար Գոշը հետապնդել է քաղաքական հատուկ նպատակներ, մասնավորապես՝ ամրապնդել Հայ եկեղեցու դիրքերը, միավորել հայ ժողովրդի բոլոր ուժերն արտաքին թշնամու դեմ՝ հանուն անկախության վերականգնման, հայկական ապագա պետությունում հաստատել ամուր օրինականություն և այլն: Իսկ արդեն Սմբատ Սպարապետը, տարբերվելով միջնադարյան հայ մյուս գործիչներից, իր քաղաքական նպատակներին ու իրավական մոտեցումներին հաղորդում է շեշտված աշխարհիկ բնույթ. եկեղեցին ենթարկելով աշխարհիկ իշխանությանը՝ Սմբատ Գունդստաբլը կարծում է, որ հոգևորականությունը չպետք է զբաղվի աշխարհիկ գործերով:

«Չէ ամենևին պատեհ որ եպիսկոպոս յոչինչ ազգ գործ ա խոհական և ոչ ի բան մերձենայ, քան զամեն եկեղեցոյն և զեկեղեցականացն դատաստներոյն բաներն ուղղէ ի ճշմարիտն զի չկարէ ոք երկուց տէրանց ծառայել՝ որպէս հրամայէ Քրիստոս» [Սամուելյան, 24], իսկ մեկ այլ տեղ նա սահմանում է. «երէցն պարտ է որ երբ զայս առնու նա հերիք այնէ ու այլ մարմնաւոր գործ չայնէ և այլ չգիտենայ յաշխարհի բանէն, քան զեկեղեցին մէն զժամն» [Սամուելյան, 76]:

Թագավորական և եկեղեցական իշխանության առաջնության խնդիրը լուծելով հոգուտ առաջինի՝ նա «Դատաստանագրքում» գրում է. «Յառաջ պատեհ համարեցաք զվիճարկեալ դատաւորացն գրեի բան յառաջ զթագաւորացն [Սամուելյան, 5]:

Ըստ էության, քննելով երկու դատաստանագրքերի կանոնների բնույթը, նրանց հեր-

թագալությունը, կարելի է ենթադրել, որ Սմբատ Գունդստաբլը թարգմանել-փոխադրել է Գոշի աշխատությունը:

Եզրակացություն

Հոդվածում ներկայացվում են Հայ Առաքելական սուրբ եկեղեցու պետական գործառույթները զարգացած միջնադարում (12-14-

րդ դդ.), ինչպես նաև Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի աշխատությունների վերաբերյալ գիտական վերլուծություններ:

Որպես հիմնական ամփոփում կարելի է ասել, որ Հայ եկեղեցական, կանոնաիրավական համակարգը նպաստում էր պետական համակարգի ամրապնդմանը և համախմբմանը:

Գրականության ցանկ

1. Գ. Զարբհանալյան, «Մատենադարան Հայկական Թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889
2. Խ. Սամուելյան, «Հին հայ իրավունքի պատմություն», Հ.Լ: ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիա – Հայկական Ֆիլիալ. Երևան, 1939 թ.
3. Ա. Գ. Գալստյան, «Սմբատ Սպարապետ», Հայպետհրատ, Երևան, 1961,
4. Ա. Սուքիասյան, «Սմբատ Սպարապետը, որպես զորավար և դիվանագետ» (Բանբեր Երևանի համալսարանի, 1973, N 1),
5. Ա. Սուքիասյան, «Սմբատ Սպարապետը, որպես պատմիչ, օրենսգետ և օրենսդիր» (Բանբեր Երևանի համալսարանի, 1974),

STATE FUNCTIONS OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH IN THE DEVELOPED MIDDLE AGES (12-14TH CENTURIES). MKHITAR GOSH, SMBAT GUNDSTABLE

Pavlik Poladyan

Researcher

EUA, Chair of Law

p.poladyan@gmail.com

Abstract

The article is dedicated to the scientific analysis of the state functions of the Armenian Apostolic Church in the developed Middle Ages (12-14th centuries), according to the works of Mkhitar Gosh and Smbat Gundstable. From the end of the 12th century, the Armenian people strained all their spiritual and physical abilities to restore statehood again. The Codexes were an expression of the spiritual side of that drive. Mkhitar Gosh explains the necessity of writing the "Codex" for twelve reasons, in which Mkhitar Gosh anticipates the desired future and defines the constitutional foundations of the future kingdom. Mkhitar Gosh was well aware of our history. for him, the past is not just history, but also a lesson for the future, and he supports the unfulfilled aspiration of the Arshakunis in order not to repeat the bitter experience of the Bagratunis, that is, the construction of a centrist, legal state. In this sense, it is interesting that Smbat Sparapet, different from other medieval Armenian figures, gives his political goals and legal approaches an emphasized secular character. Subordinating the church to secular authority, Smbat Gundstable believes that the clergy should not be involved in secular affairs.

Keywords: Church, Mkhitar Gosh, Smbat Gundstable, Church-canon law system.

Ներկայացվել է՝ 11.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 02.11.2022թ.

ԼԵԶՎԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հրանուշ Ժորայի Թովմասյան

բ.գ.դ., պրոֆեսոր

ԲՊՀ, Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն

anushtovmasyan@yahoo.com

Ամփոփագիր

Հետազոտությունը նվիրված է հոգելեզվաբանության առանցքային թեմաներից մեկին՝ լեզվական ունակությանը: Հետազոտության նպատակն է վեր հանել լեզվական ունակության կառուցվածքաբովանդակային առանձնահատկությունները հոգելեզվաբանական քննության տեսանկյունից: Հոդվածում քննարկման առարկա են դարձել լեզվական ունակության ձևավորման, կառուցվածքային, բովանդակային և գործառման առանձնահատկությունները: Ուսումնասիրությունը կատարել ենք տեսական և էմպիրիկ հետազոտական մեթոդներից դիտման-զննման, ներհայեցման, համեմատության, վերլուծության, համադրության և ինդուկցիայի մեթոդներով: Արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ լեզվական ունակությունը բաղկացած է լեզվական մեխանիզմից, լեզվակրի լեզվական կառուցվածքից և խոսքային մեխանիզմից, որոնց բովանդակության ձևավորումը հասարակահեն է: Լեզվական մեխանիզմը լեզու յուրացնելու ունակություն է, խոսքային մեխանիզմը խոսքային գործունեություն իրականացնելու մեխանիզմն է: Լեզվակրի լեզվական կառուցվածքը քառաբաղադրիչ է՝ բաղկացած հնչյունական, բառային, քերականական և իմաստային բաղադրիչներից: Լեզվի յուրացման գործընթացում լեզվակրի լեզվական կառուցվածքի յուրաքանչյուր բաղադրիչ գիտակցության վերահսկողության և գիտակցական աշխատանքի գործունեության տեսանկյունից անցնում է գիտակցական վերահսկողության երեք փուլ՝ գործուն գիտակցություն, գիտակցական վերահսկողություն և անգիտակցական վերահսկողություն: Այսպես, խոսելիս լեզու սովորողի գիտակցությունը նախնական փուլում «արթուն» վիճակում ընտրում է այն միավորները, որոնք անհրաժեշտ են իր հաղորդակցական նպատակին հասնելու համար: Այս դեպքում խոսքագործունեությունը տեղի է ունենում գործուն գիտակցության պայմաններում: Երբ լեզու սովորողի՝ լեզվական միավորների ընտրության ժամանակ նա ընտրում է ճիշտ ձևերը, սակայն գիտակցությունը «արթուն» չէ, տեղի է ունենում խոսքագործունեության գիտակցական վերահսկողություն: Եվ երբ լեզու սովորողը ճիշտ ընտրում է լեզվական միավորները առանց գիտակցելու՝ ինչու, խոսքագործունեությունը տեղի է ունենում անգիտակցական վերահսկողության պայմաններում. սկսում է խոսքագործունեության ավտոմատացումը:

Հիմնաբառեր. լեզվական մեխանիզմ, լեզվակրի լեզվական կառուցվածք, խոսքային մեխանիզմ:

Ներածություն

Լեզվական ունակությունը հոգեֆիզիոլոգիապես պայմանավորված, սակայն հասարակական երևույթ է, որն ապահովում է լեզվական հանրույթի կողմից լեզվական միավորների յուրացումը, վերարտադրումը, պատ-

րակական երևույթ է, որն ապահովում է լեզվական հանրույթի կողմից լեզվական միավորների յուրացումը, վերարտադրումը, պատ-

շաճ ընկալումը և ձևավորումը [Залевская], [Field], [Menn]: Այսինքն՝ լեզվական ունակությունը մարդու կողմից լեզվի յուրացման և տիրապետման ունակությունն է:

Մարդու խոսքային վարքի ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս *անհատի լեզվական ունակությունը* պայմանականորեն տարանջատել հետևյալ երեք չափումների՝

1. *լեզվական մեխանիզմ* կամ (մայրենի և/կամ օտար) լեզու յուրացնելու ունակությունը,
2. *լեզվակրի լեզվական կառուցվածք* կամ լեզվակրի գիտակցության մեջ բնական լեզվի միավորների և դրանց՝ հաղորդակցման ժամանակ գործառելու նորմերի ու կանոնների մտավոր կառուցվածքը և կազմակերպումը,
3. *խոսքային մեխանիզմ* կամ խոսքային գործունեություն իրականացնելու մեխանիզմը, այն է՝ ձևավորել և ընկալել խոսք:

Լեզվական մեխանիզմի էության քննությունը հանգել է երկու իրարամերժ տեսակետների՝ *ռացիոնալիստների* և *էմպիրիկների* [Уланович,46]: Ռացիոնալիստները պնդում են, որ մարդը ծնվում է բնածին խորքային լեզվական գիտելիքներով, որն ապահովում է մարդու կողմից լեզվի յուրացումը: Էմպիրիկները կարծում են, որ լեզվական ունակությունը հասարակական երևույթ է, որը ձևավորվում է հասարակական գործոնների ազդեցության ներքո, մասնավորապես, մարդկանց՝ համատեղ կենսագործունեության ժամանակ նրանց հաղորդակցման պահանջի և հաղորդակցական նպատակների իրագործման արդյունքում:

Գիտնականներ Լ. Վիգոտսկու, Ա.Ն. Լեոնտևի և Ա. Լուրիայի [Выготский], [Леонтьев], [Лурия] կարծիքով (մարդու գիտակցության մեջ առկա) լեզվական կառուցները բնածին չեն: Դրանք մեզ շրջապատող օբյեկտիվ իրականության երևույթների և դ-

րանց փոխհարաբերությունների գիտակցական արտացոլման արդյունք են: Լեզվական ունակության զարգացումը պայմանավորված չէ որևէ բնածին լեզվական գիտելիքով. դրա ձևավորման և զարգացման նախադրյալը բացառապես հասարակական գործունեությունը և գործունեության կանոններն են: Լեզվական ունակությունը զարգանում է միմիայն արտալեզվական իրականության խթանների շնորհիվ:

Ա. Շախնարովիչը [Шахнарович, 186] կարծում է, որ մարդը ժառանգում է լեզվի յուրացման նախադրյալները ֆիլոգենետիկ (նախածննդյան, պատմական) եղանակով, որի շնորհիվ տեղի է ունենում օբյեկտիվ իրականության ճանաչումը և դրա արտացոլումը մարդու գիտակցության մեջ: Հասարակական յուրացվում է մարդու կողմից օնտոգենետիկ (անհատական, հետծննդյան) զարգացման արդյունքում, այսինքն՝ մարդու գիտակցությունն արտացոլում է այն տիպային գործողությունների կաղապարները, որոնք ի հայտ են գալիս որոշակի (ներքին կամ արտաքին) պայմաններում և որոշակի ձևերով՝ անհատի մարդկային պահանջները բավարարելու համար:

Լեզվակրի լեզվական կառուցվածքի ուսումնասիրությունն ուղղված է բացահայտելու նրա «լեզվական պահոցի» բովանդակությունը և կառուցվածքը: Ներկայումս լեզվակրի լեզվական կառուցվածքում կարելի է տարանջատել լեզվական գիտելիքի մի քանի բաղադրիչ՝ *հնչյունական, բառային, քերականական* և *իմաստային բաղադրիչները*: Որպեսզի մարդը կարողանա լեզու յուրացնել և տիրապետել լեզվի, նրա գիտակցությունը պետք է պատշաճ կազմակերպի նրա լեզվական պահոցի կառուցվածքը: Ունենալով պատշաճ կառուցված լեզվական գիտելիքներ՝ մարդը կարող է դուրս բերել (տեղայնացնել) դրանք իր երկարաժամկետ հիշողության լեզվական

պահոցից և հաղորդակցվել, որը ժամանակի ընթացքում հանգեցնում է խոսքային գործունեության ավտոմատացման և այլընտրանքային խոսքային գործողությունների ճկուն կիրառման, այսինքն՝ համապատասխան հաղորդակցական իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու և լեզվի միջոցով պատշաճ արձագանքելու:

Երկլեզվյա անձանց (մեր դեպքում՝ ուսումնական միջավայրում օտար լեզու սովորող ուսանողների) գիտակցության զուգորդային (ասոցիատիվ) կառուցվածքի փորձառական ուսումնասիրությունները փաստում են, որ մայրենի լեզվի լեզվական միավորները՝ բառապաշարը, լեզվակրի գիտակցության մեջ ավելի լավ են համակարգված, ավելի կայուն իմաստային կապերի մեջ են այլ բառերի հետ, համապատասխան իմաստային դաշտերի սահմաններն ավելի հստակ են, և դրանց միջուկն ավելի կայուն է:

Օտար լեզվի բառապաշարի իմաստային դաշտերը պատշաճ կազմակերպված չեն, միավորների միջև կապերը հաճախ եզակի են, պատահական, իրավիճակային և անհատական: Երկլեզվյա անհատի գիտակցության մեջ օտար լեզվի բառապաշարի մեծ մասը ներկայացված է ինքնուրույն իմաստային դաշտերով, որոնք, ըստ իմաստի և միավորների բաշխման, անհատական բնույթ են կրում, ինչպես նաև չեն հարաբերակցվում մայրենի լեզվի համարժեք իմաստային դաշտերի կառուցվածքի և բովանդակության հետ: Անհատի լեզվական պահոցի կազմակերպման նշյալ խնդիրները, հատկապես՝ կապված բառապաշարի հետ, թույլ են տալիս բացատրել օտար լեզու յուրացնելու և տիրապետելու խնդիրները, համարժեք (որպես թարգմանության որակի չափանիշ) թարգմանություն կատարելու, ինչպես նաև երկլեզվյա համաժամանակյա բանավոր թարգմանության խնդիրները:

Ասվածն ավելի հստակ պատկերացնելու համար վերլուծենք իմաստային դաշտի մեկ օրինակ հայերենում և ռուսերենում: Այսպես, հայերենի *մեկնել* բառը մտնում է հայ լեզվակրի *հեռանալ/ ժամանել* իմաստային դաշտի մեջ: Դրա իմաստային շրջանակը և այլ բառերի հետ կապակցելիությունն ավելի ազատ է, քան ռուսերենում: Հայ լեզվակիրը կարող է ասել *մեկնել աշխատանքի, մեկնել արտերկիր, մեկնել հանգստի, մեկնել գործուղման, մեկնել հանդիպման, մեկնել խնջույքի, մեկնել համալսարան* և այլն: *Մեկնել* բառն ուղղակի նշանակում է որոշակի մեկնակետից գուրս գալ և ուղևորվել մեկ այլ վայր: Սրան հակառակ ռուսերենի համապատասխան իմաստային դաշտը, որի միավորները կրում են *examb* արմատը շատ ավելի լայն է և իմաստային առումով ավելի տարբերակված: Ուստի համարժեք թարգմանություն անելու կամ պատշաճ հաղորդակցվելու համար հայ լեզվակիրը պետք է լիարժեք պատկերացնի ռուսերենի նշյալ իմաստային դաշտը, այլապես, կառաջանան հացորդակցական խոտաններ: Ռուսերենի համապատասխան իմաստային դաշտը ներառում է *уехать, отъехать, выехать, съехать* բառերը, որոնք համապատասխանում են հայերենի *մեկնել* բառին: Օրինակ՝ հայերենի *Նա մեկնեց Մոսկվա* նախադասության ռուսերեն համարժեքն է *Он уехал в Москву: Նա արդեն մեկնել է* (եթե, նկատի ունենք, որ նա այլևս այստեղ չէ), ռուսերեն պետք է թարգմանենք *Он уже отъехал*: Պատկերացնենք մի իրավիճակ, երբ հյուրանոցում ադմինիստրատորն ասում է մաքրուհուն՝ *Կարող ես կարգի բերել 48 համարը, հաճախորդը մեկնել է*: Այս նախադասության ռուսերեն համարժեքն է՝ *Можешь обратиться в 48-м номере, клиент съехал*.

Ուստի մայրենի և օտար լեզուների համապատասխան իմաստային դաշտերը և դրանց միավորները ճիշտ կիրառելու համար անհրա-

Ժեշտ է հստակ պատկերացնել համապատասխան հաղորդակցական իրավիճակը և ունենալ բավարար լեզվական գիտելիքներ:

Լեզվակրի լեզվական կառուցվածքում առանձնացնում են լեզվական գիտելիքի մի շարք բաղադրիչներ:

1. *Հնչյունական բաղադրիչը* կազմված է լեզվի հնչյունների չափանմուշներից (էտալոն) և խոսքում դրանց առկայացման տարբերակներից: Չափանմուշն ամփոփում է թե՛ արտասանական, թե՛ լսողական գիտելիքներ: Օրինակ՝ հայ լեզվակիրն իր գիտակցության մեջ հստակ պատկերացնում է բաղաձայնների ընդհանրական, հնչության արտասանությունը և դրանց դիրքային արտասանական տարբերակները: Այսպես, հայ լեզվակիրը գիտի որ *գեպ, գարուն, գույնզգույն* բառերում գ-ն հնչում է [q], իսկ *կարագ, կարգ* բառերում [p]: Այսպես, *կարագ, կարգ* բառերը լսելիս նա կարողանում է ճանաչել, նույնականացնել համապատասխան բառը՝ չնայած նրան, որ հնչել է [p], այլ ոչ թե [q]: Նրա հնչյունական բաղադրիչը գործառում է որպես պատշաճ ընկալման երաշխավոր: Սա էլ իր հերթին հանգեցնում է ընկալման ավտոմատացման:

Սակայն, լեզու սովորողի դեպքում այդպես չէ, քանի որ նրա լեզվական ունակությունը չի ձևավորվել համապատասխան լեզվական հանրույթում և նրա՝ խոսքում հնչյունները տարբերակելու և նույնականացնելու գիտակցական երաշխավորը՝ հնչյունական բաղադրիչը, բավարար զարգացած չէ, որպեսզի կարողանա անսխալ տարբերակել խոսքում հնչող բառերի հնչյունային կազմը և նույնականացնել դրանք: Սա իր հերթին հանգեցնում է թերընկալման/ թյուրընկալման և հաղորդակցման խոտանների կամ ձախողման: Օրինակ՝ եթե անգլերեն խոսքում հնչում է *The education department has rejected the application*, որը հնչում է [ði ,edʒu'keɪʃn dɪ'pɑ:tmənt əz rɪ'dʒektɪd ði ,æprɪ'keɪʃn], ապա լեզու սովորողը,

որը յուրացնում է լեզուն ակադեմիական միջավայրում, իրական անգլալեզու խոսքային միջավայրից կտրված, կարող է պատշաճ չնույնականացնել [,edʒu'keɪʃn] և [əz] բառերը, քանի որ նրա հնչյունային բաղադրիչը ճանաչում է [,edʒə'keɪʃn] և [hæz] ձևերը, որը նա հիմնականում հանդիպել է անգլերեն լեզուն յուրացնելու պրակտիկայում, որից էլ կառաջանա թերըմբռնում:

2. «*Ներքին բառապաշարի*» ձևավորումը և կազմակերպումը մեր գիտակցության մեջ մեկ այլ մինչև վերջ չլուծված խնդիր է: Բառապաշարի բաղադրիչը կազմակերպված է իմաստային դաշտերի միջոցով, որոնք ունեն կենտրոն և եզրային գոտիներ: Կենտրոնում դաշտի ամենաուժեղ իմաստն արտահայտող միավոր(ներ)ը՝ բառ(եր)ն է, իսկ եզրային գոտիներում այդ իմաստը կրող, սակայն կենտրոնի հետ ավելի թույլ զուգորդվող բառերը: Օրինակ՝ հայ լեզվակիրը, *նարնջագույն* գույնը պատկերացնելիս, իր գիտակցության մեջ՝ որպես եզրային գոտու միավոր տեսնում է նաև *ծիրանագույնը*՝ որպես հայ լեզվակրի մշակույթի անքակտելի մաս: Սակայն, նույն նարնջագույն իմաստային դաշտում ոռու, անգլիացի կամ ցանկացած այլ լեզվի լեզվակիր երբեք չի տեսնի ծիրանագույնը, քանի որ դա ուղղակի բացակայում է այն մշակույթում, որտեղ նա յուրացրել է այդ լեզուն: Սրանով էլ բացատրվում է լեզվի յուրացման հասարակական-մշակութային նախադրյալը:

3. *Քերականական բաղադրիչն* ամփոփում է լեզվական միավորները կապակցելու ձևաբանական և շարահյուսական գիտելիքներ: Օրինակ՝ հայ լեզվակիրը գիտի, որ հայերենում նպատակը կարող է արտահայտել նպատակի պարագայի երկրորդական նախադասությամբ: Օրինակ՝ *Գնումներ եմ կատարում, որպեսզի վաղը մեկնենք լեռներ՝ ճամբարելու*: Հայ լեզվակիրն անգլերեն սովորելիս և խոսելիս հակված է օգտագործելու

երկրորդական նախադասություն՝ հայերենի հետ զուգորդային կապի պատճառով, և երկար ժամանակ է պահանջվում անգլերենին բնորոշ դերբայական կառույցները յուրացնելու և պատշաճ օգտագործելու համար, ինչպես հետևյալ նախադասության մեջ՝ *I am doing shopping to go camping in the mountains tomorrow.*

Նույն պատկերն է անգլերենի բարդ խնդրի (complex object) յուրացման դեպքում, քանի որ հայերենում չկա բարդ խնդիր: Հայ լեզվակիրն անգլերեն լեզվով թարգմանելիս կամ ուղղակի խոսելիս զուգորդման սկզբունքով հենվում է իր մայրենի լեզվի քերականական գիտելիքների վրա և բարդ խնդրի փոխարեն օգտագործում երկրորդական նախադասություն, որն անգլերենին բնորոշ չէ: Օրինակ՝ *Ուզում եմ, որ ինձ օգնես: I want you to help me.*: Հայ լեզվակիրը, որն անգլերեն է սովորում, որպես կանոն, երկար ժամանակ հայերենի հետ զուգորդման արդյունքում ասում է *I want that you help me.*

